ห้องสมุดกรมวิทยาศาสตร์บริการ

ՊԵՏՀՐԱՏ ԵՎԱՆԱԳԻՆ ԳՐԱԳԱՐԱՆ

№ 135—137 Շեքսպիր № 135—137

82
6-53

ջնջված է 1967 թ.

ՀԱՄԼԵՏ

Իշխանի դանեմարքացի

ՎՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆ ՀԻՆԳ ԱՐԱՐՎԱԾՈՎ

Թարգմանեց

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՍԵՀՅԱՆ

Ա 3181

7049

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1936

Տեխ. խմբ. Տ. Թաշչաճեան
Սրբագրիչներ Հ. Գալուստեանց յեվ Հ. Մաճուկեան

Պատվեր 552,
Գրավիւի լիազոր Կ.267.
Հրատ. 3466
Տիրաժ 7000

Պետհրատի տպարան, Երեվան, II Գումբի № 4.

ՍԻՄ ՀԱԿՈԲՅԱՆ

ՇԵՔՍՊԻՐԸ ՅԵՎ ՆՐԱ «ՀԱՄԼԵՏԸ»

I

Վիլիամ Շեքսպիրն ապրում և ստեղծագործում էր Անգլիայում 16-րդ դարի վերջում և 17-րդ դարի սկզբում: Անգլիայի համար այդ ժամանակաշրջանը պատմական մեծ եպոխա էր: Գիտության զարգացման և արհեստների ծաղկման շրջանն էր այդ: Բուրժուազիան զարգանում էր մեծ թափով: Ծովային առևտուրը, նավատնտեսությունը, Ամերիկայի գյուտը անգլիական բուրժուազիային մեծամեծ ոգուտներ տվին, վորով նա դարձավ կարևոր հասարակական ուժ ոչ միայն Անգլիայում, այլ և մեջտեղային կյանքում:

Անգլիական բուրժուազիայի զարգացման հետ միասին ուժեղացավ Անգլիայի և Սպանիայի քաղաքական և տնտեսական հակամարտությունը: Սպանիան այդ եպոխայում նույնպես ծովային խոշոր պետություն էր, վոր իր տիրակալության և գերիշխանության տակ ուներ ուրիշ հեռավոր ու մոտիկ երկիրներ: Անգլիան իր ուժերը չափեց նրա հետ, ջախջախեց նրա ծովային խոշոր ուժը— «Անհաղթելի Armada»— և ինքը դարձավ առևտրական, արդյունաբերական մեծ պետություն, վորի գերիշխանությունը ծովերի վրա այլևս դառնում էր հաստատուն և անվիճելի:

Այսպիսի մեծ հաղթանակ և ազգային մեծության այսպիսի ուժեղ շրջան հնարավոր դարձավ չնորհիվ բուրժուազիայի զարգացման: Միապետությունը, վոր սկզբում աղնվականական էր, հարկադրված յեղավ ուշադրություն առնել բուրժուազիայի ունակ, պատմական ուժը և նրան զիջումներ անել: Ժամանակի միապետ Ելիզաբեթ Թյուդորին (1558—1603) հետևեց այդպիսի քաղաքականության, վորով իր դեմ լարեց աղնվականության վորոշ մասը,

վորը կազմակերպվեց ընդդիմադիր կուսակցության մեջ ազնվական Եսսեկսի դվխավորությամբ և պայքար մղեց Ջեվիզաբեթի դեմ, մխալետության բուրժուական տենդենցների դեմ։ Այս պայքարը արյունահեղ բնույթ ստացավ։ Ընդդիմադիր ազնվականությունը ապստամբություն կազմակերպեց, վորի հետևանքով ազնվականներից չատերը ձերբակալվեցին և ինքը Եսսեկսը մահվան պատժի ենթարկվեց (1601 թվին)։

Անգլիական պատմության այս կարևոր անցուդարձերը, քաղաքական-հասարակական այս մեծ բաղխումները, ինչպես և նրա խայի սոցիալական հարաբերությունները, արձագանք են գտել Շեքսպիրի դրամաների մեջ և դարձել են հիմք նրա մեծադույն, ցնցող տրագեդիաների։

***

Պատմական, հասարակական այս մեծ հակամարտության հանդեպ Շեքսպիրը հիմնականում կանդնել է ազնվականության դիրքերում, կյանքի և մարդկանց վրա նայել է նրա հասարակական կարգադրի տեսանկյունից, արդարացնելով այդ դասակարգի դժվարին և տրագիկ պայքարը և վողբալով նրա որոշ հասական քայքայումն ու անկումը։ Բայց Շեքսպիրը միաժամանակ գտնվել է բուրժուական ուժեղ ազդեցության տակ, նրա վերածնության իմաստությամբ ներշնչված և նրա հումանիզմով տոգորված քննադատել է իր հարազատ դասակարգի բազմազան թերությունները, վորով նա յերևան է յեկել վորպես բուրժուական աշնվականության դրամատուրգ։

Շեքսպիրի նշանավոր գլուխ-գործոցները— «Համլետը», «Ոթելլոն», «Վենետիկի վաճառականը», «Հուլիոս Կեսարը» և այլն այս հիմնական կոնցեպցիայի մեջ են իմաստավորվում, նրա հակասությունները ևլ այս կերպ են միասնություն ստանում։ Այդ նշանավոր ստեղծագործությունների հերոսները՝ Համլետը, Ոթելլոն, Անտոնիոն ու Պորցիան, Ինչպես և Բրուտոսն ու Կասիոսը չեն ձգտում բուրժուական կարգեր հաստատել աշնվակա-

նական կարդերի փոխարեն, այլ ձգտում են ուղղել «իր ճանապարհից դուրս յեկած ժամանակը», ինչպես ասում է Համլետը ապատկերալից և պարզ արտահայտությամբ, կամենալով ձեվակերպել իր վրա դրված հասարակական–քաղաքական առաքելությունը:

Շեքսպիրը, իբրև ռեալիստ, դիտե և հասկանում է, որ իր դասակարգը ունի խոշոր թերություններ, բայց նա այդ թերությունների պատճառով չի ուզում նրա վոչնչացումը և մտածում է վոր պատմական բեմ բարձրացող նոր դասակարգը, բուրժուազիան, անհամեմատ ավելի արատավոր է, կողոպտիչ է, ատելություն, գռեհիկ ու ստոր, կուլտուրայով, կենցաղով, ղեկավարներով ու բարոյականությամբ անկատար ու կասկածելի: Այսպես մտածելով՝ նա սոնկում է ղղում այն մտքի հանդեպ, թե իր պատմական հայրենիքը կարող է հանձնվել այն բիրտ, տգետ և վոճրագործ մարդկանց իշխանությանն ու տնօրինությանը, վորոնց նման են կլավդիոսը, Պոլոնիուսը, Յագոն, Շայլոկը, Հուլիոս Կեսարը (Շեքսպիրի պատկերացմամբ), Մակբեթը և այլն, և վորոնց զգեստի տակ Շեքսպիրը ներկայացրել և ժամանակակից իր հակառակորդ դործիչներին, և նրանց առաջին չարքում Անգլիայի Ցեսիլ–բեթ Բաղուհուն:

Շեքսպիրի նորագույն հետազոտողներից մեկը, Լենինգրադի Գեղարվեստագիտական Գետական Ակադեմիայի դասախոս ընկ. Ա. Սմիրնովը, 1934 թվին հրատարակված «Շեքսպիրի Ստեղծագործությունը»[1]) վերնագրով իր ուսումնասիրության մեջ աշխատում է ապացուցել, թե Շեքսպիրը բուրժուական դասակարգի գաղափարախոսն է: Այդ աշխատության առաջաբանում հիշյալ Ակադեմիայի կոդմից ի միջի այլոց ասված է.— «Հնդինակի կողմից առաջադրված Շեքսպիրի կոնցեպցիան իրը բուրժուական հումանիստի՝ լուսավորում է նրա ստեղծագործության չատ կողմերը: Բայց այդ լուծումը չի ներկայանում միակ հնարավորը և չի ազատում տվյալ մարքսիստական ընդդրկման խնդիրների ամբողջ բարդությունը»:

Ակադեմիայի այս գնահատականը պետք է համարել հիմնա-

1). А. А. Смирнов: "Творчество Шекспира», Ленинград, 1934

կանում ճիշտ: Ընկ. Սմիրնովի տեսությունը չի կարողանում ընդգրկել Շեքսպիրյան ստեղծագործությունների կոնկրետ բարդ մասնիկները և հաճախ այս կամ այն նշանակալոր դերակատարությունը տալիս և վոչ-ճիշտ մեկնաբանություն: Մեր կարծիքով մասնավորապես սխալ են մեկնաբանված «Համլետը», «Ոթելլոն», «Վենետիկի Վաճառականը», «Հուլիոս Կեսարը» և այլն: «Ոթելլոն— ասում է ընկ. Սմիրնովը— մինչև վոսկրների ուղն ու ծուծը նոր մարդ է, և իր աշխարհայացքով և մինչև իսկ իր կենսագրությամբ»: Հետո՝ «Ոթելլոն նոր մարդ է, հումանիստ է նաև իր սիրո մեջ», գրում է նա: Բայց ի՞նչպես է պատահում, վոր «բուրժուական հումանիստ» Շեքսպիրի ստեղծագործության մեջ, «հումանիստ» Ոթելլոն կատարում է այնքան սարսափելի ոճրագործություն, ի՞նչպես է պատահում, վոր «մինչև վոսկրների ուղն ու ծուծը նոր» և կամ «աշխարհահայեցողությամբ ու կենսագրությամբ» այդ մխանդամային նոր մարդը չկարողացավ տեսնել իր շուրջը, չկարողացավ հասկանալ իր շրջապատող անհատներին, չկարողացավ դրա, հասկանալ, վոր իր կինը՝ Դեզդեմոնան մի հրաշալիքա ստեղծագործություն է և վոր նա մխանդամային անմեղ է, վոր նա իրավունք ունի ապրելու և վոր ինքը, այդ «նոր մարդը» այդ «հումանիստը» իրավունք չունի հանդցնելու Դեզդեմոնայի կյանքի լույսը... Բոլոր այս ծանր խնդիրները անհասկանալի են մնում ընկ. Սմիրնովի տեսության մեջ և հասկանալի են դառնում այն ժամանակ, յերբ ընդունենք, վոր Շեքսպիրը այդ քաջ ու բարձրահասակ ասպետի և այդ ազնվական դերասանի մեջ քննադատել և նրա մարքի կարճատեսությունը, նրա անընդունելի անհասկացողությունը շրջապատի յերևույթների հանդեպ և նրա «աշխարհայացքի» ճակատագրական սահմանափակությունը: Ահա, թե վորտեղ է Ոթելլոյի տրագեդիան և ահա թե ինչպես է պատահում Շեքսպիրի ռեալիզմը:

Ավելի ևս դժվար է հասկանալ Համլետի պատկերը ընկ. Սմիրնովի մեկնաբանությամբ: Ինքը հեղինակը նկատում է այս պարագան, յերբ գրում է հետևյալը.— «Չի կարելի համարել

այս տրագեդիան («Համլետ») Շեքսպիրի աշխարհայացքի պարզաբանման համար մի վորոշիչ տրագեդիա, առավել ևս չի կարելի Համլետի հետ նույնացնել իրեն Շեքսպիրին»։ Ա.յոլինսով, Շեքսպիրի ստեղծագործության դլուխդործոցներից մեկը, յեթե վոչ ամենացայտուն դլուխ-դործոցը չի ներկայանում վորպես Շեքսպիրի աշխարհայացքի արտահայտիչ մի ստեղծագործություն, վոր ի հարկե անընդունելի մի տեսակետ է։

Ինչ վերաբերում է «Հուլիոս Կեսարին» վորի մեջ Շեքսպիրի աշխարհայացքը շատ վորոշակի յե յերևան յեկել Հռոմի հին տոհմական ազնվական Բրուտոսի և Կասսիոսի պատկերի իդեալիզացիայի մեջ— այստեղ ևս ընկ. Սմիրնովի տեսությունը չի կարողանում լուծել խնդիրը։ Ընկ. Սմիրնովը դրում է այս մասին.— «Հուլիոս Կեսարը այնպիսի մի բարդ ստեղծագործություն է, վորի մանրամասն վերլուծումը մեզ շատ հեռու կտաներ»... Ճիվ այդ հեռուն չի կամենում կամ ավելի ճիշտ չի կարողանում դնալ հեղինակն իր տեսության միջոցով։ Ճեթե ընկ. Սմիրնովն այդ իրապես բարդ ստեղծագործության մեջ խորանար, նա անշուշտ կնկատեր, վոր Շեքսպիրի ազնվականական աշխարհայացքն իսկույն կարելի յեր հատկանալ, թե ինչո՞ւ յե «Հուլիոս Կեսարի դործի պրոգրեսիվ և դեմոկրատական բնույթը» ինչպես ընդունում է ընկ. Սմիրնովը— հարվածի յենթարկվում «արիստոկրատ և ռեակցիոներ Բրուտոսի» կողմից, ինչպես վորակում է ինքը Շեքսպիրի սիրած հերոս Բրուտոսին։

Ճիվ այսպես։ Ճեթե ընկ. Սմիրնովն իր հետազոտությամբ ուղում է ասել, թե Շեքսպիրի ստեղծագործությունները տոդորված են բուրժուական վերածնության գաղափարներով և հումանիզմի մեծ ընդով—նա ճիշտ և անկասկած։ Բայց յեթե նա ուղում է ասել, թե իր ստեղծագործությունների միջոցով Շեքսպիրը պայքար է մղում ազնվականական հասարակարգի դոյության դեմ և հանուն բուրժուական հասարակարգի հաստատման— ապա մեր կարծիքով պետք է ընդունել, վոր այդ կոնցեպցիան սխալ է և չի կարող ներկայացնել ու մեկնաբանել

Շեքսպիրի ստեղծագործությունների վոչ բովանդակությունը և վոչ արվեստը:

II

Համաշխարհային դրականության այս մեծ կլասիկի կենսագրությունը մինչև այժմ ցանկալի չափով լուսաբանված չեր: Նրանից ավելի առաջ ծնված հանճարավոր դրողների մասին մենք ունենք շատ ավելի հանդամանալից տեղեկություններ, քան Շեքսպիրի մասին, վոր ծնվել և ապրել և լուսավոր ժամանակաշրջանում և կուլտուրական միջավայրում: Ցնվ մասամբ այս պարագան և առիթ հանդիսացել, վոր շեքսպիրյան դրամաների հեղինակի նկատմամբ կասկածներ են առաջացել դրականության մեջ և հարցականի տակ ե դրվել Շեքսպիրի ինքնության խնդիրը:

Վիլիամ Շեքսպիրը, վորի անունով հայտնի յեն մեզ ծանոթ դրամատիկական ստեղծագործությունները— ծնվել ե Ավոնլիայի Ստրատֆորդ քաղաքում, 1564 թվին: Ստրատֆորդը դավառական փոքրիկ քաղաք եր, վոր ուներ հազիվ 1500 բնակիչ: Կենսագրական տվյալների համաձայն՝ նրա ծնողները բարեկեցիկ վիճակի տեր եյին, Ստրատֆորդում ունեյին հողամաս, վորից ստանում եյին յեկամուտ և վաճառում եյին միս, բուրդ և ուրիշ տեսակի ապրանքներ:

Շեքսպիրն իր կրթությունն ստացել ե Ստրատֆորդում: Հակառակ այն տեղեկության, թե Շեքսպիրը չի ստացել շատ թե քիչ բավարար կրթություն և չի յեղել ընդհանրապես կրթված մարդ— Գերմանացի հետազոտող Բուսսեն այն կարծիքն ե հայտնում, թե Շեքսպիրն ստացել ե բավարար կրթություն և ունեցել ե «բավարար պատմական և ընդհանուր ծանոթություններ»: Ծնողների նյութական պայմանները ժամանակի ընթացքում փոխվում են, նա թողնում ե դպրոցը և դառնում ե փաստաբանի մոտ դրագիր: Հետո ամուսնանում և Ստրատֆորդում յերիտասարդ հասակում:

Կենսագրական տվյալներն ասում են նաև, վոր Շեքսպիրը պապվում ե թատրոնական կյանքի հետ դեռ ևս Ստրատֆոր-

դում յեղած ժամանակ: Թատրոնական ներկայացումները նա տեսնում է Ստրատֆորդի հարևան կենտրոններում, ինչպես և Ստրատֆորդում, ուր հաճախում էին դերասանական խմբեր և հաճախակի ներկայացումներ էին կազմակերպում: Այսպիսի պայմաններում նրա մեջ առաջանում և դերասան դառնալու ձգտումը և թատրոնի համար պիեսներ գրելու պահանջ:

Այս ձգտումն ու պահանջը ավելի յեն ամրանում նրա մեջ, յերբ նա Ստրատֆորդից անցնում է Լոնդոն:

Լոնդոնը այն ժամանակ բավական խոշոր մտավոր, քաղաքական և տնտեսական կենտրոն եր: Քաղաքն ուներ մոտ քառորդ միլիոն աղգաբնակություն, վոր այդ ժամանակի համար մեծ թիվ եր, ուներ մի քանի թատրոն, ուներ վեց դերասանական խումբ, վոր Լոնդոնի զանազան քաղաքամասերում հաճախակի ներկայացումներ էին կազմակերպում: Քաղաքում տիրում եր շարժում, աշխուժություն, հասարակական և գրական պայքար: Ծնվ ինչպես ամբողջ յերկրում, նույնպես և նրա մայրաքաղաքում, ծավալված եր դասակարգային պայքար բուրժուազիայի և աղնվականության միջև, մի պայքար, վոր կյանքի հիմքն եր կազմում և վոր ցոլանում է Շեքսպիրի ամբողջ ստեղծագործության մեջ:

Լոնդոնում Շեքսպիրը կապվում է թատրոնի հետ, մտնում է դերասանական խմբի մեջ, կազմակերպում և ներկայացումներ, դառնում է թատրոնի դիրեկտոր և ռեժիսյոր, գրում է գրամաններ և առհասարակ կարճ ժամանակի ընթացքում ահագին գործունեություն և հրապարակ բերում: Թատրոնական աստիճանը նրա համար դառնում է նաև չահավետ ասպարեզ: Իրրև գործունյա և ձեռնարկող մարդ, Շեքսպիրը մտնում է զանազան տնտեսական ձեռնարկությունների մեջ թե մայրաքաղաքում և թե իր ծննդավայր Ստրատֆորդում, այդ ասպարիզում ևս ջանք և ճարպիկություն և ցուցաբերում և վերջը գառնում է հարստության տեր: 1590-ական թվականին նրա ընտանիքը ստանում է մինչև իսկ զինանշան և վորոշ տվյալների համաձայն

ընդունելում և սորբին աղնվականության չարքերը: 1600 թվականներից հետո նրա մեջ վորոշ փոփոխություն և տեղի ունենում, նա հետզհետե քաշվում և գործունեության ասպարեզից առանձնանում և իր հայրենի Սորաուիորդում և այնտեղ էլ մեռնում և 1616 թվականին:

Շեքսպիրի մահից հետո, յերկու հարյուր քառասուն յերկար տարիների ընթացքում, կենսագրական այս հիմքերը վորևե մեկի կողմից կասկածանքի չենին յենթարկվում: 19-րդ դարի 50-ական թվականներին առաջին անգամ քննադատական գրականությունը կասկածանքի տակ դրեց Շեքսպիրի անձնավորության խնդիրը, հայտարարելով, թե՝ նրա կյանքը չե հարմարվում նրա ստեղծած գրամանների, թե դերասան Շեքսպիրը սահմանափակ կրթության տեր մի անձ և, մինչդեռ գրամատուրգ Շեքսպիրը խոշոր կրթության տեր մի հեղինակ և, թե կոտակի մեջ դերասանը վոչ մի խոսք չի ասում իր յերկերի մասին, թե կոտակի տակ իր ազգանունը սխալ և ստորագրված և այլն: Յեվ Շեքսպիրի անունով յեղած գրամատիքական ստեղծագործությունները վերագրվեցին Բեկոնին, վոր այն ժամանակվա Անգլիայի փայլուն գարգացման տեր և մեծ կրթություն ստացած գիտնականներից եր: Կես դարից ավելի բուրժուական քննադատությունը տարբեր յերկրներում հարեց այդ թեորիային, չնկատելով վոր Բեկոնի հայտնի աշխատությունները և Շեքսպիրյան ստեղծագործությունները տարբեր և հակամարտ աշխարհայացքի վրա յեն հիմնված:

Բեկոնյան թեորիայից հետո բուրժուական քննադատությունը Գերմանիայում Բլայբտրոյի միջոցով, հետո Հոլլանդիայում այն տեսակետը հայտնեց, թե Շեքսպիրյան դրամանները պատկանում են հայտնի ազնվական Բյուտլանդին, վոր կրթված անձնավորություն և յեղել և վոր պատկանել և Ելսեկի կուսակցության: Յորհրդային Միության մեջ այս տեսակետը մանրամասնորեն պաշտպանել և ընկ. Լունաչարսկին հետևյալ պատճառաբանությամբ:— Առաջին՝ ազնվական Բյուտլանդը համալսարանում

ուսանող յեղած ժամանակ ունեցել և «Շեքսպիր ծածկանունը, յերկրորդ՝ Բյուրլանդը ապրել և այն վայրերում, վոր նկարագրված են Շեքսպիրի դրամաների մեջ, յերրորդ՝ Շեքսպիրի ստեղծագործությունների շատ թեմաները դուզադիպում են Բյուրլանդների ընտանիքի դեպքերին, մասնավորապես «Համլետ»-ն այն դեպքերի նկարագրությունն է, վոր տեղի յեն ունեցել Բյուրլանդների ընտանիքում, չորրորդ՝ Բյուրլանդի կյանքը մեծ ճշտությամբ զուգադիպում է դրամաներ գրող Շեքսպիրի կյանքին, և վերջապես հինգերորդ՝ դերասան Շեքսպիրի բուրժուական-վաշխառուական հայացքները չեն համապատասխանում դրամատուրգի հայացքներին:

Բայց վերջում ինքը ընկ. Լունաչարսկին ևս ավելացնում է, վոր այս տեսակետը ոտ այժմ առաջ է քաշվում վորպես «հիպոթեզ», ճիշտ է, շատ հետաքրքրական, սակայն և այնպես, վորպես յենթադրություն: Մանավանդ վոր, վոչ մի կերպ չի կարելի պնդել, թե դերասան Շեքսպիրի հայացքները «վաշխառուական» են, քանի վոր մեզ հայտնի չեն դերասանի հայացքները Շեքսպիրյան ստեղծագործությունից դուրս: Իսկ այն ազնվականական աշխարհայացքը վոր յերեվան և դալիս Շեքսպիրի յերկերում նույնպիսի հեշտությամբ կարող և պատկանել մի դերասանի, վորքան և մի ազնվականի:

III

«Համլետ»-ը գեղարվեստական և հասարակական ահագին նյութ և պարունակում: Նա պատմական մի մեծ եպոխայի արտահայտություն է, վորի մեջ հանճարեղ դրամատուրգը դրել է իր ժամանակի և հասարակական հարաբերությունների ուժեղ պատկերը:

«Համլետ»-ը փիլիսոփայական խորը բովանդակություն ունի, միաժամանակ դրական-դրամատիկական հարուստ մատերիալ, վոր ծավալվում է ամբողջ հինգ դործողության մեջ և բաց և անում ընթերցողի ու դիտողի առաջ մի ամբողջ դարաշրջան:

Շեքսպիրի ստեղծած տիպերն ու խարակտերներն այդ հուշակալոր տրագեդիայի մեջ վոչ միայն անհատական հոգեբանության վսեմյուն որինակներ են, այլ և սոցիալական հոգեբանության որինակելի նմուշներ են: Այդ դեմքերի միջոցով մեծ դրամատուրգը կարողացել է պատմական իրականությունը դրամատիզացիայի յենթարկել:

Ս.յսպիսով, «Համլետ»-ի մեջ Շեքսպիրը դրել է իր արվեստի և փիլիսոփայության հիմնական դիծը, իր աշխարհայեցողության ու հոգեբանության եյական մասը: Սրա համար էլ չի կարելի համաձայնվել ընկ. Սմիրնովի այն մտքի հետ, թե իրը «Համլետ»-ը Շեքսպիրի վերաբերմունքը մեկնաբանելու համար վորոշիչ ստեղծագործություն չե և կամ թե Համլետը նույն ինքն Շեքսպիրը չե: Իհարկե Համլետը նույն ինքն Շեքսպիրը չե բոլոր նեղ իմաստով: Շեքսպիրը հաճախ քննադատում է Համլետին, նշում է նրա պակասությունները, ցույց է տալիս նրա բնավորության ճեղքվածը— բայց սա չի նշանակում, թե Համլետի մեջ չենք կարող վորոնել կամ չպետք է վորոնենք Շեքսպիրի դեմքը:

Համլետն արտահայտում է Շեքսպիրի աշխարհայեցողությունը, թե այն մասերում, յերբ նրա հետ համաձայն է հեղինակը և թե այն մասերում, յերբ Շեքսպիրը նրան քննադատում է: Վորովհետև վոչ մի կասկած չկա, վոր Շեքսպիրը Համլետին քննադատում է նրա դիրքերից, ցույց տալով Համլետին և նրա դասակարգի մարդկանց, թե ինչ ուղի պետք է ընտրել ժամանակի այդ «քաոսի» մեջ:

Համլետը վոչ միայն անհատական պայքար է մղում կլավդիոսի դեմ, այլ և հասարակական պայքար է մղում այն միտպետի դեմ, վոր նրա տեսակետից, ստորագույն մի անձնավորություն է,— անազնիվ, խորամանկ, Պոլոնիուսի պես դծուծ և խարդախ մարդկանց առաջ քաշող և նրանց միջոցով իր դահը պահող:

նա կարողանում է անձնավորությունները ներկայացնել միջավայրի մեջ, ցույց տալ այն կապը, որ հարատև գոյություն ունի մարդկանց և նրանց շրջապատող կարգերի միջև, ներկայացնել մարդը իր զարգացման մեջ: Համլետը Շեքսպիրի առեղծած ահա այդ տեսակ մարդկանցից է, մի մարդ, որը ընկել է պատմության մեծ ջրաղացքի մեջ և շարժվում է համաձայն նրա որոնքների: Նա հիմնապես տարբերվում է ականդինավյան գրույցի Ամլեթուսից, որը ապրում էր ուրիշ ժամանակ և ուրիշ պղեցություններով ներքո:

Համլետն արդեն վերածնության շրջանի մարդ է, ապրում է բուրժուական հումանիզմի դարում, սովորել է Վիտտեմբերգի համալսարանում, լսել է Թերևս այնպիսի նշանավոր հումանիստների, ինչպիսին էր Ջորդանո Բրունոն և այլն:

Այո մեկ կողմից: Մյուս կողմից Համլետը թագաժառանգ է, ունեցել է և ունի աղնվական դաստիարակություն, մեծացել է ազնվական որոնքներով, պատանի հասակից ապրել է ռազմական, պինվորական կյանքով: Այսպիսով՝ Համլետը թագաժառանգ, արիստոկրատ, ասպետ, պինվորական, բայց միաժամանակ մտավորական, գրական փորձեր կատարող, փիլիսոփայող և հումանիստ:

Ահա ինչպիսի բարդ տիպ է ստեղծել Շեքսպիրը և ինչպես է նրան դրել ժամանակի, միջավայրի, հասարակական հարաբերությունների խճճված ցանցի մեջ: Այստեղից են առաջանում Համլետի հիմնական հակասությունները, նրա վտանգները, նրա տատանումները, նրա տարբեր հակումները, նրան մաշող հարցերը և վերջապես այն, ինչ որ Շեքսպիրն արտահայտել է «Լինել թե չլինել» հռչակավոր մենախոսության մեջ:

Համլետը քննադատում է իր ժամանակի բարքերը, հասարակական անարդարությունը, հարստահարիչների անիրավությունը որոնք բոլոր ձգձգումները:—

«... Թե վոչ, ո՞վ արդյոք կուզեր հանդուրժել

«Աչխարհի այնքան նախատիքներին և մտրակներին,
«Հարստահարչի անիրավության...
«Որբևնչի բոլոր ճղճղումներին,
«Պաշտոնյաների անլուրության...» և այլն, և այլն:

Նա դուրս է գալիս պատերազմի դեմ և խաղաղասիրական մտքեր է հայտնում, մերկացնում է պետականների այս կամ այն նախապաշարումները, ըմբոստանում է իր միջավայրի շատ կեղծիքի դեմ, արամտությամբ, հեղնությամբ և դառնությամբ լիքը խոսքեր է ուղղում պալատականին, կալվածատերերի հասցեին: Մյուս կողմից, Համլետը նոր հումանիստական վերաբերմունք է ցուցադրում, պարզ և «բնական» արվեստի կողմնակից է հանդիսանում, ամբողջապես չի հավատում ուրվականին, թեկուզ նա յերևան է գալիս իր սիրեցյալ հոր գիհատով և ցանկանում է նրա ասածները փորձով ստուգել: կարող է պատահել, որ ուրվականը կամենում է ոդուտ քաղել իր՝ Համլետի՝ «մելամաղձիկ բնավորությունից», ինչպես ասում է ինքն իր մասին, կարող է պատահել, որ նա մի չար վոգի լինի, որ ուզում է վորձանքի մատնել հոր անաչինակ և կատկածավոր սպանությամբ տառապող յերիտասարդին: Ուրեմն՝

«Ներկայացումն է այն վորոգայթը,
«Վորով կբռնեմ արքայի խիղճը»:

Բոլոր այս դեպքերում յերևան է գալիս Համլետի հումանիստական դեմքը, այն դատելարակությունը, վոր նա առաջ է բերժուական վերածնության պղեցության տակ՝ հանդուրժում կամ կյանքի տարբեր պայմաններում:

Բայց այս բոլորը նրա դեմքի միայն մի կողմն է:

Համլետի բնավորության խորքը, ինչպես և նրա աչխարհայեցողության հիմքը մնում է նրա պետականական, արիստոկրատական կողմը, պետականություն, վոր յենթարկվում է բուր-

ժուռլիայի ազդեցության թե տնտեսական, թե սոցիալական և թե մտավոր-բարոյական բնագավառներում:

Այս կողմը յերևան է գալիս Շեքսպիրի տրագեդիայի մնջ բազմատեսակ արտահայտություններով: Համլետը ազնվականի տիպական վերաբերմունքն ունի դեպի ժողովուրդը, վորին ազնվականը համարում էր «ամբոխ», դեպի «պետնահարկի հաստատությունը, վորի մեծ մասը ընդունակ չի ուրիշ բան ըմբռնելու, բայց միայն անբացատրելի մնջկատակներ և աղմուկ», ինչպես ասում է Համլետը դերասանների հետ ունեցած զրույցի ժամանակ:

Խոսելով իր եպոխայի «աննորմալ» յերևույթների մասին՝ Համլետն առանձին դառնությամբ նշում է այն ծանր վիճակը, վորին յենթարկվում է ազնվականը Ցնվիզաբեթ թագուհու իշխանության որով,— «զյուղացու վոտնամանը դիպչում է պալատականի կրունկին և նրան ցավեցնում է»: Իհարկե, այս ստորացուցիչ կացության համար մեղավոր և նաև ինքը ազնվականը, վոր չի կարողանում իր համար, իր ծագման և վիճակության արժանի, տեղ գրավել աբևի տակ, գուցե նաև այն, վոր չի կարողանում վերացնել Եսեկսի կոնսպիրացիայի նենդավոր հակառակորդ Ցնվիզաբեթին:

Սակայն այս պարագան ավելի յե շեշտում Համլետի աչխարհայացքի այդ հիմնական կողմը և, իհարկե, բնավ չի դարձնում նրան կողմնակից զյուղացու և ազնվականի այն հարաբերություններին, վորոնց նկատմամբ խոսում և նա իր վերոհիշյալ պատկերավոր նախադասության մեջ: Նա խորապես ցավում է և դառնանում է, վոր այդպիսի «քաոսական» կացություն է սաեղծվել և իր վրա պարտականություն է զգում՝ պայքարելու այդ հարաբերությունների դեմ:

Համլետի արիստոկրատիական էյությունը յերևան է գալիս մեջբերած այլոց Լայերտի այն խոսքերի մեջ, վոր նա ուղղում է իր քույր Ոֆելիային՝ այս վերջինիս և Համլետի սիրային կապի և ամուսնության վերաբերյալ.

«Պետք է վախենաս, վոր նա ինքն էլ չի իր կամքի տերը,
«Այլ հպատակ է ինքն իր ծնունդին...»

Ապա՝

«Ցնել անկարող է ամեն աննշան անհատի նման իր համար ձևել»...

Այսպիսով, Համլետը հուսահատ է, Համլետը Վիտեմբերգի ուսանող է, նոր մտայնության է, բուրժուական վերածննդության նշանավոր դեմքերի ուժեղ ազդեցության տակ է: Բայց այնուամենայնիվ Համլետն իր էությամբ «հպատակ է իր ծնունդին» և անկարող է յերբորդ դասին պատկանող «ամեն աննշան անհատի նման իր համար ձևել»:

Ահա այն խորունկ հակասությունը, վորի մեջ տատապում է Շեքսպիրի հռչակավոր հերոսը: Նա ինքը դիտակցում է այդ կացությունը և իրեն համարում է շվի՝ բախտի մատներին, վորոնք ինչպես ուզում են՝ նվագում են նրա վրա:

Ոչհնչյալ են նրանք, վորոնց մեջ արյունն ու դատողությունը
«Այնպես համաչափ զուգախառնված են,
«Վոր լոկ չվի չեն բախտի մատներին,
«Վոր ինչպես ուզեն՝ վրան նվագեն»:

Ցնել յերեք այս պայմաններում հարց տրվի, թե վո՞րն է Համլետի բնավորության հիմնական գիծը, վճռակա՞նն է արդյոք, կամքով ուժե՞ղ է, կարողանո՞ւմ է իր վրա դրված անձնական և հասարակական պարտականությունը կատարել, Պոլոնիուսի սպանությունը կամ հորեղբոր սպանությունը պե՞տք է դիտել արդյոք վորպես Համլետի նպատակին շատ թե քիչ պլանաչափ քայլափոխում— այս հարցերին պետք պատասխանել հիմնականում բացասական կերպով: Մյուս կողմից՝ ինչպես է նայում Համլետը աչքաթող չի անում, կենսուրա՞խ է, թե՞ տխուր, կարողանո՞ւմ է արդյոք ծիծաղել, սիրով սպրել, ինչպես է նայում կնոջ վրա, հարգո՞ւմ է

կնոջը, լինչպես և հասկանում նրա դերը, լինչպես և նայում ամուսնության վրա և այլն և այլն: Բոլոր այս հիմնական խնդիրներում նրա մեջ խոսում և արիստոկրատի, աղնվականի վոգին, վերածնության շրջանի այն աղնվականի, վոր սկսել էր ընդել հումանիզմի գաղափարներով, բայց վոր վերջին հաշվով չեր կառուցվել վորպես նոր ժամանակի մարդ:

Այսպիսով, դժվար և համաձայնվել ընկ. Ա. Սմիրնովի հետ, վոր գրում է. «Համլետը տատասկաններով ազատվում և հին, ֆեոդալական աշխարհայեցողությունից՝ դառնալով նոր մարդ, հումանիստ...

Այդ ճանապարհի վրա նա դառնում է մեծ հումանիստ-մտածող»[1]*...*

Ավելի ճիշտ և արտահայտում իրականությունը և ավելի ճիշտ է գծում Համլետի պատկերն ընկ. Ս. Դինամովը, յերբ գրում է հետևյալը.— «Մեծամեծ կոնֆլիկտներ և սուր հակասություններ կարծես թափանցված են Համլետի արյան մեջ... Նա արդեն չնչել է Գերմանիայում ռեֆորմացիայի թարմ ողը, նա սկսել է կազմակերպվել, վորպես նոր եպոխայի մարդ: Սկսել է, բայց չի կազմակերպվել»[2]*:*

Համլետյան այս կոնցեպցիան համապատասխանում է Շեքսպիրի դասակարդային դեմքին, վոր ընկ. Ս. Դինամովն այսպես է ձևակերպում.— «Նա (Շեքսպիրը, Ս. Հ.) լավագույն գինվորն էր իր դասակարդի, կապիտալիստականացող աղնվականության և չեր լքել իր տեղը նրա առաջին շարքերում»:

Իր նշանավոր տրագեդիաների մեջ՝ Շեքսպիրը ներկայացնելով յերկու դասակարդերի պատմական մեծ ընդհարումը, իրոք վոր, լավագույն գինվորի նման կանդնած է իր դասակարդի մարտական դիրքերում:

«Համլետ»-ի մեջ ևս Շեքսպիրը նույնն է և այսպես: Դժվար է ճանապարհը: Դասակարդն ապրում է իր բեկման տագնապալից

---

1) А. А .Смирнов :"Творчество Шекспира„

2) С. Динамов: "Шекспир и (современность) "Правда„, 1934 г.

ժամենամբ: Բայց Շեքսպիրը չե լքում պայքարը, և հույս ունի, թե իր դասակարդի լավագույն մարդիկ, նորանալով և թոթափելով իրենց վրայից միջնադարյան ժառանգությունը, կարող են այնուամենայնիվ ուղղել «ճանապարհից դուրս սայթաքած ժամանակը»:

Բայց յերբե Վիլիամ Շեքսպիրը ռեալիստական մեծ հանճարով կարողանում և իրականությունը պատկերացնել, քննադատորեն մոտենալ իր դասակարդի գործերին, վերլուծել պատմական մի մեծ դարաշրջանի հասարակական հարաբերությունները և նրանց մեջ գործող մարդու հոգեբանությունը անօրինակ խորությամբ— ասյա չի կարելի նույնն ասել նրա տված իդեալների մասին:

Շեքսպիրը սարսափով և նախատինքով դրամի մարդկանց և դրամի դասակարդի տիրապետության ամբողջ զազրությունը:

Բայց նա չի դիտակցել, վոր անկարելի յե պատմության անիվը շրջել, և նորացնել կամ ժամանակակից դարձնել մի դասակարդ, վոր պատմության դատավճռի համաձայն պիտի վաղեր իր գոյության շրջանը:

Սերվանտեսը թաղում և ազնվականությունը և ստեղծում և սատիրա: Նա անխնա ծիծաղում և Դոն-Քիշոտի վրա:

Շեքսպիրը, սակայն, հերոսական ու դժվարին պայքարի մեջ և դնում Համլետին, Բրուտոսին, և իր գյուտ մեծ դեմքերին: Այս պայքարի հողի վրա նա ստեղծում և մեծագույն տրագեդիա, վոր գինչև այսօր էլ ցնցում և մեզ:

Ճշմարիտ է, ասվա, այդ մեծագույն տրագեդիաներից և, Շեքսպիրի ամենացայտուն գլուխ-գործոցը, վորի մեջ նա անմահացրել և վերնել մի հրաշակերտ ստեղծագործության մեջ այդ պատմական, իրական պայքարը և նրա հետ կապված դասակարդն ու մարդը:

ԱՐԱՐՎԱԾ ԱՌԱՋԻՆ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Ելևէնոր. մի հարթավայր դղյակի առաջ.

Ֆրանցիսկոն պահակ և կառնգնած. դալիս և Բեռնարդոն։

ԲԵՌՆ.—Ո՞վ եւ։

ՖՐԱՆ.—Վոչ, դո՛ւ ինձ ասա. կաց հայտնիր ով եա։

ԲԵՌՆ.—Շատ ապրի արքան։

ՖՐԱՆ.—Բեռնարդո՞։

ԲԵՌՆ.—Ինքը։

ՖՐԱՆ.—Ճշտապահութեամբ ձեր ժամին յեկաք։

ԲԵՌՆ.—Տասներկուն զարկեց. գնա անկողին, գնա, Ֆրանցիսկո։

ՖՐԱՆ.—Շնորհակալ եմ վոր արձակում եք.
Սոսկալի ցուրտ է, սիրտս էլ տխուր է։

ԲԵՈՒՆ.—Պահապանութիւնդ լավ հանդարտ անցավ։

ՖՐԱՆ.—Մուկ էլ չերևաց։

ԲԵՌՆ.—Լավ բարի գիշեր։
Ցնթե հանդիպիս Հորացիոյին կամ
Մարցելլոսին,
Իմ այս գիշերվա պահընկերներին, ասա թող
շուտ գան։

ՖՐԱՆ.—Նըրանք են կարծեմ։—Կաց, ե հե՛յ, ո՞վ ե։

Գալիս են Հորացիո և Մարցելլոս։

ՀՈՐ.—Հայրենակիցներ։
ՄԱՐՑ.—Յեվ հարկատուներ Դանիո արքայի։
ՖՐԱՆ.—Ձեզ բարի գիշեր։
ՄԱՐՑ.—Դեհ, ըընաս բարով, դու պարկեշտ պինվոր։
Բեղ ձվ արձակեց։
ՖՐԱՆ.—Բեռնարդոն ինքը անցավ իմ տեղըս. ձեզ
բարի գիշեր։
ՄԱՐՑ.—Բեռնարդո։
ԲԵՌՆ.—Աա, Հորացիոն և դա։
ՀՈՐ.—Ներա մի մասը։
ԲԵՌՆ.—Բարով ես յեկել, Հորացիո. բարով, սիրելի
Մարցելլոս։
ՄԱՐՑ.—Այն բանն այս գիշեր յերեվաց նորեն։
ԲԵՌՆ.—Վոչինչ չեմ տեսել։
ՄԱՐՑ.—Հորացիոն ասում և, թե դա մեր մտքի
պատրանքն և միայն։
Յեվ չե կամենում հավատ ընծայել մեր ասածներին
Այն զարհուրելի տեսիլքի մասին,
վոր յերկու անգամ մեր աչքով տեսանք.
Հենց այդ պատճառով խնդրեցի ներան, վոր
ինքն ել մեզ հետ
Հսկե այս գիշեր րոպե առ րոպե,
վոր յեթե նորին այն տեսիլքը գա,
Ինքն ել հաստատե մեր տեսածները, յեվ խոսե
հետը։
ՀՈՐ.—Բահ, յերբեք չի գա։
ԲԵՌՆ.—Թող մի քիչ նստենք,
Յեվ մեկ անգամ ել հարձակում գործենք
ականջներիդ վրա

Վորոնք այնպես խիստ ամրապնդված են մեր
պատմածի դեմ,
Վոր յերկու դիշեր ինքներըս տեսանք։
ՀՈՐ.—Լավ, յեկեք նստենք.
Յեվ Թող Բեռնարդոն խոսե այդ մասին։
ԲԵՌՆ.—Այս վերջին դիշեր,
Յերբ այն բեվեռից դեպի արեվմուտք գոնվող
աստղը
Իր շրջանն արել, և լույս եր տալիս այն
յերկնամասին,
Ուր վայրում և այժմ, Մարցելլոսն ու յես,
Ճիշտ, յերբ վոր զանգը զարկում եր մեկը...
Գալիս և ուրվականը
ՄԱՐՑ.—Սուս, լռիր, նայիր, գալիս և կրկին։
ԲԵՌՆ.—Նույն կերպարանքով ինչ մեռած արքան։
ՄԱՐՑ.—Դու գիտուն մարդ ես, խոսիր նրա հետ,
Հորացիո։
ԲԵՌՆ.—Չե՞ վոր նըման և նա թագավորին. նայիր,
Հորացիո։
ՀՈՐ.—Իսկ յեվ իսկ նման. ահ ու զարդանդով լցնում
և դա ինձ։
ԲԵՌՆ.—Կարծես ուզում և, վոր իր հետ խոսեն։
ՄԱՐՑ.—Հարց տուր, Հորացիո։
ՀՈՐ.—Ի՞նչ ես դու արդյոք, վոր հափշտակում ես
դիշերվա այս ժամը,
Յեվ այս զեղաշուք ռազմական ձեվը,
Վորով շրջում եր Դանեմարքայի հանգուցյալ
տերը։

Հանուն յերկինքի, պարտադրում եմ քեզ, խոսիր։

ՄԱՐՑ.—Վշտացալ։

ԲԵՌՆ.—Նայիր, ծանրաքայլ հեռանում է նա։

ՀՈՐ.—Կաց, խոսիր, խոսիր. պարտադրում եմ քեզ, կանգ առ և խոսիր։

Ուրվականը դուրս է գնում

ՄԱՐՑ.—Գընաց... չէ ուզում մեզ պատասխանել։

ԲԵՌՆ.—Տեսար, Հորացիո. գուշնըդ թռել է և

պողպտում եա.

Ջի վոր սա մեյնչ ձայնի պատրանք չեյ

Լավ, ինչ եա կարծում այս բանի մասին։

ՀՈՐ.—Ասելածըս վկա, յերբեք չես դըրան չեյի

հավատա

Առանց աչքերիս անխաբ, իրատես վկայութեյանը։

ՄԱՐՑ.—Ջի վոր նման է նա թագավորին։

ՀՈՐ.—Ինչպես ինքըդ քեզ,

Յեվ ճիշտ այսպես եր այն իսկ զըրահը, վոր նա

հագել եր,

Յերբ այն փառամոլ Նորվեգիացու դեմ կռվի

դուրս յեկա

Յեվ ճիշտ այս կերպով ունքը պռասեց, յերբ

Թուրդ վեճի մեջ

Այն սահնակ հեծած Լեհացիներին տապալեց գետին

Սառույցի վրա։ Զարմանալի յե։

ՄԱՐՑ.—Յերկու անգամ էլ սըրանից առաջ, այս

մեռյալ ժամին՝

Ռազմական քայլով յեկել անցել է պահակի

մոտից։

ՀՈՐ.—Ի՛նչ հատուկ մտքով գործելու համար, այլ
դեռ չգիտեմ.
Բայց իմ կարծիքի ընդհանուր հակումն ու
սըլացքն այն է,
Որ դա գուժում է մի մեծ սասանում մեր
պետութեյան մեջ։
ՄԱՐԳ.—Լավ, յեկեք նստենք, և թող ինձ պատմե ով
որ տեղյակ է,
Թե ինչ միտք ունի այս խիստ ուշադիր
հսկողութեյունը,
Որ ամեն գիշեր տանջում է յերկրի
հպատակներին.
Ինչու համար են ամեն որ այդքան ընդհանուր
ձուլում,
Եվ ռազմամթերք գընում տարբից.
Ինչու են այսպես բոնի բանեցնում
նավաստիներին,
Որոնց չարաչար աշխատութեյունը
կիրակին լի որից չի դանազանում.
Ի՞նչ է պատրաստվում, որ այս քրոնաթոր
ահապարանքը
Դարձնում է գիշերն որվա գուգակից
աշխատավորը.
Ո՞վ կարող է ինձ տեղեկութեյուն տալ։
ՀՈՐ.—Ա՛ւղ յես կարող եմ. գոնե այսպես մի
փոքրուք կա։
Մեր վերջին արքան, որի պատկերը այժմ
յերեվաց,
Ինչպես լավ գիտեք, նախկին Ծորտինբրաս
Նորվեգիացուց,

Վորն իր նախանձոտ զոհողությունից
խթահարված եր,
Ասպարեզ կանչվեց։ Այդ մենամարտում մեր աբի
Համլետն—
Ինչպես վոր նրան ծանոթ աշխարհն այս բոլոր
մասում
Ճանաչում եյին—հաղթեց ու ապանեց այն
Ֆորտինբրասին.
Յեվ նա զորությամբ կնքված դաշնագրի, վոր
թե որենքով
Թե ասպետական կարգ ու կանոնով
վավերացված եր,
Իր տիրած հողերն ու կյանքն էլ հեսը տուժեց
հաղթողին։
Մեր թագավորն էլ նույն չափով հողեր պըրալ
եր պըրել,
Վոր Ֆորտինբրասին պիտի հանձներ, յեթե նա
հաղթեր.
Ինչպես իր հողերն, նույն պայմանագրով,
վորոշ հոդվածով
Համլետին ընկան։ Յեվ այժըմ, պարոն, փոքր
Ֆորտինբրասը
Անփորձ յեռանդով վառված ու լցված՝
Նորվեգիայի սահմաններին վրա՝ այստեղ
այնտեղից
Մի խումբ քաջասիրտ բախտախնդիրներ իր
շուրջն ե խմբել,

Վորոնք փոխարեն հայց ու ապրուստի,
Պատրաստ են փորձել մի խիղախ ձեռնարկ,
վորից բան դուրս գա.
Եվ դա չե՞ այլ ինչ—վորպես հայտնի յե մեր
պետությանը—
Եթե վոչ, ղենքով և բռնի ուժով յետ խլել
մեզնից
Այն բոլոր հողերն, վոր հայրը տուժեց։
Այս և, կարծում եմ, մեր պատրաստության բուն
նպատակը,
Մեր հակողության դրդապատճառը,
Եվ յերկրի բոլոր այս հապշտապի և
էրարանցման
Բուն շարժառիթը։

ԲԵՌՆ.—Յես էլ կարծում եմ, վոր այդ և մեյն, և
վոչ ուրիշ բան.
Եվ հենց դրա հետ հարմար և գալիս,
Վոր չարագուշակ այս վոգին գինված ճեմում
անցնում և
Պահակի մոտից՝ ճիշտ հար և նրման այն
թագավորին,
Վոր այս կռիվների պատճառն եր և ես։

ՀՈՐ.—Մի հյուրե յե դա մեր մտքի աչքը
աղոտացնելու.
Այն որերի մեջ, յերբ Հռոմի հասել և փառքի
գագաթին,
Հզոր Հուլիոսի մահից քիչ առաջ՝
Շիրիմներն իրենց վարձակալներից
դատարկվում եյին,

Ցեվ մեռելները, պատանած, հուլմի
վողոցների մեջ
Թոթովում եյին և աղաղակում.
Աստղեր դուրս յեկան՝ հրեղեն գեսերով. արյան
ցող լջալ,
Ցեվ խանգարում կար արեգակի մեջ։ Այն
տամուկ աստղը,
Որ ներգործում է Նեպտունի անեղ պետության
վրա,
Այնպես հիվանդ եր իր խավարումից,
Որ կարծես մոտ եր աշխարհանցումը։
Այժմ էլ նուչնալնի արհավիրքների
Նախադուշակները,
Առաջընթացները, որ միշտ կանխում են
բախտ քուչրերին,
Ցեվ նախերգանք են գալիք աղետի,
Ցերկինքն ու յերկիրն արդեն ցույց տըվին մեր
յերկրամասին
Ցեվ ժողովրդին։ Բայց հոգ. մարիկ տուր.
գալիս է նորեն
Ոչխարանը գալիս և կրկին
Ճամբան կը կտրեմ՝ թևկուզ շանթե ինձ.
— կանգ առ, ով պատրանք, կենթե մի հնչյուն
կամ թե ձայն ունիս,
Ասիր ինձ.
Ցեթե անելու մի բարի բան կա;
Ավը կարդացա ամիսներ առաջ գրել, և ինձ թո-
ղություն,

Խոսիր ինձ.
Եթե գիտակ ես յերկրիդ նահին,
Վորից, թերևըս, կանխապիտուքյամբ կարենա
խույս տալ,
Ո՜հ, խոսիր։
Եթե կյանքիդ մեջ բռնուքյամբ կորցած
զանձեր ես խորել
Գետնի արգանդում, վորոնց պատճառով,
ինչպես ասում են,
Մեռնելուց հետո դուք վոգիներդդ յելնում
շրջում եք,
Ասա, կաց, խոսիր։ — Կտրիր առաջը, Մարցելոս։

Աքլորը կանչում է

ՄԱՐՑ.— Ջարկեմ գեղարդովս։
ՀՈՐ.— Եթե չը կանգնի, զարկիր։
ԲԵՌՆ.— Այստեղ է։
ՀՈՐ.— Այստեղ է։

Ուրվականը չքանում է

ՄԱՐՑ.— Գընաց.
Մենք վատ ենք վարվում՝ այսպես վեհափառ մի
եակի հետ
Բռնապատուքյան մեր այս ցուցերով։
Նա ոդի նըման անխոցելի յե,
Յեվ մեր ընդունայն զարկերը, միայն չարամիտ
հեգնանք։

ԲԵՌՆ.— Խոսիր։ վրա յեր, յերբ վոր աքլորը կանչել
սկսավ։

ՀՈՐ.—Յեվ նա չքացավ ինչպես հանգստություն
ահավոր կռվից։
Լսել եմ, աքլորն, այդ առավոտվա շեփորահարը
Իր բարձրահնչյուն և պլել հպարտով
Զարթեցընում է որվա աստծուն.
Յեվ նըրա ձայնից՝ թափառաշրջիկ բանտախուց
վոգին,
Ծովի մեջ լինի թե կըրակի մեջ, յերկրում թե
ոդում,
Սճապարում է դեպի իր բանտը.
Դըրա ճշտությանն այս նոքին դեպքն էլ ապա-
ցույց կեղավ։

ՄԱՐՑ.—Այո, չքացավ աքլորի կանչից.
Վոմանք ասում են թե մեշտ, յերբ մոտ է այն
կեղտանակը,
Յերբ վոր մեր Փրկչի ծընունդն է տոնվում,
Այդի թռչունը յերգում է անվերջ ամբողջ
գիշերը.
Ասում են այլևս վոչ մի ուրվական չե կարող
դուրս գալ,
Յեվ գիշերները առողջարար են,
Մոլորակները էլ չեն հարվածում,
Ելփը չե թովում, վոչ էլ վհուկը կարող է
գյուքել,
Այնպես սրբատուն է շնորհալից ժամանակ է
այն։

ՀՈՐ.—Յես էլ լսել եմ, և հավատում եմ մասամբ այդ
բանին.

Բայց մտիկ տըվեք, արեվածագը վարդ
պատմուճանով,
Ճեմում և այնտեղ՝ այն արեվելյան սարի ցողի
վրա։
Վերջ տանք ուրեմըն մեր պահպանութեյան. և,
թե ինձ լսեք՝
Գընանք և հայտնենք մեր այս տեսածը իշխան
Համլետին.
Կյանքովըս յերդում, այս ուրվականը, վոր համր
ե մեզ հետ,
Անշուշտ կուզենա նըրա հետ խոսել։
Համաձայն եք դուք, վոր լուր տանք նըրան՝
Դրված մեր սիրուց, վորպես և պարտքից։

ՄԱՐՑ.—Լավ, այդպես անենք, և յես լավ գիտեմ թե
այս առավոտ
Վերտեղ կարող ենք շատ հարմարութեյամբ
հանդիպել նըրան։

Գնում են

ՏԵՍԱՐԱՆ ՅԵՐԿՐՈՐԴ

Մի մեծ սրահ դղյակում Փողեր։

Գալիս են Թագավորը, Թագուհին, Համլետ, Պոլոնիուս, Լաերտ, Վոլտիմանդ, Կոռնելիուս, Ազնվականներ և սպասավորներ։

ԹԱԳ.—Թեյեվ մեր Համլետ սիրելի յեղբոր մահվան
հիշատակը
Թարմ և տակավին, և մեզ պատշաճ էր վշտով
համակվիլ

Յեվ պետք եր հաճայն մեր պետությունը
Մեկ ճակատ դառնար ցավից կծկված՝
Բայց դատողությունն այնպես սրտի դեմ
պայքար է մղել,
Վոր մենք ավելի խոհական վշտով հիշում ենք
նրան,
Առանց ինքներըս մեզ մոռանալու
Այս պատճառով ել՝ մեր նախկին քրոջն,
այժմյան թագուհուն,
Յեվ այս ռազմակուռ թագավորության
պահընկերուհուն,
Թող այսպես ասենք, ճնշված հըրճվանքով,
Մեկ արտասվաթոր, մեկ ուրախ աչքով,
Թաղման հանդեսում ուրախանալով,
հարսնիքում լալով,
Ցավ ու ցնծություն զուգ նժարներում
հավասար կշռած՝
Կընության առինք՝ և այս բանի մեջ անտես
չենք արել
Ավելի խոհեմ ձեր խորհուրդները,
Վոր աղատրեն մեզ հաղորդեցիք գործի
ընթացքում,
Բոլորի համար շնորհակալություն,
Այժմ ուրիշ հարց կա, վոր ձեզ հայտնի չե.
փոքըր ծորտիներրատը,
Մեր արժանիքը չափազանց նըվազ գնահատելով,
Կամ թե կարծելով, վոր մեր սիրելի չեղբոր
ձեռնելով
Մեր պետությունը պատակալված և և
կազմալուծված,

Դրան կցելով առավելության իր սին յերազը՝
Համարձակվել և մեզ մի պատգամով անհան-
գիստ անել
Յետ պահանջելով այն կալվածները,
Վոր նըրա հայրը որենքի բոլոր
յերաշխիքներով,
Տուժել և հոգուստ մեր կարիճ յեղբոր։ Այս նըրա
մասին.
Այժըմ գանք մենք մեզ, և մեր գումարած
ներկա ժողովին.
Ահա մեր գործը. այստեղ գըրել ենք ձերուկ
Նորվեգին,
Վոր հոյակըրայրն և այս Ֆորտինըրասի,
Յեվ՝ անկարացած, անկողնում ընկած՝
Իր յեղբոր վորդու մտադրությունից լուր
անգամ չունի,
Վոր կասեցնե նրա ձեռնարկի շարունակումը.
Ֆանզի իր բոլոր զորաժողովը, թըվով ու
կազմով,
Համախմբված և նրա սեփական հպատակներից.
Յեվ ահա մենք ձեզ, բարի Կոռնելիուս, և ձեզ,
Վոլտիմանդ,
Պաշտոն ենք տալիս տանել վողջույններս ձեր
Նորվեգիացուն.
Բայց չենք տալիս ձեզ ուրիշ անձնական
լիազորություն
Բանակցություններ վարելու իր հետ, ավելի
քան այն,

Հ 3181/1

Ինչ վոր մանրամասն այս հոլվածները ձեզ արտոնում են։
Բարի ճանապարհ, թող ձեր շտապը ապացույց լինի
Ձեր անձնվիրության։

ԿՈՌ. և ՎՈԼ.—Պատրաստ ենք թե այս, թե ամեն րանում ապացուցել այդ։

ԹՍԳ.—Տարակույս չունինք. բարի ճանապարհ։

Վոլտիմանդ և Կոռնելիուս դուրս են գնում

Յեվ այժմ, Լաերտ, դու ինչ խոսք ունես.
Ասացիր ինձնից մի խնդրանք ունես. ինչ է այդ, Լաերտ.
Ձես կարող խոսել բանավոր կերպով Դանիո
Արքային,
Յեվ իզուր անցնիս։ Ի՞նչ բան կարող ես հայցել ինձանից,
Վոր իսկույն չըտամ վըրաես իմ ընծան, վոչ քո խնդրանքը։
Գլուխը սրտին այնպես ճոռիկ չե,
Կամ ձեռքը բերնին այնպես ծառայող,
Ինչպես Դանիական գահը քո հորըդ։
Ասա ինձ, Լաերտ, ինչ ե փափաքըդ։

ԼԱ.—Վողորմած տեր իմ,
Ձեր թուլյտվությունն ու բարի շնորհը
Ծրանալիս գառնալու,
Ուրկից թեպետ և մեծ հոժարությամբ յես
այստեղ յեկա
Ձեր թագադրության առթիվ հարգանքըս
մատուցանելու,

Բայց այժմ այդ պարտքըս կատարելուց հետ՝
Ստատվանվում եմ, վոր բոլոր խոհերս ու տեն-
չանքներըս
Ձգտում են կրկին դեպի Ծրանախա, և խոնարհ-
վում են
Ձեր ներողամիտ թուլտվությունը հայցելու
համար։

ԹԱԳ.—Արդյոք հարկըդ հրաման առել ես. նա ինչ է
ասում։

ՊՈԼ.—Տեր իմ, տքնաջան թախանձանքներով նա
կորզեց ինձնից
Դանդաղ հրամանըս. և վերջի վերջո ես
ստիպվեցա
Դըրոշմել դժկամ հավանությունըս իր կամքի
վրա։
Խնդրում եմ, տեր իմ, թուլտ տրվեք գընա։

ԹԱԳ.—Ընտրիր պատեհ ժամ, Լաերտ. տեր
յեղիր քո ժամանակիդ։
Յեվ բարի ձիրքերդ թող դործածեն այն ըստ քո
հաճույքին։
Իսկ այժըմ, Համլետ, իմ յեղբոր վորդի, և
նույնիսկ վորդի...

ՀԱՄ.—(Առանձին) Մի քիչ ավելի քան յեղբոր
վորդի, պակաս քան վորդի։

ԹԱԳ.—Ի՞նչ ասել ես այդ, վոր դեռ թուխպերը
կախված են վըրադ։

ՀԱՄ.—Այդպես չե, տեր իմ. չափից ավելի արեվի
տակ եմ։

ԹԱԳՀ.—Սիրելի Համլետ, դեն ձգիր քեզնից այդ
մըռայլ դոյնը,
Ցեվ թող քո աչքը բարեկամի պես նայի
Դանիացուն։
Հերիք է այդպես կախված կոպերով
Աղնիվ ծընողիդ վորոնես հողում.
Դու գիտես, վոր դա առորյա բան է.
Ով վոր ապրում է, պետք է և մեռնի,
Անցնելով կյանքից ի հավերժություն։
ՀԱՄ.—Այդպես է, տիկին, սովորական բան է։
ԹԱԳՀ.—Յեթե այդպես է, ինչո՞ւ յես դա քեզ անսովոր
թվում։
ՀԱՄ.—Թվո՞ւմ, վոչ, տիկին. այլ ե. չգիտեմ «թվումից»
ինչ բան է։
Վոչ մելանագույն վերարկուս ձիայն, սիրելի
մայր իմ,
Վոչ հանդիսավոր սեվ հանդերձները,
Վոչ բուռըն շունչի հողմային հեվքը,
Ցեվ վոչ աչքերի հորդահոս գետը,
Վոչ էլ յերեսի վշտահար տեսքը,
Կամ ինձի բոլոր ձև ու կերպերի, նշանների հետ
կարող են յերբեք հարազատորեն ներքինը
հայտնել.
Դրանք բոլորն էլ, ճիշտ է, թվում են.
Դրանք բոլորն էլ բաներ են, վոր մարդ կարող
է խաղալ.
Բայց այստեղ ներսում այնպիսի բան կա, վոր
անց է ցուցից։
Իսկ սրրանք վշտի պատճառներն են լոկ և
արդուզարդը։

ԹԱԳ.—Շատ սիրալիր ես, և սրտիդ համար
պատվաբեր, Համլետ,
վոր վճարում ես սուգի պարտքերըդ
հանգուցյալ հորըդ։
Բայց պետք է գիտնաս, վոր հայրըդ նույնպես
կորցըրեց մի հայր,
Այդ կորած հայրն էլ կորցրեց իրենը.
Յեվ վերապրողը՝ իր վորդիական
պարտականությամբ՝
Պետք է սուգ պահե վորոշ ժամանակ.
Բայց հարատեվել համառ վշտի մեջ՝ նշանակում է
Սատիկ անբարիշտ կամակորություն.
վոչ առնացի սուգ.
Դա ցույց է տալիս յերկնքի հանդեպ ապստամբ
մի կամք,
Մի սիրտ անպաշտպան, մի միտք անհամբեր,
Յեվ պարզ ու անուս հասկացողություն. քանի
վոր մի բան,
վոր, գիտենք, նույնչափ սովորական և և պետք
է լինի
վորչափ ամենեն հասարակ բանը մեր խելքի
առաջ՝
Ինչու խոովկան դժկամակությամբ մեր սրտին
առնենք։
Ջե, հանցանք է դա յերկնքի հանդեպ,
Հանցանք և նույնիսկ մեռյալների դեմ, և
բընության դեմ,

Յեվ դատողության առաջ՝ անհեթեթ,
Վորի առորյա ըընաբանն ե հայրերի մահը,
Յեվ վորն առաջին դիակից՝ մինչև այսոր
մեռնողը
Աղաղակում ե «Այսպես ե կարգը»։
Դեն ձգիր ուրեմն այդ անզոր վիշտը, աղաչում
ենք քեզ,
Յեվ ընդունիր մեզ վորպես քո հայրը.
Ֆանի վոր պետք ե աշխարհն իմանա
Վոր ամենեն մոտ դու յես մեր գահին,
Յեվ վոչ նվազ սեր ու գորովանք ունիմ դեպի
քեզ,
Վորքան ամենեն սիրալիր հայրը դեպի իր
վորդին։
Գալով քո հայտնած դիտավորության,
Վոր կամենում ես վիտաենքերդ դառնալ և դեռ
ուսանել,
Դա մեր փափաքին սատիկ ներհակ ե.
Աղաչում ենք քեզ, հոժարիր կենալ և ապրել
այստեղ
Իբրեվ մեր աչքի խինդ և սփոփանք,
Իբրեվ գլխավոր մեր պալատական,
Մեր յեղբորվորդի, և իբրեվ վորդի։
ԹԱԳՀ.—Մորըդ խնդրանքը թող իզուր չանցնի,
սիրելի Համլետ.
Յես ել խնդրում եմ, կաց այստեղ մեզ մոտ.
մի դնար Վիտաենքերդ։
ՀԱՄ.—Տիկին, չանք կանեմ ձեզ հնազանդելու։

ԹԱԳ.—Ահա սիրալից և լավ պատասխան.
Յեղիր Դանիայում ինչպես ինքնիրըս.—Յեկ
պընանք, տիկին,
Համլետի այս հեղ և անբռնադատ համակերպումը
Ծայտանք և արտաս. ի պատիվ վորին՝
Դանիայի արքան չպետք և ըմպե ցնծալից
բաժակ
Առանց վոր խոկուն մեծ թնդանոթը հայտնե
ամպերին,
Յեվ թագավորի խոնած կենացին յերկինքը ձայն
տա՝
Յերկրային ամպրոպն անդրադարձելով։ Գնանք
միասին։

Փողեր. բոլորը գնում են բացի Համլետից

ՀԱՄ.—Յերանի այս պինդ, խիստ պինդ մարմինը
Հալվեր ու լուծվեր, և փոխվեր ցողի.
Կամ Անվախճանը ուղղած չըլիներ իր
պատվիրանը
Անձնասպանի դեմ։ Ատելած իմ, աստված,
Ի՜նչպես տաղտկալի, անհամ ու տափակ, վուշ
են թըվում ինձ
Աշխարհի բոլոր վայելչանքները։ Թո՜ւհ, պըրանց
վըրա։
Մի պարտեզ և պա, վոր քաղհան չեղած սերմի
յե հասել,
Ու բընութան կոպիտ և բիրտ բաները իշխում
են միայն։
Ի՜նչ, այստեղ հասնի, դեռ յերկու ամիս իր
մահից չանցած,

Վոչ, այդքան չըկա, յերկու ել չըկա՝ ինչ մեծ թագավոր,
Վոր սրա մոտ այն ես, ինչ Հիպերիոնը մի սատիրի մոտ։
Այնպես մոլոր վրա զուրզուրում ես նա, վոր
չես թույլ տալիս
Յերկնքի հողմերն մի քիչ խիստ դպչեն նըրա
այտերին։
Յերկինք ու յերկիր, պճոք և միտ բերեմ.
Այնպես փարած ես նա իր ամուսնուն,
Վոր ախորժակը աճում ես կարծես հենց իր
սընուդով.
Յեվ այնու հանդերձ մեկ ամիս չանցած։ Ա՛խ,
չմտածեմ...
Թուլությո՛ւն, անուղղ կին ես։
Մի փոքրիկ ամիս. նախքան մաշվելին այն կոշիկները,
Վորոնցով քայլում ես նա խեղճ հորըս
մարմնի յետեվից,
Ինչպես Նիոբեն, համակ արտասուք. նա ինքը..
ինքը...
Տեր Աստված, անբան անասունն անգամ
Ավելի յերկար սուգ պիտի պահեր.
Յեվ ամուսնանա իմ հորյեղբոր հետ, իմ հոր
յեղբոր հետ.
Բայց նա հորս այնքան նըման ես, վորքան յես
Հերկուլեսին.

Մեկ ամիս չեղած, նախքան բորբոքված նըրա աչքերից
Իր ամենաակեղծ շարտասուքների աղը սրբըվեր՝
Սրդեն պատկվածս Ո՜հ, չար արտորանք,
Սուրբ այսպիսի հաջողակութեամբ դեպի պիղծ մահիճ.
Դա լավ չէ, վոչ ել լավ պիտի լինի։
Բայց պայքիր, սիրտ իմ, քանի վոր պետք է
կապ ըլնեմ լեզվիս։

Գալիս են Հորացիո, Մարցելլոս և Բեռնարդո

ՀՈՐ.—Իմ հարգանքները Ջերըլդ Մեծութեան։
ՀԱՄ.—Ուրախ եմ, վոր ձեզ առողջ եմ տեսնում։
Հորացիո՞ն է սա, թե՞ վոչ յես ինքըս ինձ
մոռանում եմ։
ՀՈՐ.—Ինքն է, և հավետ ձեր խոնարհ ծառան։
ՀԱՄ.—Պարոն, սիրելի իմ բարեկամս.
Թող այս անունը փոխանակենք միշտ։ Ասա,
Հորացիո,
Ինչո՞ւ յես յեկել դու Վիտեմբերգից։—
Մարցելլո՞ս։
ՄԱՐՑ.—Տեր իմ։
ՀԱՄ.—Պարոն, ուրախ եմ, վոր ձեզ տեսնում եմ։
(Բեռնարդոյին) Բարի յերեկո։—Ճիշտ, Վիտեմբերգից ինչո՞ւ յես յեկել։
ՀՈՐ.—Դատարկաշրջիկ բընավորութիւն, սիրելի տերըս։
ՀԱՄ.—Թշնամուդ անգամ չեյի կամենա այդ խոսքը լսել։

Դու ել ականջըս մի բռնադատիր,
Վոր խոսքիդ լսե՝ անձիդ հակառակ.
Լավ գիտեմ, վոր դու այդպիսի մարդ չես.
Բայց ինչ գործ ունիս Ելենայի մեջ։
Մեկնելուցդ առաջ պետք ե քեզ մի լավ խմել
տովորցնեմ։

ՀՈՐ.—Տեր իմ, չես կարծ ձեր հոր թաղումը
տեսնելու համար։

ՀԱՄ.—Ինդրեմ, մի ծաղրիր, ուսանող ընկեր.
կարծեմ թե չեկար մորըս հարսնիքը տեսնելու
համար։

ՀՈՐ.—Իսկապես, տեր իմ. շատ շուտ հաջորդեց մեկը
մյուսին։

ՀԱՄ.—Ընտանյոդեթյուն, խընայոդութիւն, Հորացիո.
Մեռելածաշի կերակուրները պաղ մատուցվեցան
Հարսնատեղյանի հրավիրյալներին։ Լավ եր,
Հորացիո,
Վոր իմ ամենեն անգութ թշնամուս կերկնքում
գտնեյի,
Քան թե այդ որը տեսած լինեյի։
Հայրը՞ս... կարծես թե տեսնում եմ հորըս։

ՀՈՐ.—Մ՞ի, ո՞ւրտեղ, տեր իմ։

ՀԱՄ.—Հոգուս աչքի մեջ։

ՀՈՐ.—Տեր իմ, մեկ անգամ տեսել եմ նրան. լինչ
թագավոր եր։

ՀԱՄ.—Մարդ եր, Հորացիո, իր ամեն բանով։
Մեկ ել չեմ տեսնի նորա նմանը։

ՀՈՐ.—Տեր իմ, կարծում եմ, վոր կերեկ գիշեր կես
տեսա նրան։

ՀԱՄ.—Տեսա՞ր, ձեմը։
ՀՈՐ.—Ձեր հորը, տեր իմ, Թագավորինը։
ՀԱՄ.—Հո՞րը։
ՀՈՐ.—Ջախջախեցնք խնդրեմ մի րոպե ձեր
պարմացումը,
Ցեղ ուշադրութեամբ ականջ դըրեք ինձ,
Մինչեվ վոր պատմեմ, այս պարոններէն
վկայութեունով,
Պատահած հրաշքը։
ՀԱՄ.—Ի տեր աստուծո, պատմիր շուտ, պատմիր։
ՀՈՐ.—Յերկու գիշեր և վըրայ վըրա, այս
պարոնները,
Բեռնարդոն ինքը և Մարցելլոսը, հսկած
ժամանակ,
Գիշերվա կեսին և մեռելային ամայութեան մեջ
Մի բան են տեսնում։ Մի ձեվ, ձեր հոր պես,
Գլխից մինչև վոտք սպառազինված, յերեվում է
նրանց,
Ցեղ հանդիսաւոր ուժանըը քայլով գալիս
անցնում է
Նրանց առջևից, և յերեք անգամ քայլում է
այնպես
Նըրանց ապշահար և ահաբեկված աչքերի առաջ
Իր գավազանի հեռավորութեամբ։
Իսկ սըրանք վախից դոնդողի փոխված՝
Պաղանձված կանգնում, և վոչինչ ասել չեն
կարողանում։

Ա՛յս բանն ահավոր պատնաւահուԹեամբ
հաղորդեցին ինձ.
Յերբորդ գիշերը յետ էլ նրանց հետ պահակ
կանգնեցի,
Յեվ ճիշտ նոյն ձեվով, վոր պատմել եյին,
միևնոյն ժամին,
Նոյն կերպարանքով, ամեն մի բառը կետ առ
կետ ճշդիւտ,
Տեսիլքը ցեկաւ. ձեր հորը, տեր իմ, ճանաչում
եչի,
Յերկու ձեռքս իրար այնպես նըման չեն։
ՀԱՄ.—Բայց դա վիրտեղ եր։
ՀՈՐ.—ՀարԹավայրի վրա, ուր հանում եյինք։
ՀԱՄ.—Ը՛ր խոսեցի՞ք իր հետ։
ՀՈՐ.—Խոսեցի, բայց նա չըպատասխանեց։
Միայն, ինձ Թըվաց, Թե նա մի անգամ գլուխը
վեր տարավ
Յեվ շարժում արավ վորպես Թե մի բան ասել
ուզենար,
Բայց այդ րոպեին աքլորը կանչեց,
Յեվ նա այդ ձայնից հեռացավ վուԹով,
Յեվ անհայտացավ մեր տեսուԹյունից։
ՀԱՄ.—Շատ ապրելիս։
ՀՈՐ.—Կյանքովը չերդում, հարցնելի տերը, վոր
ճըշմարիտ ես,
Յեվ մեզ համար պարտք համարեցիք
գալ և ձեզ հայտնել
ՀԱՄ.—Այդպես, պարոններ. բայց դա ինձ տատիկ
վրդովեցնում է։

Այս պիշեր նորեն պահակը դուռ եկաւ։
ՄԱՐՑ. Ցեւլ ԲԵՌՆ.—Այո, ապնիվ տեր։
ՀԱՄ.—Զլինված եր, ասացիք։
ԲԵՌՆ. յեվ ՄԱՐՑ.—Զլինված եր. տեր խմե
ՀԱՄ.—Գադաթից կըրճունկ։
ՄԱՐՑ. յեվ ԲԵՌՆ.—Գլխից մինչև վոտք։
ՀԱՄ.—Դեմքը չտեսաք։
ՀՈՐ.—Տեսանք, ապնիվ տեր. յերեսակալը վերեվ եր քաշված։
ՀԱՄ.—Ինչո՞ւ եր դեմքը։
ՀՈՐ.—Ավելի սրտում քան թե բարկացած։
ՀԱՄ.—Գուշնաց, թե կարմիր։
ՀՈՐ.—Սաստիկ գունատ եր։
ՀԱՄ.—Ցեւլ իր աչքերը հառեց ձեր վրա։
ՀՈՐ.—Անընդհատորեն։
ՀԱՄ.—Ա՛խ, յերանի թե այնտեղ լինեյի։
ՀՈՐ.—Դա ձեզ կսպասեցներ։
ՀԱՄ.—Հավանական և, շատ հավանական։ Ցերկար ապասեց։
ՀՈՐ.—Այնքան, վորքան մարդ մինչակ շուռալով մեկ հարցուբր համբե։
ՄԱՐՑ. յեվ ԲԵՌՆ.—Ավելի յերկար, ավելի յերկար։
ՀՈՐ.—Վախ, յերբ յես կայի։
ՀԱՄ.—Ցեւլ նրա մորուքն ալեխառն եր, չէ։
ՀՈՐ.—Ճիշտ իր կենդանի ժամանակվա պես. ան արծաթախառն։
ՀԱՄ.—Ցես եւ այս պիշեր կըսպասեմ ձեզ հետ. գուցե նորեն դա։

ՀՈՐ.—Վատահ եմ կըզա։
ՀԱՄ.—Թե ազնիվ հորըս վերադարձը առնեմ՝
կըխոսեմ իր հետ
Թևկուռ պըժոխքն ել բերանը բանա և «լուր»
գոչե։
Այժըմ խնդրում եմ ձեզ բոլորիդ ել,
Յեթե մինչև այժմ այս յերեվույթը ծածուկ եք
պահել՝
Թողեք տակավին, վոր ձեր լուռթյան քողի տակ
կենամ.
Յեվ այս պիշերը ել ինչ վոր պատահի,
Տըվեք ձեր մտքին, բայց վոչ ձեր լեզվին։
Յես ել ձեր սերը կըփոխարինեմ։ Դեհ, մնաք
բարով։
Հարթավայրի վրա տատնուտանվի և
տատներվուտի մեջ
Կըհանդիպեմ ձեզ։
ՍՄԵՆՐԸ.—Մեր հարգանքները Ձեր Սղնըվության։
ՀԱՄ.—Ձեր սերը, պարոններ, նույնպես իմս ել ձեզ.
ղընացեք բարով։

Բոլորը գնում են, բայց Համլետից

Իմ հորըս վոգին սպառազինված. մի բան կա
այստեղ.
Յես կասկածում եմ, վոր մի պիղծ վոճիր
կատարված լինի.
Յերանի թե պիշերն յեկած լիներ այժմ.
Մինչև այն, հոգիս, անվրդով մնա.

Զաղիր գործերը կըգան հրապարակ,
Թեկուզ յերկիրն իսկ թագըննե իր տակ։

Գնում է դուրս

ՏԵՍԱՐԱՆ ՑԵՐՐՈՐԴ

Մի սենյակ Պոլոնիուսի տան մեջ։
Գալիս են Լաերտ և Ոֆելիա։

ԼԱ.—Արդեն իրերըս նավի վըրա յին. մընաս բարով,
քույր.
Ցերը նպաստավոր լինեն հողմերը, և նավ
պըտնվի՝
Ըզքընաս, այլ ինձ լուր պըրես քեզնից։

ՈՖ.—Մի՞թե այդ ասաին տարակուսա ունիս։

ԼԱ.—Գալով Համլետին և իր սին շնորհին,
Մի քմահաճույք համարիր դու այդ, և արյան
մի խաղ,
Գարնան մանուշակ նորատի բնության,
Վաղահաս, բայց վաղանց, անուշ բայց անտեվ,
Մի կարճ րոպեի բույրն ու բերկրանքը, վոչինչ
ավելի։

ՈՖ.—Հենց այդքան միայն։

ԼԱ.—Վոչինչ ավելի։
Ջանզի բնությունը, յերբ պարզանում է,
Չի աճում միայն չիղ ու ծավալով.
Այլ յերբ այդ տաճարն ընդարձակում է,
Հոգու և մարքի ներքին պաշտոնն էլ հետն է
պարզանում։
Գուցե իսկապես սիրում է քեզ այժմ,
Ցեվ նըրա կամքի վողջախոհությունն այժըմ
մաքուր է

Վարևե կեղտից և կեղծությունից.
Բայց յերբ վոր նըրա բարձր աստիճանը կշռի
մեջ դընան՝
Պետք և վախենաս, վոր նա ինքն էլ չե իր
կամքի տերը,
Այլ հպատակն և ինքն իր ծընողին,
Յեվ անկարող և ամեն աննշան անհատի նման
Ի՛ր համար ձեվեվ քանի վոր նըրա այդ
ընտրությունից
Կախված և յերկրի ապահովությունն ու
վողջությունը,
Յեվ այդ պատճառով իր ընտրությունը
շըրջապծված և
Ա՛յն մարմնի ձայնով և հոժարությամբ, վորի
գլուխն և նա.
Ուրեմն, յերբ ասե թե քեզ սիրում և,
Ստհեմությունդ այն չավելով միայն պետք և
հավատա,
Վորշափ վոր Համլետ, իր հատուկ կամքով և
աստիճանով,
Կարող և փոխել իր խոսքը գործի, այսինքն,
այնքան,
Վորքան Դանիայի ընդհանուր ձայնը
հավանություն տա։
Կշռիր ուրեմն, թե քո պատիվը վորքան
կըտուժե,

Ցեթե դյուրահաս ականջով լսես նըրա
յերգըերին,
կամ թե սիրտըդ տաս, կամ թե բաց անհավոդ ախոհ
դանձըդ
Նըրա սանձաղուրկ տարփանքի առաջ։
Վախեցիր, Ոֆելիա, վախեցիր դրանից, սիրելի
քոյրիկ,
Ցեվ մինշտ պահիր քեզ քո համակրանքի թիկուն-
քը քաշված,
Հեռու ցանկության նեռից ու վտանգից։
Ամենեն գգաստ կույսն եվ շըվայտ ե
Ցեթե լուսնին իսկ ցույց տա իր մարմնի
գեղեցկությունը։
Առաքինությունն ինքն եվ ազատ չե
զրպարտությունից։
Հաճախ Թըթուրը ուտում ե գարնան .
յերախայրիքը
Նախքան թե նըրանք կոկոն բանային,
Ցեվ պատանության վաղ առավոտին, ջինջ ցո-
ղի պահուն,
Վարակիչ հողմերն առավելապես յերկյուղալի
յենե
Զգուշ ուրեմըն, վախից ապահով պահապան
չըկա.
Մատաղ արյունը ինքնին ըմբոստ ե
Նույնիսկ յերբ վոչ վոք չի դրդում նըրան։
ՈՖ.— Այս բարի դասիդ ազդեցությունը
կըպահեմ վորպես սրտիս պահապան։ Բայց,
բարի յեղբայր,

Մի գուցե դու ել ճիշտ այնպես անես,
Ինչպես անբարիշտ քարոզիչներից շատերն են
սովոր,
Որ քարոզելով յերկնքի փշրտա զառիվեր ուղին՝
Իրենք հղփացած և ապերասան անառակի պես
Գնում են վայելքի ծաղկալից շավղով՝
Հենց իրենք անփուչթ իրենց խորհըրդին։

ԼՍ.—Վոչ, միամիտ կաց։ Բայց ուշանում եմ.
ահա և հայրըս։

Գալիս և Պոլոնիուս

Կրկին որոնենք կրկին շընորհ և.
Բախտըս ժպտում և տալով ինձ առիթ յերկրորդ
հրաժեշտի։

ՊՈԼ.—Դեռ այստեղ, Լաերտ. գնա. գնա նավը.
Հոգին առապատիղ ուսին և նստել,
Ցնծ քեզ են սպասում։ Ահա որոնութիւնս.

Ջուրը գնելով Լաերտի գլխին

Ցնծ այս մի քանի սկզբունքները հիշողութեանդ
մեջ,
Տես, լավ փորագրես, ձեզու մի շռայլիր ամեն
մի մտքիդ,
Ցնծ վոչ ել ամեն տհաս խորհրդի՝ գործադրըրու-
թիւնս։

Մարդամոտ յեղիր, բայց վոչ պըռեհիկ։
Բարեկամներիդ, վոր ընտրած լինես և փորձի
դըրած,

Պողպատ ողերով պրկիր հոգուդ հետ.
Բայց ձեռքիդ ափը մի կոշտացընիր՝
պատվասիրելով

Նոր ձվից յելած և դեռ անփետուր ամեն
ընկերի.
Ջգուշ կաց կռվից, բայց յերբ մեջ մըտար՝
Այնպես տար գործը, վոր զգուշանա վնասվըդ
քեզնից.
Սկանջդ ամենքին, ձայնըդ քիչերին.
Առ-ամեն մարդուց նըրա կարծիքը,
Դատողությունըդ քեզ համար պահիր.
Քանի զգեստ հագիր, վորքան ջըսակըդ կարող
և պորել.
Բայց վոչ սևթևվևթ. ճոխ, վոչ զարդարուն.
Ինչի զգեստը հայտնում և հաճախ թե ինչ և
մարդը,
ԵՒնչ Ֆրանսիայում դիրք ու աստիճան ունեցող
մարդիկ
Շատ նուրբ ու ընտիր ճաշակի տեր են, հատուկ
այդ բանում,
վոչ պարտք առ, վոչ տուր. քանդի շատ անգամ
փոխատվությունը թե դրամն և կորցնում, թե
բարեկամին.
Փոխատուությունն ել ըրթացընում և
խնայողությունը.
Այս ամենից վեր, միշտ անկեղծ յեղիր դու
ինքըդ քեզ հետ,
Ձեվ կը հետևի այս բանին, ինչպես ոիվը
պճնիերին
վոր վոչ վոքի հետ չես կարող կեղծել. Դեհ,
գընաս բարով,
Ձեվ որհնությունըս թող ուրանք քո մեջ
արդասավորեն.

ԼԱ.— Շատ խոնարհաբար հրաժեշտ եմ առնում։
ՊՈԼ.— Գնա, ժամանակ է, և ծառաներըդ քեզ են սպասում։
ԼԱ.— Մնաս բարով, քույր, և լավ մխո պահիր ինչ վոր ասացի։
ՈՃ.— Ո՛ւ ասածներըդ վախվաճ կըմընան հիշողութեանս մեջ,
Ցեղ բանաւին եւ կըմընա քո մոտ։
ԼԱ.—Մընացեք բարով։
Գնում է
ՊՈԼ.— Բեզ ինչ և ասել, Ոֆելիա։
ՈՃ.—Ներեցեք, տեր իմ, Համլետի մասին մի բան ասաց ինձ։
ՊՈԼ.—Ճիշտ, լավ ասացիր. լսել եմ թե նա վերջերս հաճախ
Ստանձին ժամեր նվիրել է քեզ. և թե դու
ինքըդ
Շատ անվերապահ և շույալ կերպով ընդունել
ես նրան։
Ցեթե այդպես ե,—և ինձ ասել են թե ճիշտ
այդպես է,
Ցեվ այդ լոկ իբրեվ նախազգուշացում—պետք է
քեզ ասեմ,
Վոր չես գիտակցում այնպես պարզորեն,
Ինչպես վայել է իմ աղջկանըս, և քո իսկ
պատվիդ
Ինչ կա ձեր միջեվ. ճշմարիտն ասա։
ՈՃ.—Տեր իմ, վերջերըս շատ ապացուցներ տըվել է
նա ինձ
Իր համակրութեան։

ՊՈԼ.— Համաձայնությամբ, բան.

Խոսում ես ինչպես մի անփորձ աղջիկ
Անվարժ այսպիսի խիստ վտանգավոր մի
ապագայի:
Հավատում ես դու քո այսպես ասած
«ապացույցներին»:

ՈՑ.— Ըդխոսեմ, տեր իս, թե ինչ մտածեմ:

ՊՈԼ.— Հա, այդ կ'ես կասեմ. մտածիր, թե դու մի
յերեխա կես,
Վոր ընդունել ես այդ ապացույցներն հնչուն
դրամի տեղ,
Մինչ կեղծ են նրանք: Դու քեզ ավելի թանկ
ապացուցիր,
Թե վոչ—խեղճ բառի հոգին չըհանենք այսքան
կրկնելով—
Հիմարությունդ կապացուցես ինձ:

ՈՑ.— Տեր իմ, նա միայն պատվավոր ձևով իր սերն
ե հայտնել:

ՊՈԼ.— Այո, կարող ես «ձև» անվանել այդ.
դնա, դնա բանիդ:

ՈՑ.— Ձևով իր խոսքերը յերկնքի բոլոր սուրբ
յերդումներով
Հաստատում եր նա:

ՊՈԼ.— Հա, վորպիսիներ կոցար բռնելու:
Ձես շատ լավ գիտեմ, վոր յերբ արյունը
բոցավառվում է,
Ի՞նչ շռայլությամբ հոգին յերդումներ տալիս ե
լեզվին:

Այդ բոցերն, աղջիկ, վոր լույս են սիրում,
բայց վոչ ջերմություն,
Յերկուսիցն էլ պոբրկ հենց խոստանալիս, դեռ
բերնից չելած,
Ջրպետք և յերբեք կըրակ համարեա
Լսիր, այս որից՝ մի քիչ ավելի խըճճոտ յեղիր
Որիորդական ներկայությանդ.
Հանդիպումներիդ ավելի պինդ դիր,
Վոչ թե միշտ յեղիր հրամանին պատրաստ
Գալով Համլետին՝ հիշիր միշտ թե նա
յերիտասարդ է,
Յեվ թե ավելի յերկար պարանով կարող է շրջիլ
Քան թե քեզ համար թույլատրելի յեր
Հարցը, Ոֆելիա, հավատ չընծայես այդ
յերդումներին
Ընդհանք մի միայն վատ մինջոդներ են,
Վոչ թե այնպես, ինչ ցույց և տալիս նըրանց
դրսինը.
Այլ խնդրարկուները անասուրը լողձելի,
Վոր փախսում են սուրբ ու բարեպաշտ
կավատներից պես
Սվիլի սատիկ խարելու համար.
Մի անգամ ընդ միշտ թող քեզ պարզ ասեմ,
ինձ հաճելի չե,
Վոր այսուհետև ապատ րոպեներդ այդպես
շըռայլես
Յեվ Համլետի հետ ասուլիս անես.
Ձգիր, ասում եմ, խելքըդ ժողովիր

ՈՁ. — Հնազանդ եմ, տեր իմ։

Գնում են

ՏԵՄԱՐԱՆ ԶՈՐՐՈՐԴ

Հարթավայրի վրա

Գալիս են Համլետ, Հորացիո և Մարցելլոս

ՀԱՄ. — Ողբը շատ խիստ է. սոսկալի ցուրտ է։

ՀՈՐ. — Այո, գառնաշունչ և կտրող ոդ է։

ՀԱՄ. — Ի՞նչ ժամն է հիմա։

ՀՈՐ. — Մոտ տասներկուսն է։

ՄԱՐՑ. — Ոչ, արդեն զարկից։

ՀՈՐ. — Ճի՞շտ. չլսեցի. մոտ է ուրեմն այն ժամանակը,

Երբ սովորաբար վուշին գալիս է

Փաղաց թնդանոթ բեմի հետեվից

Այս ի՞նչ է, տեր իմ։

ՀԱՄ. — Արքան այս գիշեր տոն է կատարում և

խնջույք ունի։

Կոնծաբանում է, և գլորվելով կայթակար է

պարում.

Յուվ յերբ լցնում է Հռենոսի գինին իր կոկորդն

ի վար՝

Թմբուկն ու փողերն այսպես գոռում են

Ի պատիվ նըրա խըմած կենացին։

ՀՈՐ. — Մի՞թե դա մի հին սովորութի՞ւն է։

ՀԱՄ. — Այո, այդպես է.

Բայց իմ կարծիքով,— թեև յես ինքըս

այստեղ եմ ծընված,

Յուվ մանկությունից դըրան վարժըված—

Դա մի անգիտի սովորություն է,

Վորի խախտումն և ավելի պատիվ, վոչ հետևումը։
Այս գլխամոլոր վերխուռմները
Մեղ արեվելքից մինչև արեվմուտք՝ այլ ազգերի մոտ
Ծաղրանքի են. նըրանք արբեցող անվանում են մեզ,
Յեվ խոզավայել մակդիրներ կցում մեր անուններին.
Յեվ դա, իսկապես մեր մեծ գործերից։ վորչափ և բարձըր,
Ալում և վառքի ուղը և ծուծը.
Ինչպես շատ անգամ նույնն և պատահում անհատների հետ,
Վորոնք կըրելով ըընութեյան ինչ վոր ախտավոր մի բիծ,
Ինչպես և ծընև — մի բան վորի մեջ նըրանք մեղք չունին,
Բանի վոր նակին ինքը չե կարող իր ծագումն ընտրել—
Իրենց խղճմտանքի վորոշ հակումի զորանալովը,
Վոր դաստիարակության բերդ ու պարիսպը վար և տապալում,
Կամ ուռնենալով մի սոլորության,
Վոր հավանելի քաղաքավարության վորևե ձևը
Ջախջախնում և, այդ մարդիկ, ասում եմ,—
Մի հատ թերության դրոշմը կըրելով,
Լինի դա ընության տրված համապիսա, լինի բաղդի ասող—

Ներանց բոլոր մյուս արժանիքները—
Թեկուզ անարատ ինչպես սրբություն,
Ցեխ անթիվ, վորքան տըրված է մարդուն—
Դարձյալ ընդհանուր կարծիքի առաջ
Այդ մեկ մասնավոր պակասությունից
կարատավորվին։
Մի մասնիկ ժանգը բոլոր ազնիվ նյութն
ապականում է
Ցեխ լինելընում իր անարգության։
Գալիա և ուրվականը
ՀՈՐ.—Նայեցեք, տեր իմ. գալիս է...
ՀԱՄ.—Հրեշտակներ, շնորհի սպասավորներ,
պաշտպանեցեք մեզ։
Ի՛նչ էլ լինես դու, վրկըված վոգի, թե դեվ
դժոխքի,
Ցերկնքից հետըդ բույր բերած լինես, դեհենից
խորշակ,
Թեկուզ չար լինին նպատակները, թեկուզ
բարեգութ,
Այնպես հարցահույզ դեմքով ես գալիս,
Վոր պետք է խոսիմ, պետք է կանչեմ քեզ,
Համլետ, թագավոր.
Հայր, վեհափառ տեր Դանեմարքայի.
պատասխան տուր ինձ.
Մի թողնիր պայթիմ անգիտությունից.
Այլ ասա, ինչու քո տուրբ վահերքը, մահվան
ավանդված,
Պատռել են իրենց վարշամակները.

Ինչու՞ շրխկմըդ, վորտեղ քեզ տեսանք հանգիստ
ամփոփված,
Բացել ե իր ծանր, մարմար յերակը և քեզ դուրս
ժայթքել.
Ի՞նչ միտք ունի այս, վոր դու, մեռած դի,
ամբողջ գրահապատ,
Վերացնելուս ես լուսնի շողքերը,
Դարձնելով գիշերն այսպես ահռելի,
Վոր մենք, բընութեյան խաղալիքներըս տակահար
յեղած
Ցնցվինք խոհերով, վորոնց անհաս են մեր
հոգիները։
Ասա, ինչ ե այս, ինչու համար ե, ինչ պետք
ե անենք։

Ուրվականը գլխով նշան ե անում Համլետին

ՀՈՐ.—Նշան ե անում, վոր գընաք իր հետ.
Կարծես ուզում ե ձեզ առանձնապես մի բան
հաղորդել
ՄԱՐՑ.—Նայեցեք, ինչպես սիրալիր ձեվով հրավիրում
ե ձեզ
Դեպի ավելի ամենավոր մի տեղ. բայց չերթաք,
տեր իմ,
ՀՈՐ.—Վոչ, ամենևին։
ՀԱՄ.—Չե ուզում խոսել.
Պետք ե ուրիշն հետևվում նըրան։
ՀՈՐ.—Վոչ, չերթաք, տեր իմ։
ՀԱՄ.—Ինչու՞, վախս ինչ ե. կյանքըս ինձ համար մի
ասեղ չարժե.

Իսկ գալով հոգուս՝ ինչ կարող է նա իմ հոգուն
անել,
Քանի վոր իր պես նա ել անմահ եւ
Ելի կանչում է. պետք է հետեվեմ։
ՀՈՐ.—Իսկ չեթե, նա ձեզ քարշ տա դեպի ծով,
Կամ թե գագաթը այն քարաժայռի,
Վոր կորացել է իր սարոտից, կախվել ծովի վրա,
Յեվ այնտեղ ինքը ուրիշ առնելի մի ձև
ստանա,
Վոր գառողության իշխանությունը խլե
ձեզանից,
Յեվ ձեզ հասցընե խելագարության.
Խորհեցեք, իշխան, այնտեղը, ինքը, առանց այլ
բանի,
Խելագարության հովերը կը փչեն ամեն ուղեղի,
Վոր այնքան կանգուն վար նայե ծովին
Յեվ լսե ներքեվ նըրա գոռոցը։
ՀԱՄ.—Դարձյալ կանչում է։—Գընա, գալիս եմ։
ՄԱՐՑ.—Ըսկետք է գընաք, իմ ազնիվ տերըս։
ՀԱՄ.—Ձեռքներդ հետ քաշեք։
ՀՈՐ.—Լսեցեք, տեր իմ, չըսկետք է գընաք։
ՀԱՄ.—Թողեք, որհասըս ինձ ձայն է տալիս,
Յեվ մարմնիս ամեն մի փոքրիկ նյարդը
պորեղացնում է,
Ինչպես Նեմեյան առյուծի ջիղը։
Դարձյալ կանչում է. թողեք, պարոններ.
Յերկինքն է վկա, ուրու կըդարձնեմ ինձ
արգելողին.

Հեռո՛ւ, ասում եմ.— Գընա՛, գալիս եմ.

Ուրվականը և Համլետը դուրս են գնում

ՀՈՐ.—Իր մտքի թափից խելագարվում է.
ՄԱՐՑ.—Գընանք հետեվից. հարմար չե այսպես
հնազանդել նըրան.
ՀՈՐ.—Գընանք հետեվից. Ո՞ւր ե հասնելու այս բանի
վերջը.
ՄԱՐՑ.—Մի բան և փտել Դանեմարքայում.
ՀՈՐ.—Ասածդ կը շիտակ.
ՄԱՐՑ.—Հետեվենք նըրան.

Դուրս են գնում

ՏԵՍԱՐԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Հարթավայրի մի այլ մաս.
Գալիս են Ուրվականը և Համլետը

ՀԱՄ.—Ո՞ւր ես տանում ինձ. խոսի՛ր, չեմ գալիս
ավելի հեռու.
ՈՒՐ.—Լսի՛ր.
ՀԱՄ.—Լսում եմ.
ՈՒՐ.—Ատե և իմ ժամը,
Ցերը ծծմբային տանջող բոցերին,
Պետք և վոր կըրկին անձնատուր լինեմ.
ՀԱՄ.—Ավաղ, խեղճ վոգի.
ՈՒՐ.—Մի խղճա վըրաս, այլ լսիր ուշով
հայտնելիքներըս.
ՀԱՄ.—Պարտքըս լսել և.
ՈՒՐ.—Յեվ վըրեժ հանել լսելուց հետո.
ՀԱՄ.—Ի՞նչ.
ՈՒՐ.—Հորըդ վոգին եմ.

Դատապարտված եմ վորոշ ժամանակ պիշերը
շրջել
Յեվ ցերեկները փակված՝ ծոմ պահել
կըրակների մեջ,
Մինչև վոր բոլոր կյանքիս որերի պիղծ
վոճիրները
Այրվին ու սրբվին։ Յեթե իմ վըրա արդելք
չըլիներ
Իմ բանտանոցի գաղտնիքները հայտնել՝
Ո՜հ, կարող եյի քեզ մի այնպիսի պատմություն
անել,
Վոր ամենին թեթիվ բառը անգամ հոգիդ
կըտանջեր.
Մառաղ արյունըդ կը սառեցներ. յերկու
աչքերըդ,
Ասղերի նըման դուրս կըթռցներ իրենց
վոլորտքից.
Հյուսված ու զուգված այդ գիսակները
կհյուսարձակեր.
Յեվ ամեն մի մազ՝ բարկացկոտ վոզնու
փուշերի նըման
Ձից կըկանդնեցներ. բայց հավիտյանի այս
հայտնությունը
Միա ու արյուն ե ականջի համար անկարելի յեր
Լսիր, ահ, լսիր. յեթե իսկապես սիրել ես
հորըդ...

ՀԱՄ.—Ասվածե իմ...

ՈՒՐ.—Նըրա հրեշային, ժանտ սպանության վըրեժը
հանիր։

ՀԱՄ.— Ի՞նչ, սպանութեյանն:
ՈՒՐ.— Այո, և խիստ ժանտ մարդասպանութեյան:
Ամենասլաքն եվ թեև այդպես է,
Բայց սա խիստ ժանտ էր, խիստ տարօրինակ,
խիստ անբընական:
ՀԱՄ.— Պատմիր շուտ, պատմիր, վոր ես թեվերով,
Ավելի արագ, քան մտքի թըռիչք կամ սիրտ
խոհելը
Ի վրեժ սըլանամ:
ՈՒՐ.— Այո, տեսնում եմ, վոր զգայուն ես.
Հեզգ կըլինեիր քան այս ճարպիկ խոտը,
Վոր հանդստորեն արմատ է ձըգում Լեթեյի
ափին,
Թե չըհուզվեիր: Արդ, լսիր, Համլետ.
Լուր են տարածել, թե պարտեզիս մեջ քընած
մի ջոգիս
Ոձ է ինձ խայթել: Ամբողջ Դանիայի ականջն
այս կերպով
Մահվանըս ձևի շինծու պատմութեյամբ
մոլորեցված է.
Բայց դու իմացիր, ազնիվ պատանի.
Ինձ խայթող ոձը նա է, վոր հիմա իմ թագն է
կըրում:
ՀԱՄ.— Մարզարե հոգիս, հորեղբայրս...
ՈՒՐ.— Այո, այդ շնացող, ապիրատ լիրբը
Իր ճարտար խելքի կախարդանքներով է նենգ
ձիրքերով
— Անեծք այն խելքին և այն ձիրքերին,

Վոր այս աստիճան պորուբթյուն ունին
մոլորեցնելու—
Իր ամոթալի ցանկամոլության համամիտ արած
Աբուաքուստայնակես առաքինացուց թագուհուս
կամքը։
Համլետ, ինչպիսի մի անկում եր այդ,
Ինձնից, վորի սերն այնպես ալնիլ եր,
Վոր մնում եր միշտ իմ ամուսնական ուխտից
անբաժան,
Ինձնից վար ընկնել և ստորանալ մի ապիրատի,
Վորի ընտրուր արժանիքները այնքան խեղճ
եյին
Ինձ հետ բաղդատած։
Բայց ինչպես յերբեք առաքինուբթյունը չի
Թուլանա
Թեկուզ տուխանքը յերկնային դեմքով նըրան
տարփածե,
Պաշտուսուբթյունն էլ, թեկուզ լուսափա՛ռ հրեշտակի
կցվի,
Ետա կըհափեննա յերկնային ճահճից,
Յեվ լեշի վըրա ճարտակ կըվինտուռե։
Բայց կաց, զգում եմ վաղորդյան այուզը.
Կարճ պետք և խոսեմ։ Այնինչ պարտեզում,
կեսորից հետո,
Ըստ ամենայա իմ սովորուբթյան քընած եյի
յես,
Ապահով ժամիս՝ հորեղբայրդ գալիս մտանում
և ինձ,
Անիծյալ բանդի քամուկը լցրած մի սրվակի
մեջ,

Ցեվ բորոտաբեր հյուբը թափում ե իմ
ականջներուս.
Ցեվ ան ատելյան թշնամի յե դա մարդու
արյան հետ,
Վոր այնպես արագ ինչպես անդիկը՝
վազում և մարմնի բնական անցքերով և
բավիղներով,
Ցեվ բոպեական իր ներգործությամբ
թանձրացընում և
Մարդկային առողջ և նոսր արյունը.
Նույնը պատահեց և իմ արյան հետ,
Ցեվ հանկարծահաս մի բորոտություն թևի
տըվավ ղրսից,
Ցեվ գարշ ու պաղիր կեղեվով պատեց վողորկ
մարմինըս,
Դազարոսի պես Աբրահամ՝ քընի մեջ մի յեղբոր
ձեռքով
Զրկվեցա կյանքից, թագից, թագուհուց.
Ֆաղվեցա մեղքիս բողբոջանքի մեջ՝
Անհագորդ, անծես, արանց ոծությանն, հաշիվ
չըմաքրած,
Այլ ուղարկվեցա համաբաժանության
Բոլոր մեղքերըս գլխիս վրա դիպած։
ՀԱՄ.—Սոսկալի՛, սոսկալի՛, ոհ, խիստ սոսկալի։
ՈՒՐ.—Ցեթե կա քո մեջ վորդեական սեր, մի տանիր
դու այդ.
Մի թողնիր Դանիո թագավորական վեհ
անկողինը

Ի՞նչ անուն դառնա անառակության և ապիրատ
շընության.
Բայց ինչ կերպով էլ հետամուտ լինես այս
նպատակին,
Չըպետք է մոռըդ արատավորես, կամ թույլ
տաս հոգուդ,
Որ նա մորըդ դեմ դավադիր լինի.
Յերկնքի վճռին հանձնիր դու նըրան,
Յեվ այն փշերին, որ բընակվում են նըրա
կրծքի մեջ.
Թող նըրանք խոցեն ու խայթեն նըրան։ Շուտ,
մընաս բարեվ.
Լուսատըտիկը հայտնում է արդեն, որ
լուսանում է,
Յեվ սկսում է իր անպոր բոցը դունաթաի անել։
Մնաս բարեվ, մնաս բարեվ, մնաս բարեվ,
հիշիր ինձ։

Ուրվականը չքանում է

ՀԱՄ.—Ո՛վ դուք յերկնային բոլոր բանակներ, ով
յերկիր, եվ ինչ
Դըժոխքն էլ կըցեմ։ Ո՜հ, թուե՛ւ։ Ամուր կաց,
ամուր կաց, սիրտ իմ,
Յեվ դուք, իմ ջիղեր, մի պառավանաք մի
ակնթարթում,
Այլ ինձ կուռ ու պինդ կանգուն պահեցեք։
Հիշեմ քեզ. այո, դու խեղճ ուրվական,
Կըհիշեմ քանի հիշողությունը աքոռ ունենա
Այս խեղահեղված գնդակի մեջում։

Հիշեմ քեզ, այո, իմ հիշողության դրատախտակից
կըջնջեմ բոլոր փուչ աննշան պատահարները,
Գրքերի բոլոր ասացվածները, ամեն ձեվ ու
դեմք,
Անցյալի ամեն տպավորություն,
Վոր պատանության ու դիտողությունն այնտեղ
դրել են,
Ձեվ քո պատվերը կապրի մեն-մենակ
Ուղեղիս գրքի և հատորի մեջ՝
Առանց խառնվելու ավելի սաոր ուրիշ նյութի
հետ։
Ա՜հ, յերկինք վըկա... Ա՜խ, չարաղրծ կին.
Ձեվ դու, արիկա, արիկա ժպատիս, անիծյալ
արիկա,
Տետրակս պետք և հուշատետրիս այստեղ,
Թե մարդ կարող և ժպտալ, և՛ ժպտալ, և՛ արիկա
լինել.
Գոնե, վատահ եմ կարելի չե այդ Դանեմարքայում։
Գրում է

Այսպես, հորյեղբայրը, հիմա այստեղ ես.
Իմ կարգախոսը. «Մնաս բարով, մնաս բարով,
հիշիր ինձ»։

Ներս է մտնում Հորացիո և Մարցելլոս դրսից

ՀՈՐ.—Տեր իմ, տեր իմ։

Ներս են գալիս

ՄԱՐՑ.—Հե՛յ, իշխան Համլետ։
ՀՈՐ.—Յերկինքը փրկի նըրան փորձանքից։
ՀԱՄ.—Ամեն։

ՄԱՐՑ.—Եհե՜յ, հե՜յ, իշխան։
ՀԱՄ.—Եհե՜յ, հե՜յ, տպա. յեկ, թռչուն, յեկ, յեկ։
ՄԱՐՑ.—Լաւ, ինչ պատահեց, իմ աղնիւ տերը։
ՀՈՐ.—Ի՞նչ յեղաւ, իշխան։
ՀԱՄ.—Ո՜հ, պարմանալի։
ՀՈՐ.—Դեհ, պատմեցեք մեզ, սիրելի տերը։
ՀԱՄ.—Վոչ. դուք կըհայտնեք։
ՀՈՐ.—Յիշա, յերբեք, տեր իմ, յերկինքն և վկա։
ՄԱՐՑ.—Վոչ ել յես, տեր իմ։
ՀԱՄ.—Լաւ, ինչ կասեյիք, վո՛ր ապամորդու մարքսը
կանցներ...
Գաղտնի կը պահե՞ք։
ՀՈՐ. ել ՄԱՐՑ.—Կը պահենք, տեր իմ, յերկինքն և
վկա։
ՀԱՄ.—Չկա մի սրիկա ամբողջ Դանիայում։
Վոր... մի անպիտան գալաճան չլինի։
ՀՈՐ.—Պետք չըկար, տեր իմ, վոր մի ուրվականը
դերեզմանից գար
Մեզ այդ ասելու։
ՀԱՄ.—Այո, իրաւ և, իրաւունք ունիք։
Այսպես ուրեմըն, առանց այլևայլ
դարձվածքների,
Հարմար եմ գտնում, վոր ձեռք տանք իրար, և
Թողնենք գընանք,
Դուք, ուր ձեր գործը կամ ձեր փափագը
կանչում լինեն ձեզ,—
Քանի վոր անշուշտ ամեն մարդ մի գործ և
փափագ ունի՝—

Իսկ յես, խղճալիս, տեսնք, գընում եմ աղոթք
անելու։
ՀՈՐ.—Դըրանք անհեթեթ, տարտամ խոսքեր են,
սիրելի իշխան։
ՀԱՄ.—Ցավում եմ վոր ձեզ վիրավորում են, ցավում
եմ սրտանց։
ՀՈՐ.—Վիրավորելու բան չըկա, տեր իմ։
ՀԱՄ.—Կա, կա, Հորացիո, սուրբ Պատրիկ վկա,
Յեվ նուչնիսկ շատ խիստ վիրավորանք կա։
Ինչ այս տեսիլքն վերաբերում է՝ այսքանն
ասեմ ձեզ,
Թե նա բարեմիտ մի ուրվական է.
Իսկ յեթե յերբեք ուզեք իմանալ ինչ անցավ
մեր մեջ,
Լավ է, վոր պապիք ձեր այդ փափաքը, ինչպես
կարող եք։
Այժըմ, սիրելի բարեկամներըս,
Իբրեվ բարեկամ, իբրեվ դասընկեր, իբրեվ
պինակիից՝
Մի չնչին աղերս շընորհեցեք ինձ։
ՀՈՐ.—Ի՞նչ բան, ազնիվ տեր, ամենյան սիրով։
ՀԱՄ.—Ըրհայտնել, ինչ վոր այս պիշեր տեսաք։
ՀՈՐ. յեվ ՄԱՐՑ.—Ձենք հայտնի, տեր իմ։
ՀԱՄ.—Վոչ, վոչ, յերդվեցեք։
ՀՈՐ.—Ազնիվ խոսք, տեր իմ, վոչինչ չեմ հայտնի։
ՄԱՐՑ.—Վոչ հի յես, տեր իմ, պատվիս վրա յերդվում։
ՀԱՄ.—Իմ սըրիս վըրա։
ՄԱՐՑ.—Ցերդվեցինք արդեն, սիրելի իշխան։

ՀԱՄ.—Վա՛չ, սըրիս վըրա, լուրջ, սըրիս վրա։
ՈՒՐ.—(Գեօցի տակից) Յերդվեցեք։
ՀԱՄ.—Հա՜, մանչուկ. դո՞ւ յես. այդ դու՛ յես խոսում,
այ դու, աղնիվ մարդ.
—Յեկեք, լսեցի՛ք այս մարդու ձայնը գետնափորից.
Զինչեցեք յերդվել։
ՀՈՐ.—Շատ լավ ասացեք թե ինչպես յերդվենք։
ՀԱՄ.—Յերբեք չերհայտնել ձեր այս տեսածը,
Յերդվեցեք սրիս վրա։
ՈՒՐ.—(Գեօցի տակից) Յերդվեցեք։
ՀԱՄ.—Hic et ubiqqe? պետք է ուրեմըն տեղները
փոխենք։
Յեկեք, պարոննեը, ձեռքները մեկ էլ դըրեք.
սըրիս վրա.
Յերբեք չըխոսել ձեր լսածի վրա,
Յերդվեցեք սրիս վրա։
ՈՒՐ.—(Գեօցի տակից) Յերդվեցեք։
ՀԱՄ.—Լավ, ծերուկ խլուրդ. ինչպես արագ ես գետնի-
տակ գործում։
Քաջ ռահվիրա յես։—Մեկ էլ տեղ փոխենք,
բարեկամները։
ՀՈՐ.—Տեր Աստված. սա ինչ ոտարոտի յե։
ՀԱՄ.—Դու էլ ընդունիր, ինչպես կընդունեն
ոտարականին.
Վերքան բաներ կան, Հորացիո, յերկնքում և
յերկրի վրա,
Վոր յերբեվիցե փիլիսոփայությունդ չե իակ
յերազել։

— Բայց յեկեք, այտեղ, ինչպես քիչ առաջ,
յերդվեցեք կըրկին,
— Յեվ Թող ձեզ Աստված ոգնական լինի—վոր
յես վորքան ել
Անհատկանալի և տալոտինակ վարմունք
ունենամ,
Յեվ կարելի յե վոր հարմար դառնամ
Աղտառոց ձեվերը ցույց տալ արտաքուստ,
Յեվ դուք, այդպիսի պարագաներում յեթե ինձ
տեսնեք,
Չըպետք է յերբեք, այսպես թեվներըդ
խառնաձեվելով,
Յեվ կամ թե այսպես գլուխը շարժելով,
Կամ կատածելի մի խոսք ասելով,
Ինչպես «Լավ է, լավ, մենք այդ լավ կիտենք»,
Կամ «կարող եյինք յեթե ուզեյինք»,
Կամ «յեթե խոսեինք», կամ թե «մարդիկ կան,
վորոնք, կարող են»...
Կամ թե այդպիսի յերկիմիտ ակնարկով այնպես
ձեվացնեք,
Թե վորևե բան գիտեք իմ մասին:
Յերդվեցեք չանել, և Թող Աստծո
վողորմությունը
Ձեր ամենեն շատ կարող ոգնության
գա ձեզ:

Յերդվեցեք:

ՈՒՐ.—(Գետնի տակից) Յերդվեցեք:

ՀԱՄ.—Հանդարտվիր, հանդարտվիր, վրդովված վոգի:

Այսպես, պարոններ, իմ բոլոր սիրով հրաժեշտ
եմ առնում.
Յեվ ամեն ինչ վոր Համլետի նըման չքավոր
մի մարդ,
կարող և անել՝ ձեզ իր սրտի սիրն
արտահայտելու,
Ասացած կամենա, անտես չեմ անի։
Յեվկնք նևրս դընանք բոլորս միասին, և
աղաչում եմ
Դըրնք ձեր մատը ձեր շրթունքի վրա.
Ժամանակն իր շավիղից դուրս և սայթաքել. ոհ,
բախտ իմ դժխեմ,
Ինչու՞ ծընվեցա վոր հենց յես ուղղեմ։
Յեվկնք բոլորըս դընանք միասին։

Դուրս են գնում

ԱՐԱՐՎԱԾ ՑԵՐԿՐՈՐԴ

ՏՆՏԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Մի սենյակ Պոլոնիուսի տանը
Գալիս են Պոլոնիուս և Ռեյնալդո

ՊՈԼ.—Ահա, Ռեյնալդո, տուր նըրան այս վոսկն ու այս թղթերը,

ՌԵՅՆ.—Շատ բարի, տեր իմ։

ՊՈԼ.—Յեվ խելացի բան արած կըլինես, բարի Ռեյնալդո,
Յեթե նախքան թե նըրան այցելես՝
Հարց ու փորձ անես նրա վարքի մասին։

ՌԵՅՆ.—Տեր իմ, այդպես էլ մտադիր եյի։

ՊՈԼ.—Հա, լավ ասացիր. շատ լավ ասացիր։ Ինձ նայիր, պարոն,
Նախ տեղեկացիր թե Փարիզի մեջ ինչ
Դանիացիք կան,
Յեվ ինչպես, և ով, ինչ միջոցներով, և ուր են ապրում.
Ի՛նչ ընկերություն, և վարքան ծախքով,
Յեվ յերբ այսպիսի վոլոր ու մոլոր քո
հարցուփորձով

Տեսնես, վոր նըրանք ծանոթ են վորդուս,
Այդպես ավելի մոտ կըգաս խնդրին,
Քան թե ուղղակի հարցումներ տալով։
Ցույց տուր, վորպես թե հարեվանցորեն ծանոթ
ես իր հետ.
Որինակ, այսպես, «Ծանոթ եմ հոր հետ,
ընկերների հետ,
Մասամբ էլ իր հետ»։ Հասկացար, Ռեյնալդո։

ՌԵՅՆ.— Այո, լավ, տեր իմ։

ՊՈԼ.— «Մասամբ էլ իր հետ», «բայց», կասես, «վոչ շատ».
«Թե իմ ասածն է, շատ պիժն է», կասես։
«Այսպես է, այնպես»։
Հետո պիր վըրան ինչ շինծու բաներ, վոր
հարմար դատես.
Բայց վոչ այնպիսի խայտառակ մի բան, վոր
արատ բերե.
Զգուշ կաց դրանից. այլ միայն, պարոն,
Այնպիսի շըվայտ, խոլ, սովորական
մոլորություններ,
Վոր ջահելության և ազատության.
Ծանոթ ու հայտնի ընկերներն են միշտ։

ՌԵՅՆ.— Ինչպես թուղթ խաղալ։

ՊՈԼ.— Այո, կամ խմել, կամ զինամարտել, հայհոյել, կռվել,
Պոռնիկներ պահել. մինչև այսքանը կարող ես
գնալ։

ՌԵՅՆ.— Տեր իմ, դա նըրան անպատիվ կանե։

ՊՈԼ.— Ջե, հոգիս վկա.

Մխայն թե պետք և մեղապրանքներըդ քիչ
բարեխառնես.
Պետք չե այնպիսի խայտառակ մի բան
վերապրես նըրան,
Վորպես թե իրավ նա հակառակ և
անժուժկալությանն.
Վոչ, այդ չեմ ուզում. այլ պետք և այնպես
ճարտար արվեստով
Դուրս բերես նըրա թերությունները,
Վոր ապատության արատները թըվան,
Կըրակոտ վոգու բոցն ու պոռթկումը,
Դեռ անզուսպ այրան վայրենությունը,
Վոր գըոհ և տալիս ամեն մարդու մեջ։
ՌԵՅՆ.—Բայց, ազնիվ տերըս...
ՊՈԼ.—Կասես, ինչ հարկ կա այդպես վարվելու
ՌԵՅՆ.—Այո, կուզեյի հենց այդ իմանալ։
ՊՈԼ.—Լավ, պարոն, այս և իմ ծըրագիրը.
Ցեվ հաճոդված եմ, դա թուլյատրելի
վարպետություն և.
Մինչդեռ դու այդպես թեթև հանցանքներ
ձգես վորպես վրա,
Ինչպես արատներ, վոր գործածումից լինեն
պոյացած,
Բո խոսակիցը, վորից ուզում ես խոսք քաշել,
ուշ դիր,
Ցեթե չերբևե քո ամբաստանած չերխտասարդին
Ինչ առաջ ասված հանցանքների մեջ նկատած
լինի՝
Վատահ կաց, խոսքիդ այսպես վերջ կըտա.

«Հարպիելը պարոնա, կամ թե «բարեկամ», կամ «աղնիվ պարոն»

Նայելով յերկիրի հարգանքի վոճին և ամարդու դիրքին

ՌԵՅՆ.—Շատ բարի, տեր իմ։

ՊՈԼ.—Ցավ հետո, պարոն, նա կասե... կասե... ինչ եյի ասում։

Հա, խաչը վկա, ասում եյի թե... խոսքըս ծռեր ընդացք։

ՌԵՅՆ.—Ասում եյիք թե «Այսպես վերջ կտա», «Հարպիելի պարոն», կամ թե «բարեկամ», կամ «աղնիվ պարոն»։

ՊՈԼ.—«Այսպես վերջ կտա», ճիշտ ե, միտս յեկավ։ Այսպես կասե ինձ «յես այդ պարոնին լավ ճանաչում եմ։

Հենց յերեկ տեսա, կամ թե անցյալ որ, կամ թե այսինչ որ, այն ինչ մարդու հետ, կամ թե այսինչ տեղ, ինչպես ասում եր, նա թուղթ եր խաղում։

կամ թե այսինչ տեղ հարբած ընկած եր, կամ թե այնինչ տեղ թենիս խաղալիս կլուխի եր ատրճել։

կամ դուցե կասե «Տեսա յերբ մտավ մի վաճառատուն»։

Ուզում եմ ասել վատահամբավ տուն, և այլն, հասկացար։

Ջո ասում խայծը այսպես կլըռնե ճշմարտության ձուկը։

Յեվ ահա այսպես մենք խելացիներս ու
վարպետներըս
Կարողանում ենք խոտոր հարցերով և շող
փորձերով
Անուղղությունից ուղղություն գտնել.
Նույնպես էլ և դու իմ սուտ ձևով և
խորհուրդներով
Կարող կըլինես դուրս բերել վորդուս
վորպիսությունը։

Հասկացար միտքս։

ՌԵՅՆ.—Հասկացա, տեր իմ։

ՊՈԼ.—Բարի ճանապարհ, և Աստված քո հետ։

ՌԵՅՆ.—Շընորհակալ եմ։

ՊՈԼ.—Աչքովըդ դիտիր նըրա հակումը։

ՌԵՅՆ.—Այո, ապնիվ տեր։

ՊՈԼ.—Յեվ թող տուր, վոր նա իր մուղիկն ածե։

ՌԵՅՆ. —Շատ բարի, տեր իմ։

ՊՈԼ.—Բարի ճանապարհ։

Ռեյնալդոն գնում է, նորա է մտնում Ոֆելիան

Ի՞նչ կա, Ոֆելիա, ինչ է պատահել։

ՈՖ.—Ա՜հ, հայր իմ, հայր իմ, ահագին վախեցա։

ՊՈԼ.—Ի՞նչ է պատահել, ի սեր աստուծո։

ՈՖ.—Տեր իմ, սենյակումս կար եկի անուս,
Ձերը իշխան Համլետ՝ բաճկոնի կապերն ամբողջ
արձակած,
Առանց գլխարկի, և գուլպաները աստիկ
կեղտոտած,
Անկապ, կախ ընկած մինչև վոտքերը,

*Իր շապկից գուռնաս, յերկու ծնկերը իրար
բաղխելեն,
Յեվ մի այնպիսի խղճալի նայվածք իր աչքերի
մեջ,
Կարծես դըժոխքից արձակված լիներ
Արհավիրքները պատմելու համար՝ յեկավ իմ
առաջ։*

ՊՈՂ.—Ջի սերուց գժված։

ՈՉ.—Չգիտեմ, տեր իմ.

*Բայց անկեղծն ասած, շատ եմ վախենում, վոր
այդպես լինի։*

ՊՈՂ.—Յեվ քեզ ինչ ասաց։

*ՈՉ.—Չեռքիս գաստակից բռնեց, պինդ պահեց,
Յեվ իր բազուկի հետաքրքրությամբ հետ-հետ
դընալով
Յեվ իր մյուս ձեռքը այսպես դընելով ուսքերի
վըրա՝
Սկսեց այնպես յերեսըս դննել,
Վորպես թե ուզեր պատկերըս քաշել.
Յեվ յերկար այսպես նա կանգնած մընաց.
Ի վերջո, թեվըս մի քիչ ցնցելով
Յեվ յերեք անգամ այսպես գըլուխը վերեվ
տանելով՝
Այնպիսի մի խոր ու սրտաճմլիկ հառաչ
արձակեց.
Վոր կարծես թե այդ ջարդից ու փշրից նըրա
վողջ կազմ,
Յեվ նըրա կյանքին վերջ տըվավ մեկեն։ Այդ
անելուց հետո*

Ձեռքըս բաց թողից և գլուխը շրջած էր ուսի վրա՝
Կարծես պտտում եր իր ճանապարհը առանց աչքերին,
Յետ առանց նըրանց ժամադակութեան դռնից դուրս դընաց,
Մինչև վերջ նայվածքն իմ վրա հառած։
ՊՈԼ.—Յետ ինձ հետ գնանք. ուզում եմ կերթալ թաղավորի մոտ.
Դա սիրտ բուերն հափշտակումն է,
Վորի թունդ թափը հենց էնքն է պատռում իր կործանիքը,
Յետ կամքը մղում դեպի հուսահատ ձեռնարկութեւնները,
Ինչպես ամեն կերք այս աշխարհի մեջ,
Վոր բռնանում է մեր հոգու վրա։ Սատիկ ցավում եմ։
Սրտիդ վերջերը նըրան վորևէ լիուտ բան ես տանք
ՈՁ.—Վոչ, բարի հայր իմ, մեռայն, ինչպես ինձ պատվիրել եյիք,
Իր նամակները հետ ուղարկեցի,
Յետ թուղթ չըտվի, վոր ինձ այցելու
ՊՈԼ.—Հենց դա է նըրան այսպես խենթացրել.
ցավում եմ սատիկ,
Վոր ավելի լավ նախապատրաստութեամբ և դատողութեամբ
Չեմ դիտել նըրան, վախենում եյի

Թե նըրա կողմից դա մի քըմայք եր,
Յեվ կամենում եր քեղ անբախտացնել։
Անիծված լինեն իմ կասկածները։
Յերկինքը վկա, այնքան հատուկ և մեր
ծերուԹյանը
Մեր կասկածները շատ հեռու մղել,
Վորքան հատուկ և դեռահասներին անխոհեմ
լինել։
Գըննանք միասին Թագավորի մոտ.
Պետք և այդ մասին նըրան լուր տրվի.
Ինչ վոր ծածկելը մեզ շատ ավելի գըլխացավ
կըտա,
Քան Թե հայտնելը՝ դժկամուԹյուն։

Գնում են

ՏԵՍԱՐԱՆ ԾԵՐԿՐԱՐԴ

ՓողահարուԹյուն. գալիս են Թագավորը, Թագուհին Ռոզենկրանց, Գիլդենշտեռնը և սպասավորները

ԹԱԳ.— Բարով էք յեկել, սիրելի Ռոզենկրանց, և դուք, Գիլդենշտեռն։
Բայց նըրանից, վոր ձեր տեսուԹյան կարոտել
եյինք,
Պետք ունինք նաև ձեր աջակցուԹյան.
Այս պատճառով և, վոր ձեզ շտապով կանչեցինք
այստեղ։
Անշուշտ Համլետի այլայլոխտումը լսած կըլինեք,
Թող այդպես ասենք. քանի վոր, էրևակ, վոչ
նեըքին մարդը,
Վոչ էլ արտաքինն այն և, ինչ վոր եր,

Թե ինչ ուրիշ բան, բայի հար մահից,
Զրկել և նըրան գիտակցութ յունից,
Յերեվակայել անգամ չեմ կարող։
Այժմ ազաչում իմ ձեզ յերկուսիդ էլ,
Վոր մանկութ յունից նըրա հետ ձեվաւոր
գաւտնարաքվել եք
Յեվ ընտանի յեք նըրա ընութ յան և բարք ու
վարքին,
Վոր բարեհաճեք կարճ ժամանակով գալ
հանգստանալ
Մեր արքունիքում. և այդպես, շնորհիվ ձեր
ընկերութ յան,
Նրան հրապուրեք զբոսանքների,
Յեվ ոգեվիլով պատճառ առիթից, յերբ հընար
լինի,
Հաւատացած թե ինչ մեղ անհայտ մի բան
տանջում և նըրան,
Վորին ձար անել կարողանայինք։
Թ.Ա.Գ.Հ.—Ազնիվ պարոններ, հաճախ ձեր մասին նա
խոսք և արել,
Յեվ, հաստատ պիտեմ, չըկա աշխարհում յերկու
ուրիշ մարդ,
Վորոնց ավելի նըվիրված լինի թե հաճո յե
ձեզ
Այնքան սիրալիր և բարյացակամ լինել դեպի
մեզ,
Վոր մի ժանանակ հյուր մընաք մեր մոտ
Յեվ մեր հույսերի իրականացման աջակից լինեք՝

Ասա ձեր այցը կլսատանա այնքան շընորհակալիք,
Վորքան վայել է մի թագավորի բարեհիշոսթյան։
ՌՈԶ.—Ձեր մեծոսթյունքը՝ վեհապետական այն
իշխանոսթյամբ,
Վոր ունին մեր վրա՝ կարող են իրենց առել
հաճույքը
Պարտադիր անել, վոչ իբրև խնդրանք, այլ
իբրև հրաման։
ԳԻԼԴ.—Բայց հնազանդ ենք ձեզ, և ահա այստեղ
պարտավորվում ենք
Դընել մեր բոլոր ծառայոսթյունը ձեր վոտքի
առաջ,
Յևլ ապատում ենք ձեր հրամաններին։
ԹԱԳ.—Շնորհակալ ենք, ազնիվ Ռոզենկրանց, և ձեզ,
Գիլդենշտեռն։
ԹԱԳՀ.—Շնորհակալ ենք, ազնիվ Գիլդենշտեռն, և
ձեզ, Ռոզենկրանց,
Յևլ խնդրում եմ ձեզ իսկույն այցելիք խիստ
փոխված վորդուս։
— Հէյ, ջեկիք, տարիք այս պարոններին
վորդուս սենյակը։
ԳԻԼԴ.—Տա աստված վոր մեր ներկայոսթյունը և
ձեռնարկները
Ներան ոգտակար և հաճո լինեն։
ԹԱԳՀ.—Ամեն։

Ռոզենկրանց Գիլդենշտեռնը և մի քանի
Պալատականները գնում են
Գալիս է Պոլոնիուս

ՊՈԼ.—Վաղորմած տեր իմ, ճեր դեսպաններըը
զոհունակութեամբ
վերադարձել են Նորվեգիայից։
ԹԱԳ.—Միշտ հայը եք յեղել բարի լուրերի։
ՊՈԼ.—Իսկապես, տեր իմ. թող վեհապետը հավատամի
լինի,
Որ նըվիրում եմ հոգիս ու պարտքըս,
Մեկը՝ Աստըծուս, մյուսը վաղորմած իմ
թագավորին։
Ցեխ, համոզված եմ,—յեթե ուղեղըս ընդունակ
է դեռ
Վարչապետութեան շավղով ամեն հետք
Սյնպես անվըրդով հետապնդելու, ինչպես առաջ
եր,—
Որ յես գտել եմ Համլետի ցավի աղբյուրը
պատճառը։
ԹԱԳ.—Աստ, աստ շուտ. խիստ անհամբեր եմ լսելու
համար։
ՊՈԼ.—Նախ դեսպաններին ունկնդրութեան տվեք.
Պետք է իմ լուրը այս մեծ խնջույքի պատուրը
լինի։
ԹԱԳ.—Ընտանեք նըրանց պատվաստիրեցեք, հետո
ներս բերեք։

Գնում է Պոլոնիուս

Սիրելի Գերտրուդ, նա ինձ ստում է թե
հասկացել է
Ձո վրդու լուրը անհանգստութեան բուն իսկ
աղբյուրը։

ԹԱԳԴ. — Իսկ յես կարծում եմ, որ մեկ դլխավոր
պատճառ կա մեյն,
Այն է, որ մահը և մեր խիստ հալածող
ամուսնանալը։

ԹԱԳ. — Այո, քայց պետք է նըրան լավ ճանչենք։
Մտնում է Պոլոնիուս, Վոլտիմանդի և Կոռնելիուսի հետ
Ջեզ բարի գալուստ, բարեկամներս.
Ասա, Վոլտիմանդ, մեր Նորվեգիայի յեղբորից
ինչ լուր։

ՎՈԼ. — Փոխադարձ վողջույն և շատ մաղթանքներ։
Սկզբից յեվեթ՝ նա մարդ ուղարկեց, որ
դադարեցնեն
Իր յեղբորվորդու զորահավաքը, որը, կարծում եր
Թե պատրաստվում է Լեհաստանի դեմ, քայց
յերբ ստուգեց,
Տեսավ որ էրոք դա ուղղված եր ձեր
բարձրության դեմ։
Սաստիկ վշտացած, որ այնպես նըրա
հիվանդությունը,
Տկարությունը և ծերությունը շահագործվել են՝
Ձերբակալության հրաման արձակեց
Ֆորտինբրասի դեմ.
Իսկ սա, կարճ ասեմ, հնազանդվեց իսկույն,
Ցավ քաշավորից խիստ հանդիմանվեց,
Ցավ, վերջը, յերդվեց հորեղբարն առաջ, որ
յերբեք այլևս
Զինք չը վերցընե ձեր մեծության դեմ։
Այս բանի վըրա ծերուկ Նորվեգը շատ
ուրախացած՝

Ձերիք հազար կրոն տարեկան ոռճիկ շընորհեց
նըրան,
Ձեվ պաշտոն հանձնեց վոր իր հավաքած
բոլոր բանակը,
Այնպես ինչպես կա, այժըմ գործածե
Լեհաստանի դեմ,
Խնդրելով ձեզնից, ինչպես կըտեսանեք իր այս
նամակից,
Տալով մի նամակ
Վոր նըրա գործքին ազատ անցք տըվի ձեր
յերկրի միջից՝
Ապահովության և արտոնության այն
պայմաններուվ,
Վորոնք գրված են այդ նամակի մեջ։
ԹԱԳ.—Հավան ենք դրան,
Ձեվ պատեհ ժամ կարդալուց հետո՝
պատասխան կտանք,
Ձեվ կըմտածենք այդ խնդրի վըրա։
Ձեր արդյունավոր ջանքերի համար
շնորհակալ ենք.
Այժմ հանգստացեք. այս գիշեր ձեզ հետ լավ
խնջույք կանենք։
Բարի վերադարձ։
Վոլսիմանդ և Կոռնելիուս դուրս են գնում
ՊՈԼ.—Ահա այս գործն էլ հաջող վերջացավ։
Իմ տեր վեհապետ, և դուք, տիրուհի,
Տըրամաբանել, թե վեհափառը ինչ պետք է լինի,
Թե ինչ է պարտքը և ինչու համար ցերեկը
ցերեկ,

Գիշերը գիշեր, և ժամանակը՝ ժամանակ է,
Կըլիներ վատանել գիշերը, յերեկն ու ժամանակըւ
Այժըմ, քանի վոր համառոտուեը խոսքի հոդվածը,
Ցեվ ճապաղումը՝ նըրա անդամներն ու դլխի
զարդը,
Ցես կարճ կըխոսեմ։ Ջեր ազնիվ վորպէս
խնդրադարձած եւ
Այո, խնդրագար կարող եմ ասել.
Քանի վոր յեթե բուն խնդութեյունը վորակել
ուզենք,
Ի՞նչ է այն, թե վոչ՝ լինել վոչ այլ ինչ, թե վոչ
խնդրագար։

Բայց թողնենք դեռ այդ։

ԹՍԳՀ.—Սվելի նյութ առաք և պակաս արվեստ։

ՊՈԼ.—Յերբվուեմ եմ, տիկին, վոր ըընավ արվեստ չեմ
բանեցընում։

Այն, վոր նա խենթ է, ճիշտ է, վոր ճիշտ է,
շատ յավալի յե։
Ցեվ յավալի յե, վոր այդպես ճիշտ է.
Սհա մի անմիտ ըրջաբանութեյուն.
Բայց այդ ել թողնենք. ըընավ չեմ ուզում
արվեստ բանեցնել։
Ուրեմն ընդունենք, վոր խնդրագար է.
Այժըմ մնում է այս հետեվանքի պատճառը
գտնել։

Կամ լավ է ասել, այս թևթեվանքի.
Քանի վոր անշուշտ այդ թևթեվական
հետեվանքն անգամ

Իր պատճառն ունի. մընում և ուրիշն, և
մնացորդն այս է...
Լավ ուշ դարձըրեք. յես մի դուստր ունիմ,
— Ոնիմ, այսինքն քանի նա իմս է—
Վոր, վորպիսական պարտականությամբ և
հնազանդությամբ,
Լավ մոխկ տըվեք, այս բանն ինձ տըվաւէ,
Ծույց և տալիս մի նամակ
Այժմ ամփոփեցեք և յեղրակացրեք,
Կարդում է
Առ իմ յերիցայիս, ճագեվիս պատճեի,
չհանցատագեղ ոցեղիաց,
Ինչ անպիտան վոճ, հատարակ վոճ է, չհնցատագեղ.
շատ հատարակ վոճ է, բայց հիմա կլսեք.
այցապես.
Կարդում է
«Իր սքանչելի սպիտակ կուրծքին...
ՔԱԳՀ.— Համլետն է գրել
ՊՈԼ.— Սիրելի տիրուհիս, մի քիչ սպասեք, բոլորը
կասեմ
Կարդում է
Կասկածիր աստղերի փայլելու վրա,
Կասկածիր արեվի շրջելու վրա,
Ճշմարտության վրա նույնիսկ կասկածիր,
Բայց սիրուս վրա դու մի կասկածիր.
Սիրելի Ոֆելիա, վոտանավոր գրելու մեջ անվարժ եմ.
հեծեծանքներս չափաբերելու արվեստը տրված չե ինձ,
բայց վոր քեզ ամեն քանից ավելի յեմ սիրում, ոհ, ամեն
քանից ավելի, հավատա ղըրան, մնաս բարով.

Ընդ միշտ քույդ, ամենաբնական ոգիով, վոչչափ վոր այս մեքենան ինձ պատկանի՝

համեստ:

Դուստրըս ամենայն հրճուզանդությամբ ցույց տըվավ ինձ այս.

Ցեվ դեռ ավելին՝ համլետի բոլոր սիրախոսանքը, Տեղը, ժամանակն ու միջոցները, հանձնեց ականջիս։

թՄԴ.—Իսկ ինքն ինչպես և այդ սերն ընդունել։

ՊՈԼ.—Ի՞նչ կարծիք ունիք արդյոք իմ մասին։

թՄԴ.—Վոր հավատարիմ և ազնիվ մարդ եք։

ՊՈԼ.—Հենց այդ կուզեյի ձեզ ապացուցել։ Ի՞նչ կըկարծեյիք,

ցեթե այդ սերը տեսած լինեյի, ցերբ թեվ եր հանում,

— ցեվ պետք և ասեմ, թե արդեն յես այդ նկատել եյի

Ոֆելիկըս չասած,—ի՞նչ կըկարծեյիք, կամ ինչ կըկարծեր

իմ այս սիրելի վեհապետուհիս և ձեր թագուհին,

թե թղթակալի կամ պրատեզանի դերն ստանձնեյի,

կամ սրտիս աչքը փակած լինեյի, լուիկ ու ժնջիկ,

կամ թե անտարբեր նայած լինեյի այս սիրո վրա։

Ի՞նչ կխորհեյիք։ Վոչ, յես ուղղակի գործի դիմեցի,

Եվ որիորդիս այսպես խոսեցի.
«Իշխան Համլետը թագավորապն և, բարձր և քո
աստղից.
Ձերբնք այդ բանը չըպետք և լինի»։
Հետո յես նըրան խրատներ տըվի,
Որ խուլ սա նըրա այցելությունից,
Ոչ նամակ առնե, և ոչ ընծաներ.
Այսպես վարվելով՝ նա իմ խորհուրդի պտուղը
քաղեց,
Համլետ մերժվելով, շատ չերկարացնեմ,
Ձեռնթափա յեղավ մելամաղձության, և հետո
ծոմի,
Հետո անքնության, հետո՝ թուլության,
Եվ կամաց-կամաց թևթևմտության, և այս
վայրեջքով
Նա յեկավ հասավ այն խենթությանը, որից
տանջվում է,
Եվ որի վըրա վողբում ենք մենք բոլորս։
ԹԱԳ.—Ա՞յդպես եք կարծում։
ԹԱԳՀ.—Կարող և լինել. հավանական է։
ՊՈԼ.—Ասացեք խնդրեմ, յեղած և յերբեք,
Որ ասած լինեմ ղըրալիանապես «Այս բանն
այսպես է»,
Եվ հակառակը պատահած լինի։
ԹԱԳ.—Ոչ, որքան գիտեմ։
ՊՈԼ.—(Իր գլուխը յեվ ուսը ցույց տալով) Առեք այս
սրանից, թե ճիշտ չը լինի։
Թե հանդամանքներն առաջնորդեն ինձ՝

Ցեա դուրս կըըերեմ, թե ճշմարտությունն ուր է թաղնըված,
Թևպետ և յերկըրի արգանդի մեջն էլ ծածկըված լինի։

ԹՍԳ.—Ի՞նչպես կարող ենք ավելի ստուգել։
ՊՈԼ.—Գիտեք, յերբեմըն ամբողջ ժամերով զբոսնում եմ նա

Այտեղ, պալքի մեջ։
ԹՍԳ.—Այո, այդպես եւ
ՊՈԼ.—Մի որ այդ ժամին դուստրըս ընըրա հետ մենակ կըթողնեմ.

Գետք և դուք և յես միևնույն ժամին թաքնված լինենք
Արբասի յետեվ, վոր դիտենք ընըրանց տեսակցությունը։
Թե ճիշտ չը լինի վոր նա աղջկաս սիրահարված է,
Յեվ հենց դըրանից խելքը կորցըրած,
Ջուր և ուրեմըն վոր յես պետության ոչնական լինեմ,

Այլ թող ափարակ և սայլեր պահեմ։
ԹՍԳ.—Շատ լավ, կըփորձենք։
ԹՍԳՀ.—Բայց տեսեք ինչպես խեղճ վոզորմելին գալիս և տրտում

Մի բան կարդալիս։
ՊՈԼ.—Հեռացեք, խնդրեմ, յերկուսդ էլ, թողեք յես խոսեմ իր հետ։
Թագավորը, թագուհին և պալատականները հեռանում են.

Գալիս և Համլետ՝ մի քան կարդալով

ՊՈԼ.—Թուլ տըվեք, խնդրեմ, ինչպես և արդյոք իմ բարի իշխան

Համլետը

ՀԱՄ.—Լավ, փառք աստուծու

ՊՈԼ.—Ճանաչո՞ւմ եք ինձ, տեր իմ

ՀԱՄ.—Շատ լավ. դուք ձկնավաճառ եք

ՊՈԼ.—Վոչ, տեր իմ

ՀԱՄ.—Ցերեկի թե մի ձկնավաճառի չուի պարկեշտ մարդ լինելիքը

ՊՈԼ.—Պարկեշտ. տեր իմ

ՀԱՄ.—Այո, պարոն. այս օրվան որը պարկեշտ մարդ լինել՝ նշանակում է տասը հազարից մեկը լինել

ՊՈԼ.—Իրավ ես, տեր իմ

ՀԱՄ.—Որովհետև, եթե արեգակը մի ատելած շան մեջ վորդներ և

Ծնեցնում, նա, վոր աստված լինելով հանդերձ՝ լեշ և համբուրում... դու աղջիկ ունես

ՊՈԼ.—Այո, տեր իմ

ՀԱՄ.—Ըլթողնես վոր արեվի տակ մանդ գա. հղացումը որհնություն և, բայց վոչ թե այնպես, ինչպես աղջիկդ կարող և հղանալ... բարեկամ, աչքդ բաց արա

ՊՈԼ.—(Առանձին) Ի՞նչ և ուզում ասել. եվ աղջկաս յերգն և յերգում. Բայց սկզբում չըճանաչեց ինձ. ասաց ձկնավաճառ եմ. բանը բանից անցել և. իրավ

և վոր յերիտասարդ ժամանակս իմ դլխիս ել սերը շատ փորձանք բերից. քիչ եր մնացել հենց այս վիճակին ընկնելի. նորեն խոսեմ հետը— Ի՞նչ եք կարդում, տեր իմ։

ՀԱՄ.—Բառեր, բառեր, բառեր։

ՊՈԼ.—Նյութն ի՞նչ է, տեր իմ։

ՀԱՄ.—Ի՞նչ բանի նյութը։

ՊՈԼ.—Չեր կարդացածի նյութը, տեր իմ։

ՀԱՄ.—Զրպարտություններ, պարոն. վորովհետև այս յերդիծարան թշվառականն ասում է այստեղ, թե ծեր մարդիկ սպիտակ մորուք ունին, և կնճռոտ յերես, թե նրանց աչքերից մի տեսակ թանձր ռետին կամ սալորենու խեժ է ծորում, թե ուղեղի մեծ պակասություն ունին, միանգամայն շատ թույլ վիսներ։ Թեև այդ բոլորին յես շատ զրեղապես և կարողապես հավատում եմ, պարոն, բայց և այնպես կարծում եմ, թե պարկեշտություն չե այդ տեսակ բաները գրի առնել, վորովհետև դուք ել, պարոն, մի որ իմ տարիքին կհասնեք, յերեք խեցգետնի նման կարողանայիք դեպի հետ գնալ։

ՊՈԼ.—(Առանձին) Թեև խելոքություն է, բայց մեթոդ կա մեջը։— Տեր իմ, չե՞ք կամենում մի քիչ այս ողից դուրս գնալ։

ՀԱՄ.—Դեպի գերեզմանս։

ՊՈԼ.—Ճիշտ է, գերեզմանն ոգից դուրս է։ (Առանձին) Ի՜նչ պես իմաստալից են յերբեմն իր պատասխաննե-

րը. մի բախտ և դա, որ հաճախ վիճակվում է խե-
լապարութեան, այն ինչ դատողութիւնը և վողջ-
մտութիւնը չեյին կարող այնպես հաչող հղա-
նալ։ Թողնեմ գնամ, և մի ճար մտածեմ, որ
սրան և աղչկաս իրարու հանդիպեցնեմ։—Հար-
գելի տերս, ամենայն խոնարհութեամբ հրաժեշտ
եմ խնդրում։

ՀԱՄ.—*Վոչինչ չեյիք կարող խնդրել ինձնից, պարոն,*
որ ավելի հոժարութեամբ տայի, քացի իմ կյան-
քից, քացի իմ կյանքից, քացի իմ կյանքից։

ՊՈԼ.—*Մնաք բարով, իշխան։*

ՀԱՄ.—*Ա՛խ այս ձանձրալի զառամած հիմարները։*

Գալիս են Ռոզենկրանց և Գիլդենշտեռն

ՊՈԼ.—*Իշխան Համլետին եք փնտռում. ահա այնտեղ է։*

ՌՈԶ.—*Աստված ձեզ հետ, տեր իմ։*

Պոլոնիուս դուրս է գնում

ԳԻԼԴ.—*Հարգելի իշխան։*

ՌՈԶ.—*Ամենաախրելի տեր իմ։*

ՀԱՄ.—*Բարեվ, պատվական բարեկամներ. ինչպես ես,*
Գիլդենշտեռն։
Ա՛հ, Ռոզենկրանց, ինչպես եք, տղերք։

ՌՈԶ.—*Աշխարհի աննշան զավակների պես։*

ԳԻԼԴ.—*Բախտավոր նրանում, որ շատ բախտավոր*
չենք։ Բախտի գլխարկի մեջտեղի կոճակը չենք։

ՀԱՄ.—*Վոչ ել նրա կոշկի ներբանը։*

ՌՈԶ.—*Վոչ ել այն, տեր իմ։*

ՀԱՄ—*Ուրեմն ապրում եք նրա գոտու մոտերքում, կամ*
թե նրա շնորհի կենտրոնում։

ԳԻԼԴ.—Ճիշտ է, շատ մտերիմ ենք նրա հետ։
ՀԱՄ.—Բախտի թագուհեն մասերի հետ. շատ ճիշտ է. նա հո պառնիկ է։ Ի՞նչ լուր։
ՌՈՋ.—Վոչինչ, տեր իմ. այն միայն, վոր աշխարհը պարկեշտացել է։
ՀԱՄ.—Ուրեմն վերջին դատաստանը մոտեցել է. բայց ձեր լուրը ճիշտ չէ. թույլ տվեք վորոշ հարցնեմ. բախտին ինչ վատություն եք արել վոր նա ձեզ բանտ է ուղարկել այստեղ։
ԳԻԼԴ.—Բանտ, տեր իմ։
ՀԱՄ.—Դանեմարքան հո բանտ է։
ՌՈՋ.—Ուրեմն աշխարհն էլ մի բանտ է։
ՀԱՄ.—Ճիվ որինավոր բանտ, վորի մեջ կան զանազան արգելանոցներ, փակարաններ և նկուղներ, իսկ Դանեմարքան ամենեն վատերից մեկն է։
ՌՈՋ.—Մենք այդպես չենք մտածում, տեր իմ։
ՀԱՄ.—Լավ, ուրեմն ձեզ համար բանտ չէ. վորովհետև աշխարհում վոչ լավ կա, վոչ վատ. մեր մտքին է այդպես թվում. ինձ համար բանտ է։
ՌՈՋ.—Ուրեմն ձեր փառասիրությունն է վոր Դանեմարքան ձեզ համար բանտ է դարձնում. շատ անձուկ է նա ձեր հոգու համար։
ՀԱՄ.—Ատելած իմ, յես կարող եյի մի ընկուզի կեղևի մեջ անգամ տեղավորվիլ, և ինքս ինձ անհուն տիեզերքի թագավորը համարել, միայն թե այնպես վատ յերազներ չըտեսնեյի, ինչպես այժմ։

ԳԻԼԴ.—Յեվ այդ յերազները փառասիրություն են, վորովհետև փառասիրության բուն իսկ եյությունը յերազի սավերն և սոսկ։

ՀԱՄ.—Յերազն ինքը սավեր եմիայն։

ՌՈԶ.—Ճիշտ, և փառասիրությունը այնքան թեթեվ և ոդային բան եմ համարում, վոր կարող եմ ասել թե նա սավերի սավերն և միայն։

ՀԱՄ.—Ուրեմն մեր մուրացկաններն իրական մարմիններ են, և մեր թագավորները ու կոկոդավիլ հերոսները՝ մուրացկանների սավերները։ Ջեք ուզում աքքունիք գնանք, վորովհետև, ճիշտն ասած, չեմ կարողանում պարզ մտածել։

ՌՈԶ. յեվ ԳԻԼԴ.—Ծառա յենք ձեզ։

ՀԱՄ.—Քավ լիցի. չեմ ուզում ձեզ մյուս ծառաներիս կաբզում դասել, վորովհետև անկեղծ խոսելով, սարսափելի վատ սպասավորներ ունիմ. այլ, բարեկամության ծեծված ճանապարհով գնանք. ինչու յեք յեկել Ելսինոր։

ՌՈԶ.—Ձեզ այլի յենք յեկել, տեր իմ, ուրիշ բան չկա։

ՀԱՄ.—Յեվ ինչ չքավորն եմ յես, վոր շնորհակալության մեջ անգամ ալքատ եմ. լավ, շնորհակալ եմ. բայց ճիշտը, սիրելի բարեկամներ, իմ շնորհակալությունները մեկ սեվ փող չարժեն։ Սաայնք, ձեզ հատկապես չեն կանչել. ինքնակամ եք յեկել, ապեա այցելություն և սա։ Հայդե, անկեղծ վարվեցեք ինձ հետ, հայդե, հայդե, խոսեցեք։

ԳԻԼԴ.—Ի՞նչ ասենք, տեր իմ։

ՀԱՄ.—Ինչ վոր ուզեք, բայց վոչ խնդրից դուրս։ Ձեզ հատկապես կանչել են, գիտեմ. և ձեր աչքերի մեջ մի տեսակ խոստովանություն կա, վոր ձեր անկեղծությունը չի կարողանում թագցընել. հաստատ գիտեմ, վոր բարի թագավորը և թագուհին մարդ են ուղարկել և ձեզ կանչել են։

ՈՈՋ.—Ի՞նչ նպատակով, տեր իմ։

ՀԱՄ.—Այդ դուք պետք և ինձ ասեք. բայց կերդվեցնում եմ ձեզ հանուն մեր ընկերության, հանուն մեր պատանեկան մտերմության, հանուն մեր հարատեվ սիրո, ել ինչ ասեմ, հանուն ավելի սուրբ բաների, վորոնցով իմ լեզվից ավելի ճարտասան լեզուն կարող և ձեզ կերդվեցնել, անկեղծ ու շիտակ կեղեք ինձ հետ, արդյոք կանչել են ձեզ, թե վոչ։

ՀԱՄ.—(Առանձին Գիլդենստերնին) Ի՞նչ ես ասում։

ՀԱՄ.—(Առանձին) Հա, հա. պետք և ուրեմն աչքս ձեզ վրա բաց պահեմ։

(Բարձր)—Ցեթե սիրում եք ինձ, մի թագցնեք

ԳԻԼԴ.—Այո, տեր իմ, կանչել են մեզ։

ՀԱՄ.—Թե ինչու համար, այդ կես կասեմ, այնպես վոր կես ձեզ կանխելով դուք վոչ մի պատճիք հայտնած կեք լինի, և ձեր պատնատպահությունը դեպի թագավորը և թագուհին մի փետրի չափ անգամ թերացած չի լինի։ Վերջերս, չըգիտեմ ինչ պատճառով կես կորցրել եմ ուրախ տրամադրությունս, բոլորովին բաց եմ թողել սովո-

բական մարզանքներս, և այնպես մեխամաղձոտ եմ դարձել, վոր այս հոյակապ կատուցվածքը, երկիրը, ինձ մի ամայի հրվանդան է թվում. այս սըքանչելի ամպհովանին, յեթերքը, նայեցեք, մեր գլխին կախված այս հրաշալի յերկնակամարը, այս վեհաշուք ձեղունը՝ վոսկի կայծերով նաշխված՝ այս բոլորը աչքիս ուրիշ բան չէ, յեթե վոչ գարշ ու ժահահոտ գոլորշիների մի համագրություն ի՞նչ հրաշակերտ է մարդը. վո՛րչափ ազնիվ է նրա գատողությունը, վո՛րչափ անսահման են նրա ընդունակությունները. կազմվածքը և շարժումը վո՛րչափ բարեձեվ և հիանալի, կաց ու նխատով կարծես մի հրեշտակ. խոհանակությամբ, կարծես մի աստված. աշխարհի գեղեցկությունը. կենդանիների կատարելատիպը. այդ բոլորով հանդերձ՝ ի՞նչ է իմ աչքիս հողի այդ գերագույն գոլվածքը. մարդը չէ հիացնում ինձ. վո՛չ, վոչ էլ կինը, թեև քմծիծաղով յերևվի այդ ես ուզում ասել։

ՈՒՈՉ.—Տեր իմ, այդպիսի բան մտքովս էլ չանցավ։

ՀԱՄ.—Ուրեմն ինչո՞ւ ժպտացիր, յերբ ասացի թե մարդն ինձ չէ հիացնում։

ՈՒՈՉ.—Տեր իմ, մտածեցի վոր յեթե մարդը ձեզ չի հիացնում, ի՞նչ պատ որվա ընդունելություն են պատրաստել ձեզ մոտ այն դերասանները. մենք հիմա ճանապարհին հանդիպեցանք նրանց. գալիս են այստեղ իրենց ծառայությունն առաջարկելու

ՀԱՄ.—Թագավորի դերակատարը լավ ընդունելութիւն կըգտնէ. նորին վեհափառութիւրը ինձնից պարտ ու պատշաճ տուրք կըստանա. բախտախնդիր ապեռան իր տուրն ու վահանը իզուր գործի չի դնի. սիրահարը ձրի չի հառաչի. մեծամաղձոտին համբերութիւնը թուլ կըտրվի, վոր իր դերը վերջացնէ. միմոսը դյուրապրիտ թոքեր ունեցողներին լավ կըծիծաղացնէ, և տիկինը իր սրտի ուզածն ապատորեն կասէ. այլապես, անհանդ վատանավորի վոտքը կաղ կըմնայ։ Ի՞նչ դերասաններ են։

ՌՈՋ.—Հենց նրանք, վոր ձեզ այնքան դուր են գալիս. քաղաքի դերասանները

ՀԱՄ.—Ի՞նչ և պատահել, վոր հիմա նրանք շրջում են. չե՞ վոր կայուն բնակութիւնը ավելի ձեռնտու չէ թե համբավի տեսակետից, թե շահի կողմից։

ՌՈՋ.—Կարծեմ թե նրանց վրա դրված արգելքը վերջին նորամուծութեան պատճառով է։

ՀԱՄ.—Արդյոք նրանք նույնչափ գնահատված են, վորչափ էին քաղաքումն էյին. հաճախող շատ է լինում։

ՌՈՋ.—Ճիշտն ասած, վոչ այնքան։

ՀԱՄ.—Ի՞նչ է պատճառը, ժանգոտո՞ւ են ինչ է։

ՌՈՋ.—Վոչ, նրանց դերակատարութիւնը իր սովորական բարձրութեան վրա չէ. բայց հիմա, տեր իմ, մի խումբ չերեխաներ են թուխից դուրս չեկել, նոր ձվից չելած բազեյի ճուտեր, վորոնք

մեկ պլուխ գոռում, գոչում են, և հասարակութիւնը ընտակալորեն ծափահարում և հենց դրա համար. նրանք են այժմ որվա նորութիւնը. և նրանք այնպես վատաբանում են հասարակ բեմերը,—այդպես են կոչում սովորական թատրոններըը—որ շատ սուբ կրողներ այսոր վախենում են սպի ներեուրից, և չեն համարձակում այդ թատրոններըը հաճախել։

ՀԱՄ. —Իսկապես յերևանովը են նրանք. ով և նրանց պահում, ով և ծախքերը վճարում. մինչև այնքան ժամանակ մեյն պիտի խաղան, վորքան վոր յերգել դիտեն. իսկ հետո, յերբ իրենք էլ մեծանան և սովորական դերասաններ դառնան,—ինչ վոր շատ հավանական է, յեթե ապրուստի ուրիշ միջոց չունենան—չեն ասի, թե, գրողները նրանց ինչ վնաս են հասցրել, նրանց տախտելով իրենց իսկ ապագայի դեմ բարբառել։

ՌՈԶ. —Ճիշտն ասած, յերկու կողմերն էլ շատ աղմուկ հանեցին, իսկ ժողովուրդը մեղք չե համարում նրանց իրարու դեմ գրգռել. մի ժամանակ կար, վոր վոչ վոք թատրոնի վող չեր տա՝ յեթե բանաստեղծ ու դերասան բանը բուռնցքի չըհատցնեյին։

ՀԱՄ. —Կարելի՞ բան է։

ՌՈԶ.—Ա՛հ, այնքան է պատահել, վոր գանգեր են չախչախվել։

ՀԱՄ.—Յեվ այդ տղերքը գործը առաջ են տանում։

ՌՈԶ.—Յեվ ինչպե՜ս, տեր իմ. Հերկուլեսին էլ իր բեռան հետ միասին։

ՀԱՄ.—Չարմանալի չե, քանի վոր հորյեղբայրս ե այժմ Դանեմարքայի թագավորը. և նուլն մարդիկ վոր հոլս կենդանութեյան ժամանակ հորեղբորս վրա բերան եյին ծռում, հիմա նրա մի մանրանկարի համար քսան, քառասուն, հիսուն, նույնիսկ հարյուր դուկատ են տալիս։ Ամենը, ահա մի բան վոր բնականից դուրս ե, եթե միայն փիլիսոփայութեյունը բացատրել կարենար։

Փողերի հնչյուն դրսից։

ԳԻԼԴ.—Դերասաններն են։

ՀԱՄ.—Պարոններ, ուրախ եմ, վոր յեկել եք Ելսինոր։ Յեկեք, ձեր ձեռքը. բարի գալուստ մաղթելը քաղաքավարութեյան ձև ու ծես ե. թույլ ավեք վոր յես ել ձեզ հետ նույն ձևով վարվիմ. յեթե վոչ, իմ վարմունքը դերասաններին հետ,—վոր կանխատես ասեմ, պետք ե արտաքուստ շատ քաղաքավար լինի,—կարող ե ավելի սիրալիր թվալ, քան թե ձեզ հետ։ Բարով եք յեկել, բայց հորյեղբայրը հայրս, և հորյեղբորկին—մայրս սբ-խալվել են։

ԳԻԼԴ.—Ինչի մեջ, տեր իմ։

ՀԱՄ.—Ցես, այն ժամանակ միայն խելագար եմ, յերբ քամին հյուսիս-հյուսիս արեվմուտք ե փչում. իսկ յերբ հարավային ե—կարող եմ բազեն ճանչից զանազանել։

Նորից գալիս ե Պոլոնիուս

ՊՈԼ.—Բարեվ ձեզ, պարոններ։

ՀԱՄ.—Լսիր, Գիլդենշտեռն. (Ռոզենկրանցին) դու ել նուլնպես. ամեն մեկ ականջիս մեկ լսող. այդ

մեծ յերեխան, վոր տեսնում եք այստեղ, խանձարուրից դեռ դուրս չե յեկել:

ՌՈԶ.—Գուցե յերկրորդ անգամն և խանձարուրի մեջ ընկել. ասում են, ծնվելը յերկրորդ անգամ յերեխա չեն դառնում:

ՀԱՄ.—Կարող եմ դուշակել վոր նա հիմա կըզա դերասաննեըի գալուստն ինձ հայտնելու: Այո, պարոն, իրավունք ունիք. յերկուշաբթի առավոտն եր. ճիշտ և, այդպես եր:

ՊՈԼ.—Տեր իմ, լուր ունիմ ձեզ հաղորդելու:

ՀԱՄ.—Տեր իմ, լուր ունիմ ձեզ հաղորդելու: Յերբ Ռոսցիուս դերասան եր Հռոմմում...

ՊՈԼ.—Դերասաննեըն յեկել են, տեր իմ:

ՀԱՄ.—Բը՛զ, բը՛զ...

ՊՈԼ.—Պատվիս վրա:

ՀԱՄ.—«Ցեվ հեստ յեկավ ամեն դերասան իր եճի վրա»:

ՊՈԼ.—Աշխարհի ամենալավ դերասաննեըն են, թե՛ վոդեվրդության համար, թե՛ կատակերդության, թե՛ պատմության, հովվերդության, հովվերգա—ր զավեշտական պատմա—հովվերգական, վոդեր-գա-զավեշտա-պատմա-հովվերգական, տեսարան անբաժանելի, կամ քերթված անսահմանափակ: Սենեկան նրանց համար շատ ծանր չի լինի, վոչ ել Պլավտոսը՝ շատ թեթև: Թե՛ կանոնավորության որենքի կողմից, թե՛ ազատության տեսակետից՝ սրանց նման չըկա:

ՀԱՄ.—Ո՛վ Հեփթայե, դատավոր Իսրայելի, ինչպիսի գանձ ունեյիր:

ՊՈԼ.—Ի՞նչպիսի գանձ ուներ, տեր իմ։
ՀԱՄ.—Հը։

«Մի սիրուն աղչիկ, յեվ ուրիշ վոչինչ,
Մի աղջիկ վորին սաստիկ սիրում եր»։

ՊՈԼ.—(Առանձին) Ելի աղջկաս վրա։
ՀԱՄ.—Ճիշտ չեմ ասում, ծերուկ Հեփթայե։
ՊՈԼ.—Յեթե ինձ Հեփթայե կոչեք, տեր իմ, ապա մի աղջիկ ունիմ, վորին սաստիկ սիրում եմ։
ՀԱՄ.—Վոչ, այդ չի հետեվում։
ՊՈԼ.—Ուրեմն ինչ և հետեվում, տեր իմ։
ՀԱՄ.—«Յեվ վիճակն ընկավ ասուծո կամքով»
Մնացածը գիտեք,
«Յեվ այնպես յեղավ, վոր պետք եր լիներ»։
Շարունակությունը կըգտնեք «Սրբազան յերդերի» առաջին շարքի մեջ, վորովհետև, տեսնեք, խոսքիս կարճումը գալիս եր։

Գալիս են չորս հինգ գերասան

Բարով եք յեկել, պարոններ. ամենքդ ել Ուրախ եմ ձեզ տեսնելուս. բարով եք յեկել, սիրելի բարեկամներ։ Ա՛յ, իմ հին բարեկամ. ձեր վերջին հանդիպումից ի վեր յերևում ծռապատվրվել և. չըլինի՞ թե յեկել ես Դանեմարքա ինձ հետ մորուք մորուքի տալու։ Իսկ դու, սիրելի որիորդ և տիկին, վերջին անգամ քեզ տեսնելուցս ի վեր ձերդ տիկինությունն ավելի յե մատեցել յերկնքին, մի բարձր կրունկի չափով։ Տե՜ս Աստված, վոր ձայնդ, վոչ—բանուկ վոտկու պես, ոդակից ներս ճաքած չըլինի։ Հայդե,

Ֆրանսիացի բաղնիսաններին պես անենք. ինչ վոր տեսանենք իսկույն վրան հարձակվենք. հենց իսկույն մի մենախոսություն. տեսանենք, տաղանդից մի նամուշ տուր մեզ. հայդե, մի ապրու մենախոսություն։

Ա. ԴԵՐ.—Ի՞նչ մենախոսություն, տեր իմ։

ՀԱՄ։ – Մի անգամ ինձ համար մի բան արտասանեցիր, վորը չերբևք չի ներկայացվել. կամ չեթե ներկայացվել ե, մեկ անգամ միայն. վորովհետև, վորքան հիշում եմ խաղը ամբոխին դուր չեկավ. խավիար եր խուժանի համար. բայց իմ կարծիքով, նուչնպես և ուրիշների կարծիքով, վորոնց դատողությունը այդ բաներում ավելի բարձր ե իմինից՝ մի սքանչելի խաղ եր դա, լավ դասավորված տեսարաններով, նույնքան բնական, վորքան ճարտարությամբ կազմված։ Հիշում եմ, մի մարդ սատւմ եր, թե տողերի մեջ թուղդ համեմներ չըկային նյութը համոզելու համար, վոչ էլ վոճի մեջ մի բան, վորով կարելի լիներ հեղինակին մեղադրել, թե արվեստականություն և բաննեցրել. այլ, սատւմ եր, դա մի պարկեշտ մեթոդ եր, նույնքան առողջ, վորքան հաճելի. ավելի սիրուն քան թե հարդարուն. մի հատված կար մեջը, վոր ինձ հատկապես գուր չեկավ, Ենեասի պատմությունը Դիդոնին, և մանավանդ այն կտորը, ուր Պրիամի սպանվելն ե պատմում։ Ցեթե հիշում ես, սկսիր այս տողից, տեսնեմ, տեսնեմ...

(Խուվամազ Պյուռհոսն, նա վոր հիրկանյան
գազանի նման,
Չե, այդպես չէ, սկսում է «Պյուռհոսով»։
Խուվամազ Պյուռհոսն, նա, վորի զեցիբեն այնպես
սեվ եյին
Ինչպես խոռհուդը, յեվ նրման եյին այն մութ
գիսերին,
Յերբ կուչ եր յեկել չարագես ձիու վորովայնի մեջ,
Այժմ իր սոսկաբեր յեվ սեվ յերեսը
Ավելի դժպին թույրով է ածել.
Պլխից միճչեվ վոտ նա ալ է հիմա.
Անուելի կերպով բոսոր ներկված
Հայր ու մայրերի, ուսեր ու դուստրերի նապաստ
արյունով,
Վոր փողոցների բոցերից յերվել յեվ խորովվել եռ,
Այն փողոցների, վոր իրենց տիրոջ ապաշնորյանը
Բռնակալաբար լույս եյին տալիս, դրժոխայի՞ն
լույս:
Կատաղությունից յեվ բոցից կարմրած,
Մակարդված արյուն շապախով ածված,
Աչերը նման կարկեհանների,
Դիվային Պյուռհոսն այժմ փնտռում է ծերուկ
Պրիամին։—
Դեհ, շարունակիր։
ՊՈԼ.—Ասում վկա, թեր իմ, շատ լավ արտասանե-
ցիք, լավ շեշտով և շատ որինավոր։
Ա. ԴԵՐ.— Յեվ գտավ նրան. Պրիամ կռվում է
Հելլենների դեմ,

Բայց իր զարկերը շատ կարճ են գալիս՝ հիմնավուրց
սուրը,
Բազկին անհնազանդ՝ մրնում է այնտեղ, ուր վար
է իջնում։
Պյուռհոս վազում է Պրիամի վրա. անհավասար
գույգ.
Կատաղությունից հետու չե զարկում.
Բայց իր գոռ սրրի հողմից ու սույլից
Անջիղ ճահապետն ընկնում է գետին։
Անգգա իլիոնն զգում է կարծես անգութ հարվածը,
Ձեվ իր բոցավառ գլուխը թեթելով միևչեվ հիմունքը՝
Անհելի ճայթով Պյուռհոսի ականջը սոսկացնում է.
Ձեվ ի՞նչ, իր սուրը վոր ցած եր իջնում
Այն պատկառելի ծերուկ Պրիամի կաթնաթույր
գլխին,
Կարծես մրնում է ոդի մեջ գամված.
Անա, նկարված բռնակալի պես՝ Պյուռհոս
կանգնած է,
Ձեվ վարպես չեզոք սեփական կամքի չեվ գործի
միջեվ՝
Անգործ կեցած է։
Բայց ինչպես հանախ տեսնում ենք վար մեծ
փոթորկից առաջ
Լուռ է չերկինքը, ամպերը՝ հանդարտ, հողմերը՝
անձայն,
Ձեվ չերկրագունդը այնպես անշշուկ ինչպես Մահն
իսկ,

Ցեվ մեկ էլ հանկարծ ճայթյուն վոռոտ պատռում
է ոդը,
Նույնպես Պյուռհոսի դադարից հետո՝
Ջարթված վըռեժը դռդում է ընդաւ կրկին դեպի
գործ:
Ցերբե՞ք կիկլոպներն իրենց մուրճերով չըկռաճեցին
Մարսի զրահը, վոր դարբընված է անմահ
հավիտյան,
Այնպես անխզնա, ինչպես Պյուռհոսի արյունոս
սուրը
Այժըմ զարկում է Պրիամի գլխին:
Թո՛ւհ, բո՛ւհ, պռունի՛կ բախտ: Ո՛վ դուք
աստվածներ,
Առեք ընդաւից համախմբեցեք իր զորությունը,
Ջարդուիջուր արեք իր անվի ոդերն ու
շառավիղներն
Ցեվ գլոռաեցեք կլոր առագաստը յերկնքի լեռնից
Մինչեվ դեվերի բընակարանը:

ՊՈԼ.—Շատ յերկար է:

*ՀԱՄ.—Կուզարկենք սափրիչի ձոռ ձորուքիդ հետ
մխասին:—Շարունակիր, խնդրեմ. սրան մի գա-
վեշտ և պետք, կամ մի լիսի պատմություն,
թե վոչ քունը կըգա. շարունակիր, հասիր Հե-
կուբին:*

*Ա. ԴԵՐ.—«Բայց ավա՞ղ, ով վոր տեսներ թագուհուն
գլուխը փաթաթած»:*

ՀԱՄ.—«Գլուխը փաթաթած»:

ՊՈԼ.—Ինչ լավ է ասել «գլուխը փաթաթած»:

Ա. ԴԵՐ.—Վոր վոճաբոբիկ վեր ու վար վազում, յեվ ապառնում եր
Իր կուրացըծող արտասուցիներով մարել բոցերը,
Մի լաթի կտոր այն գլխի վրա,
Ուր մի ֆիչ առաջ իր թագն եր շողում. պատմուճանի տեղ՝
Ցերիսուցիից մաշված գլուսերի վրա մի վերմակ ձրգած,
Վոր խուճապի մեջ ճազիվ եր գտել. ով վոր տեսներ այս,
Թուցալից լեզվով անիրավ բախտի իշխանության դեմ
Դավաճանության վճիռ կարձակեր·
Ցեվ, աճուրդ, յեթե աստվածներն իրենց ներկա լինեյին
— Միայն թե ներում աղգա չլինեն մարդկային ցավին—
Ցերք Հեկուբ տեսավ թե ինչպես Պյուռհոս, ժանտ զվարճությամբ,
Հոշում եր սրով ցրտա ամուսնի ասեն անդամը՝
Այն հանկարծակի պոռթկացող ճիչը, վոր ևս արձակեց
Նույնիսկ յերկնքի հրավառ աչերից ցող կը բորբոներ,
Ցեվ աստվածներին կիրք կըներշնչեր:
ՊՈԼ.—*Մեկ տեսնք ինչպես գույնը թռել և, աչքերը լցվել են:*—
Բավական և, խնդրեմ:
ՀԱՄ.—*Լավ և. մնացորդը մի ուրիշ անգամ արտասանել կըտամ:* (*Պոլոնիուսին*)*: Սիրելի տեր իմ,*

խնդրեմ հոգ տանեք վոր այս դերասաններին լավ ընակարան տրվի։ Հասկանում եք, պետք է սրանց հետ լավ վարվիլ, վորովհետև սրանք ժամանակի խոտացումը և համառոտ տարեգրութիյունն են. ավելի լավ է մահից հետո վատ տապանագիր ունենաք, քան թե կենդանութիյան ժամանակ սրանց կողմից վատ հիշատակում։

ՊՈԼ.—Տեր իմ, յես նրանց կըհյուրասիրեմ իրենց արժանիքի համեմատ։

ՀԱՄ.—Մեծ բան կանես. մարդ Աստուծո, շատ ավելի լավ. յեթե ամեն մարդու հետ իր արժանիքի համեմատ վարվինք՝ ով պերճ կըմնա մտրակվելուց. վարվիր նրանց հետ քո պատվի և քո մեծութիյան համեմատ. վորքան նրանք ավելի անարժան լինեն, այնքան քո բարութիյունը ավելի գովելի կդառնա։ Ներս տար նրանց։

ՊՈԼ.—Ցնկնք, պարոններ։

ՀԱՄ.—Գնացեք նրա հետ, բարեկամներ. վաղը կըտեսնենք ձեր ներկայացումը։

Պոլոնիուս և բոլոր դերասանները դուրս են գնում. բացի Ա. դերասանից

Լսիր, իմ հին բարեկամ. կարող եք «Գոնզագոյի Սպանութիյունը» խաղալ։

Ա. ԴԵՐ.—Այո, տեր իմ։

ՀԱՄ.—Լավ, վաղը գիշեր ներկայացրեք, կարող ես, յեթե պետք լինի, տասներկու կամ տասնըվեց տողից բաղկացած մի հատված, վոր յես կըգրեմ, անգիր անել և մեջը գետեղել, կարո՞ղ ես, չէ։

Ա. ԴԵՐ.—Այո, տեր իմ։

ՀԱՄ.—Լավ, առ այժմ գնա այդ պարոնի հետ. նայիր, չըլինի թե դրան ծաղրեք։ (Ա. դերասանը դուրս է գնում)։ Սիրելի բարեկամներ, ցըտեսութիւն մինչև այս գիշեր. բարով եք յեկել Ելսինոր։

ՌՈԶ.—Ազնիվ տեր։

ՀԱՄ.—Դե հ, գնաք բարով։ (Ռոզ. յեվ Գիլդ. դուրս են գնում)։

Այժըմ մենակ եմ.
Ո՜հ, ինչ սինքլոը և ինչ գյուղացի մի ստրուկ
եմ յես։
Անբընական չե՞, վոր այս դերասանը,
Միայն մի վեպով, մի բուռըն կրքի տակ
յերազումով
կարենա հոգին այնպես յենթարկել իր
հղացումին,
վոր լոկ իր մտքի գործելու շնորհիվ դեմքը
գունատվի,
Արցունք գա աչքին, յերեսն այլայլվի, ձայնը
կերկերվի,
Իր ամբողջ կազմը համապատասխան իր
հղացումին.
Ցավ այս բոլորը վոչնչի՞ համար. Հեկուբի՞
համար.
Հեկուբ նրա ի՞նչն է, կամ նա Հեկուբի,
վոր նըրա համար արտասուք թափե։ Ապա
ի՞նչ կանեը,

Յեթե նա կրքի այնպիսի պատճառ, դրդիչ
ունեներ,
Ինչպես յես ունիմ. բեմը կողողեր իր
արտասուքով,
Հատարակության ուշկը կըպատռեր սոսկալից
խոսքով,
Հանցավորներին կըխեղթացներ,
Յեվ անմեղներին կըպարհուրեցներ,
Անտեղյակներին կըշշմեցներ, այո, և նույնիսկ
Աչք ու ականջի ունակությունը
կըխառնաշփոթեր:
Իսկ յես, թանձրամիտ և ցեխահոգի
թշվառականըս,
Չալվում, մաշվում եմ, և մտամոլոր խեղճ Ջոնի
նման՝
Անվույթ իմ դատիս՝ վոչ մի բան ասել չեմ
կարողանում.
Ո՛հ, վոչ իսկ իսեր մի թագավորի, վորի գույքի
դեմ,
Վորի կյանքի դեմ այնպե՞ս դիվային վոճիր և
դործվել:
Վախկոտ եմ, ինչ է. ո՞վ է ուզում ինձ սըրիկա
կանչել,
Գանգրես ջախջախել, մորուքըս փետտել դարկել
յերեսիս,
Քիթըս տրորել, սուտըս հետ կոխել կոկորդիս
մեջը,
Մինչև թոքերըս. ո՞վ է անում այդ:

Հա, այդ բոլորին կըհանդուրժեմ.
Քանդի անպատճառ յես աղավնու լսարդ պիտք
և ունենամ.
Պետք և վոր լեզի չըլինի իմ մեջ,
Քանի վոր այսքան անիրավութիւնը չի
դառնացնում.
Այլապես, վաղուց այդ սըրիկայի փորոտիքներով
Ոդի ցիներին կըգիրցընեի։
Ա՛յ դու արյունռուշտ, պագշա՛տ սրիկա,
Անխիղճ, անորեն, անամո՛ւս սրիկա,
Ո՛հ, վըրեժ...
Ինչ ավանակն եմ. ինչ քաջութիւն և,
Վոր յես գավակըս մի սպանված հոր,
Վորին անպատար յերկինք ու յերկիր ի վրեժ են
կանչում,
Մի բոզի նըման իմ սրտի մաղձը բառերով
թափեմ,
Հայհոյանք անեմ մի պոռնիկի պես, մի աղախնի
պես։
Թո՛ւհ, թո՛ւհ. ամո՛թ ինձ։ Դէհ, գործիր, ուղիղ։
Հը՛մ. յես լսել եմ վոր հանցապարծները,
Թատրոնում նստած,
Լավ ներկայացված մի տեսարանից այնպես
ցնցվել են,
Վոր իրենց վոճիրն իրենք հայտնել են։
Սպանութիւնը, թեև անլեզու,
Հրաշախոս լեզվով արտահայտվում է։
Պետք և այս նորեկ դերասաններին հորդորս
առաջ

Մի բան խաղալ տաճ, վոր նըման լինի իմ
հորըս մահվան.
Իսկ յես կընայեմ նըրա աչքերին, վերքը
կըխառնեմ,
Յեվ ցնցվի թե չէ՝ գիտեմ ինչ կանեմ։
Իմ տեսած վոգին գուցե դեվն ինքն ե.
Յեվ հաճախ դեվը գըրավիչ մի ձեվ կարող ե
առնել։
Այո, և գուցե ոգուտ քաղելով իմ թուլությունից
Յեվ մելամաղձիկ բնավորությունից,
— Յեվ նա այսպիսի վոգիների վրա շատ
պրծավոր ե—
Մոլորցնում ե ինձ, վոր դըժոխային մեղքի մեջ
ձգե
Ավելի հաստատ հիմքեր պետք են ինձ.
Ներկայացումն ե այն վորոգայթը,
Վորով կըբռնեմ արքայի խիղճը։

Դուրս ե գնում

ԱՐԱՐՎԱԾ ԾԵՐՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Մի սենյակ պղյակուա
Գալիս են Թագավորը, Թագուհին, Պոլոնիուա, Ոֆելիա,
Ռոզենկրանց և Գիլդենշտեռն

ԹԱԳ.—*Ջե՛ք կարող արդյոք վոչ մի պարձվածքով մի*
կերպ հասկանալ,
Թե ինչու չի նա սարքել այս բոլոր
իրարանցումը,
Իր հանգիստ կյանքը այսպես բրտորեն
խռովեցնելով
Այս աղմկահույզ և վտանգալից
խելագարության մեջ։
ՌՈԶ.—*Խոստովանում եմ Թե նա իր մխքը ցրված է*
զգում,
Բայց ինչ պատճառից, վոչ մի պայմանով չի
ուզում հայտնել։
ԳԻԼԴ.—*Ցեվ Թույլ չի տալիս, վոր հարցաքննենք.*
Այլ, հնարագետ խելագարությամբ, միշտ խույս
և տալիս,

Յերբ վորձ ենք անում, վոր իր իսկական
վիճակի մասին
Մի բան հայտնե մեզ։
ԹԱԳՀ.—Ձեզ լավ ընդունեց։
ՌՈՋ.—Այո, կատարյալ ջենտլմենի պես։
ԳԻԼԴ.—Բայց ինքն իր վերա ճիգ գործ դներլով։
ՌՈՋ.—Խոսքի մեջ ժըլատ՝ բայց մեր հարցերին շատ
ազատորեն
Պատասխանում եր։
ԹԱԳՀ.—Փորձեցի՛ք նրան դվարճացընել։
ՌՈՋ.—Դեպքն այնպես բերեց, վոր ճանապարհին
Մենք հանդիպեցանք դերասաններին,
Յեվ յերբ այս մասին նըրան հայտնեցինք՝
Կարծես այս լուրը նըրան մի տեսակ հրճվանք
պատճառեց.
Դերասանները արդեն այստեղ են, և, վորքան
դիտեմ,
Հրաման և տըվել, վոր հենց այս գիշեր իր
առաջ խաղան։
ՊՈԼ.—Այո, շատ ճիշտ է, և ինձ պատվիրեց
Վոր խնդրեմ Ձերըդ Վեհափառությանց,
Տեսնել և լսել ներկայացումը։
ԹԱԳ.—Ամենայն սիրով.
Գոհ եմ լսելով, վոր նա այժմ այդպես
տրամադրված է։
Ազնիվ պարոններ, դուք էլ ավելի մղեցեք
նըրան,
Ջանքերեցեք դեպի այդպիսի զվարճություններ։

ՈՍՉ.—Այո, սեր աբքաւ

Ռոզենկրանց և Գիլդենյաերն դուրս են գնում

ԹԱԳ.—Սիրելի Գերտրուդ, դու ել հեռացիր.
Քանզի զաղտնապես ճարդ ենք ուղարկել
Համլետին բերե,
Վոր Ոֆելիային վորպես դիպվածով հանդիպի
այստեղ.
Իր հայրը յեվ յես լրը իրավացի
հետազոտիչներ,
Այնպիսի մի տեղ ուզում ենք թագչել, վոր
անտես՝ տեսնենք,
Յեվ զաւեննք նրանց տեսակցությունից և նրա
ձեվից
Թե սիրուց է նա այդպես տառապում, թե
ուրիշ բան կաւ

ԹԱԳՉ.—Շատ լավ, հնազանդ եմ. իսկ դու, Ոֆելիա,
Մաղթում եմ սրտանց ու շընորհալի
գեղեցկությունըդ
Լինի Համլետի մտացնորության բարի
պատճառը
Յեվ մեծ հուսա ունիմ, վոր առաքինի
հատկություններըդ
Յեաւ բերեն նըրան իր սովորական ճանապարհի
վրա,
Յերկխիդ է պատիվ

ՈՖ.—Տա Աստված, տիկին

Թագուհին գնում է

ՊՈԼ.—Յեկ, Ոֆելիա, և շրջիր այստեղ:

Վողորմած տեր իմ, յեթե կըհաճեք, յեկեք
թագընավինք։
(Ոֆելիային) կարդա այս գրքից. թող
զբաղմունքի այդ ձեվացումը
բընական դուչն տա մեննակութեանըդ։
Հաճախ այս բանում պարսավելի յենք,— և շատ
փորձված և—
Վոր սուրբ յերեսով և բարեպաշտիկ
շարժուձևվերով
Սատանային իսկ շաքարոծում ենք։
ԹԱԳ.—(Առանձին) Ո՛հ, ճշմարիտ է.
Ինչպես այդ խոսքը խարտպանում և իմ
խղճմտանքը.
Պառնիկի այսը՝ շպարի շնորհիվ գեղեցկացրած՝
Այնքան տգեղ չե իր անգուլրի մոտ,
Վորքան իմ գործը՝ սատանիկ ներկըված իմ
խոսքերի մոտ։
Ո՛հ, ինչ ծանըր բեռ։
ՊՈԼ.—Ահա գալիս է. թագնվինք, տեր իմ։
Թագավորը և Պոլոնիուս գնում են. գալիս է Համլետ
ՀԱՄ.—Լինել թե չլինել, այս է խնդիրը,
Վշերն և հոգեպես ավելի ազնիվ,
Տանել գոռ բախտի պարսաքարերը և
սլաքները,
Թե պետք վերցընել ցավ ու վիշտերի մի ծովի
ընդդեմ,
Յեվ դիմադրելով՝ վերջ տալ բոլորին։
Մեռնել, քնանալ, ոչինչ ավելի.

Յեվ մտածել, թե մի պարզ քնով մենք վերջ
ենք տալիս
Այն սրտացավին և բյուր բընական
անձկություններին,
Վորոնց ժառանգն և մեր հեզ մարմինը,
Մի վախճան և դա՝ հոգով բաղձալի։
Մեռնել, ննջել. ննջել... գուցե յերազել.
Ա՛յ, ցավն այդտեղ է. քանզի այդ մահվան քընի
ժամանակ
Ի՞նչ կերպ յերազներ պիտի գան գուցե՝
Յերբ այս մահացու կապանքը մեզնից թոթափած
լինենք.
Ահա ինչ վոր մեզ խորհել պետք է տա. այս
նկատումն է,
Վոր այսչափ յերկար տեվել և տալիս
թշվառությունը։
Թե վոչ, ո՞վ արդյոք կուզեր հանդուրժել
Աշխարհի այնքան նախատինքներին և
մտրակներին,
Հարստահարիչ անիրավության,
Մեծամիտ մարդու արհամարհանքին,
Քամահրած սիրո տրվայտանքներին,
Որենքի բոլոր ձգձգումներին,
Պաշտոնյաների աներեսության,
Այն հարվածներին, վոր համբերատար
արժանավորը
Ստանում է միշտ անարժաններից,
Այն ինչ կարող եր մարդ իր հաշիվը իր ձեռքով
փակել

Մի մերկ դաշույնով։ Ո՞վ կըհոժարեր այսքան
բեռ կըրել,
Հեծծել ու քրտնել տաղտուկ կյանքի տակ,
Ցեթե յերկուղը մի ինչ վոր բանի մահվանից
հետո,
Այն անհայտ յերկրի, վորի սահմանից
Վոչ մի ուղեվոր չի վերադառնում,
Ըընդեր կամքը յերկբայության մեջ, և մեզ
չըստիպեր
Տանել ավելի այն չարիքները, վոր այստեղ
ունինք,
Քան թե տալառնել դեպի նոր ցավեր, վորոնց
անգետ ենք։
Հոհեմությունն, այսպես, ամենքիս վախկոտ
և դարձնում.
Յեվ հենց այս կերպով վճռականության
բընածին գույնը
Ախտաժետվում և խորհրդածության գունաթափ
ցոլքից,
Յեվ շատ ձեռնարկներ, մեծ ու կարեվոր,
Շեղվում են այսպես իրենց հոսանքից,
Յեվ գործ կոչվելու անարժան դառնում։
Բայց կաց, ձվ և այս։ Սիրուն Ոֆելիան։—
Ո՛վ հավերժահարս,
Աղոթքներիդ մեջ թող հիշվին նայեվ բոլոր
մեղքերըս։

Ոֆ.—Ի՞նչպես և արդյոք Ձեր բարձրությունը
այսքան շատ որեր։

ՀԱՄ.—Շատ խոնարհաբար շնորհակալ եմ. լավ եմ, լավ եմ, լավ։

ՈՑ.—Տեր իմ, ձեզանից յուս հիշատակներ ունիմ ստացած,
վոր վաղուց ի վեր ուզում եմ հետ տալ.
ստացեք խնդրեմ։

ՀԱՄ.—Յերբեք, յուս վոչինչ չեմ ընծայել քեզ։

ՈՑ.—Հարկավի տերըս, դուք շատ լավ գիտեք, վոր ընծայել եք,
Յեվ հետն ել բառեր, այնպես քաղցրաբուլր,
վոր այդ իրերը ել ավելի թանկ դարձնում եյին.
Հիմա վոր նըրանց բուլրը թըռել է, հետ առեք կրկին.
Մի ազնիվ հոգու ճոխ ընծաները գծուծ են թվում,
Յերբ պարգեվողը անսեր է դառնում։ Ստացեք, տեր իմ։

ՀԱՄ.—Հա, հա, առաքինի յուս դուս։

ՈՑ.—Տեր իմ...

ՀԱՄ։—Գեղեցիկ ես։

ՈՑ.—Ի՞նչ է ուզում ասել Ձեր Բարձրությունը։

ՀԱՄ.—Յեթե առաքինի և գեղեցիկ ես, առաքինությունդ վոչ մի հարաբերություն չըպիտի թույլ տա գեղեցկությանդ հետ։

ՈՑ.—Բայց, տեր իմ, ձեմ հետ և կարող գեղեցկությունը ավելի լավ հարաբերություն ունենալ, քան թե առաքինության հետ։

ՀԱՄ.—Այո, ճիշտ ես ասում, վորովհետև գեղեցկության կարողությունը ավելի շուտ ընդունակ է առաքինությունը լրբության փոխելու, քան թե առաքինության ուժը կարող է գեղեցկությունը իր պատկերին նմանացնել. այս բանը յերբեմն պարադոքս եր թվում, բայց հիմա ժամանակը հաստատեց վոր ճշմարիտ է։

կար մի ժամանակ, վոր յես քեզ սիրում էի։

ՕՖ.—Այո, սեր իմ, ինձ այդպես եիր հավատացնում։

ՀԱՄ.—Իսկ դու չըպիտի հավատայիր. վորովհետև առաքինությունը չի կարող այնպես պատվաստվիլ մեր հին ծառաբունի վրա, վոր վոչինչ չմնա այդ ծառաբունից. յես քեզ չեյի սիրում։

ՕՖ.—Ուրեմն ես ավելի խաբված եմ յեղել։

ՀԱՄ.—Մտիր կուսանոց. ինչու՞ յես ուզում մեղավորներ աշխարհ բերել։ Յես ինքս քիչ թե շատ պարկեշտ մարդ եմ, բայց դարձյալ ինքս իմ մեջ այնպիսի բաներ եմ տեսնում, վոր ավելի լավ եր մայրս ինձ ծնած չըլիներ։ Յես շատ հպարտ եմ, քինախնդիր, փառամոլ. ավելի շատ չարություններ ունիմ ձեռքիս տակ, քան միտք՝ նրանց տեղ տալու, քան յերեվակայություն՝ նրանց ձեվ տալու, քան ժամանակ՝ իրագործելու։ Ինչու՞ ուրեմն ինձ նման կյանքեր քարշ գան յերկրի և յերկնքի միջև։ Մենք բոլորս էլ առաջնակարգ սրիկաներ ենք. մեզնից վոչ մեկին չըհավատաս։ Գնա, մտիր կուսանոց։ Հայրդ ուր է։

ՈՅ.—Տանն է, տեր իմ։

ՀԱՄ.—Դռները պինդ փակիր վրան, վոր հիմարի դերը միայն իր տան մեջ խաղա։ Մնաս բարով։

ՈՅ.—(Առանձին) Ո՜հ, փրկիր սրան, բարերար Աստված։

ՀԱՄ.—Յեթե յերբեք ամուսնանաս՝ քեզ այս անեծքը ոժիտ կըտամ. յեղիր զգաստ ինչպես սառույց, մաքուր, ինչպես ձյուն, դարձյալ կերծ չես մնա պրպարտությունից։ Մտիր կուսանոց, գնա. մնաս բարով։ Յեվ կամ, յեթե անպատճառ պետք է ամուսնանաս, ամուսնացիր մի հիմարի հետ, վորովհետև խելացիները լավ գիտեն, թե դուք նրանց ինչ հրեշներ եք դարձնում։ Հայդե, կուսանոց. և շուտ. մնաս բարով։

ՈՅ.—(Առանձին) Յերկնային զորություններ, բուժեցեք սրան։

ՀԱՄ.—Ձեր ներկարարության մասին էլ շատ եմ լսել, այո, շատ։ Աստված ձեզ այլ յերես և տվել, իսկ դուք ձեզ համար մի այլ յերես եք շինում. որովում եք, շորորվում եք, լեզուներդ եք ծռում, Աստծու արարածներին մականուններ եք կպցնում, և ձեր լկտիության անպիտության յերեսից եք տա՜լիս։ Գնա, էլ չեմ ուզում այդ բաները տեսնել. դրանք ինձ խեղդացրել են։ Նրանք վոր արդեն ամուսնացած են, բացի մեկից, թող ապրեն. մյուսները թող մնան ինչպես կան։ Մտիր կուսանոց։

Դուրս է գնում

ՈՑ.—Ի՜նչ ազնիվ հոգի փչացավ այսպես.
Դրանիկի աչքը, դիտունի լեզուն, զինվորի
սուրը,
Այս պերճ պետության հույսը և վարդը,
Տարագի հայելին, ձեվի կաղապարը,
Բոլոր դիտողների դիտման առարկան, այսպես
փչանա՝
Ցավ չես, կանանց մեջ ամենեն լրված և
տարաբախտը,
Վոր ծրծում եյի նըրա գեղգեղուն ուխտերի
մեղրը,
Այժըմ տեսնում եմ այն ազնիվ ու վեհ
դատողությունը
Կոտրած զսնգի պես խժալուր զարճած և
աններդաշնակ.
Ծաղկած հասակի այն անզուգական գեմքն ու
տիպարը
Խեղթությամբ խամրած՝ Ո՜հ, վայ թշվառիս,
Վոր այն ել տեսա, այս ել տեսնում եմ՝

Թագավորը և Պոլոնիուս դալիս են

ԹԱԳ.—Սիր. նըրա մտքերըն այդ կողմ չեն հակված,
Ցավ սաածներըը, թեև քիչ անկապ, խեղթի
խոսքեր չեն՝
Նրա հոգու մեջ մի վորոշ բան կա
Վորի վրա վիշտը թուխսի յես նստել,
Ցավ վախենում եմ թուխսից յելածը մի վտանգ
լինի,

Վորի առաջը առնելու համար՝ շուտափուլթ
վճռով
Ա՛յս վորոշեցի. պետք և անհապաղ Անգլիա
դնա
Անվճար տուրքը պահձելու համար։ Դուցե
ծովերը,
Տարբեր յերկիրներն, իրենց այլապան
առարկաներով,
Վաներ կարենան նրա սրտի մեջ բուն դրած
նյութը,
Վորի վրա ուղեղն անվերջ բաղխելով՝
Ներան այս ձևով փոխակերպել և Ջեր
կարծիքն ինչ և։

ՊՈԼ.—Լավ և, բայց պարձյալ համոզված եմ յես,
Վոր նրա ցավի ծագումն ու սկիզբը
Մերժված սերն և։ Ձեկ այտուղ, Ոֆելիա,
Պետք չունես կրկնել էշխան Համլետի քնդ
ասածները.
Արդեն լսեցինք։ Տեր սրքա, արեք ինչպես
կամենաք,
Ձեվ սակայն, տեր իմ, թե հարմար գաաեք,
Թող խաղից հետո
Թագուհի մայրը նրան առանձին թախանձանք
անե,
Վոր իր ցավն ասե. Թող շիտակ խոսե իր
զավակի հետ.
Ձեվ յեթե Թույլ տաք, յես կբթագնըվիմ
այնպիսի մի տեղ

Վոր լաւմ բոլոր խոսակցութիւնը։
Ցեթի իր մայրն ել անհաչող լուրս գա,
Ասա Անպիա գրկեցեք նրան,
Կամ թե փակեցեք ուր հարմար դաւս ձեր
խմաստութիւնը։

ԹԱԳ.—Թող այդպես լինի. մեծաւորների
խելառութիւնը
Զլպետք է մընա առանց հակոդի։
Դուրս են դնում

ՏԵՍԱՐԱՆ ՑԵՐԿՐՈՐԴ

Մի գովքի դղեակում
Գալիս և Համլետ մի քանի դերասաններին հետ։

ՀԱՄ.—Խնդրեմ հասուածն այնպես արտասանէք,
լինչպես ես քեզ համար արտասանեցի, թեթեվ
և սահուն. բայց չեթե դու ել մեր դերասան-
ներից շատերի պես գոռգոռաս, ապա ավելի
լավ կըլիներ, վոր իմ տողերը քաղաքի մունետիկ-
ներին արտասանել տայի։ Վոչ ել կարիք կա
շարունակ ձեռքովդ ոդը սողոցելու, այսպես-
այլ, ամեն բանի մեջ չափավոր յեղիր. վորովհե-
տև, կըրքի հեղեղի, փոթորկի, և, այսպես ասենք,
հողմապտոյտի մեջն անպատ պետք է սովորես
մի տեսակ բարեխառնութիւն պահել, վոր հար-
թութիւն տա խոսքիդ։ Ա՜հ, հոդիս վշաքաղվում
է, յերբ լսում եմ ինչպես մի հաղթանդամ կեղ-
ծամաւոր արարած մի գորեղ ղդայուն ձվիկ
ձվիկ է անում, հին լաթ է շինում, դեռնահար-
կի հասարակութեան ականջը պատռելու համար։

հասարակութիւն, վորի մեծ մասը ընդունակ չէ ուրիշ բան ըմբռնելու, բայց միայն անբացատրելի մղձկատակներ և ազմուկ։ Մտրակել տալ կուզեյի այդ տեսակ արարածին, վոր Տերմազանտին ել գերազանցում է, Հերոլդեսից ել հերոլանդում եւ Խուլա տուր, խնդրեմ, այդ բանից։

Ա. ԴԵՐ.—Խոսք եմ տալիս Ձերդ Բարձրութեան։

ՀՍՄ.—Վոչ ել շատ մեղմ պետք և լինես. այլ, սեփական ճաշակդ պետք և զեկավարդ լինի. շարժումներդ բառերիդ հարմարեցրու, և բառերը շարժումներիդ, հատկապես ուշադիր լինելով, վոր բնական չափավորութենից դուրս չելնես. վորովհետև ամեն բան, վոր չափազանցված է, խաղի նպատակին հակառակ է, ինչ վոր թե հնուց և թե հիմա միշտ ել յեղել և և ե, այսպես ասած, մի հայելի պահել բնութեան առաջ. ցույց տալ առաքինութեան իր սեփական դեմքը, մոլութեան՝ իր պատկերը, և ժամանակի դեմքին ու մարմնին՝ իր տեսքն ու տիպը։ Արդ, յեթե դա շատ լիուլի դուրս բերվի, կամ շատ թույլ, գուցե անգետներին ծիծաղեցնես, բայց բանիմացներին միայն անախորժ կարող է լինել. իսկ մեկ բանիմաց մարդու կարծիքը ձեր աչքին ավելի մեծ կշիռ պետք է ունենա, քան թե մյուսներին մի ամբողջ թատրոն։ Ա՜հ, դերասաններ եմ տեսել խաղալիս, և լսել թե մարդիկ նրանց ինչպես եյին գովաբանում, վո-

րոնք. մեղք չի լինի ասել, վոչ քրիստոնեյի խոսվածքն ունեյին, վոչ քրիստոնեյի կեցվածքը, վոչ ել հնթանոսի, վոչ նուչնիսկ ազամորդու; և այնպես ուռում և պռռում եյին վոր մտածում եյի, թե պետք և բնութեյան բանվորները նրանց առեղծած լինեն, և այն ել՝ վոչ շատ լայ, ոչն աստիճանի գարշելի նմանութեյուններ եյին դրանք մարդկային ցեղի։

Ա. ԴԵՐ. Այդ բոլորը մեզ մոտ քիչ թե շատ բարեփոխել ենք, տեր իմ։

ՀՅՄ.—Պետք և հիմնովին փոխեք. թող ձեր միսոներ դեր կատարողները այն մասին ասեն, ինչ վոր իրենց համար գրված և. դերասաններ կան, վոր մի քանի ապուշ հանդիսատեսների ծիծաղեցնելու համար իրենք են սկսում ծիծաղել, այն ինչ հենց այդ ժամանակ խաղի մի կարեվոր կետը ուշադրություն և պահանջում. դա շատ խայտառակ բան և, և ցույց և տալիս այդ ձեվով վարվող դերասանի վոդրմելի անպիտանությունը։ Գնացեք և պատրաստվեցեք։

Դերասանները դուրս են գնում

Գալիս են Պոլոնիուս, Ռոզենկրանց և Գիլդենջաներն

Ի՞նչ յեղավ, տեր իմ, թագավորը գալիս յե արդյոք այս պլուխ զորձոցը տեսնելու։

ՊՈԼ.—Այո, թագուհին ել միասին. հենց հիմա գալիս են։

ՀՅՄ.—Ուրեմն դերասաններին ասացեք. վոր շտապեն։

Գոլոնիուս գուրս և գնում

Գուք ել ոգնեցեք վոր շտապենս
ՌՈԶ. և ԳԻԼԴ.—Այո, տեր իմ։

Ռոզենկրանց և Գիլդենջաներն գուրս են գնում

ՀԱՄ.—Եհե՛յ, Հորացիո։

Գալիս և Հորացիո

ՀՈՐ.—Պատրաստ եմ, տեր իմ, ձեր ծառայութեյանս։
ՀԱՄ.— Լսիր, Հորացիո. քեզնից ավելի ուղղամիտ
մարդ
Գեռ չեմ հանդիպել ծանոթներիս մեջ։
ՀՈՐ.—Սիրելի՛ տեր իմ։
ՀԱՄ.—Զկարծես թե քեզ շողոքորթում եմ.
Ի՞նչ շահ կարող եմ հուսալ քեզանից,
Վոր բացի ուրախ բնավորութեյունից մի
հատուկ չունես
Ապրուստ ու հագուստ հոգալու համար։
Ինչու՞ վայելել չքավոր մարդուն.
Վոչ, շողոքորթի մեղրածոր լեզուն
Անմիտ պերճութեյան վոտքը թող լիզե,
Ցնվ իր ծնկների ճկուն լսեռնելուն այնտեղ
կորացնե,
Ուր վոր քծնանքին վարձ և ապաուժ։
Լսե՛մ ես, Հորացիո. այն որից ի վեր վոր
մատաղ հոգիս
Իր ընտրութեյան մեջ ինքնիշխան դարձավ,
Ցնվ հասու յեղավ մարդկանց իրարից
զանազանելու,
Նա քեզ վորոշեց, կնքեց իր համար.

Քանզի դու հավետ մի մարդ ես լինել,
Վոր ամենայն ինչ կըրելով հանդերձ՝ վոչինչ
չես կըրում,
Ցավ քախտի ամեն վարձն ու հարվածը
Ընդունել ես միշտ միահավասար
շնորհակալությամբ
Որոնյալ են ներքանք, վորոնց մեջ արյունն ու
դառոզությունն
Այնպես համաչափ զուգախառնված են,
Վոր լոկ շըվի չեն քախտի մատներին,
Վոր ինչպես ուզև, վըրան նվագես
Տուր ինձ այն մարդը, վոր իր կիրքերի դերին
չը լինի,
Ցավ չես սրտիս մեջ ահեղ կըտաս ներքան,
սրտիս սրտի մեջ,
Ինչպես այժըմ քեզ բայց այս շատ լեղակի
Լսիր. այս պիշեր արքայի առաջ ներկայացում
կա.
Ցավ մի տեսարան մոտ ե իմ հորըս մեռնելու
կերպին,
Վոր պատմել եմ քեզ ինդրում եմ, յերբ գա
այդ տեսարանը
Դու հոգուդ բոլոր խորատեսությամբ դիտիր
հոր եզբորս.
Ցավ մի վորոշ ճառի ժամանակ
Թագուն վոճիրը հանկարծ իր վորջից դուրս
չըհաջձակվի

Ասա այն վոգին, վոր մենք տեսել ենք, մի
չար վոգի չէ,
Ցնել խորհածներըս՝ վուլկանի տալից ավելի
մըրուռ։
Լավ դիտիր ներան. չես ել աչքերըս գեմքին
կըհառեմ.
Հետո չերկուսըս մեր կարծիքները կմիացընենք
Ներա չերեսի արտահայտածը գտնելու համար։
ՀՈՐ.— Լավ, տեր իմ. չեթե խաղի ժամանակ
Փորձես իմ աչքից մի բան գողանալ և
չըբռնվի՝
Ինքըս կըտուժեմ գողոնի գինը։
ՀԱՄ.— Ահա գալիս են ներկայացումին.
Ցնա պետք է այստեղ անփույթ չերեսիամ. մի
տեղ գտիր քեզ։
Դանիական քայլերդ։ Գալիս են Թագավորը, Թագուհին
Գոլոնիուս, Ոֆելիա, Ռոզենկրանց, Գիլդենշտերն և ուրիշ
Գալատականներ և Գահակներ՝ ջահերով
ԹԱԳ.— Ինչպես և մեր չեղբորվորդի Համլետը։
ՀԱՄ.— Եատ լավ, խոկապես. քամելեոնի պես եմ կե-
րակրվում, ոդ եմ ուտում, խոստումներով եմ
խճողված. աքլորներին չեք կարող այս կերպով
պիրցնել։
ԹԱԳ.— Այդ պատասխանն ինձ համար չէ, Համլետ.
այդ խոսքերը ինձ չեն պատկանում։
ՀԱՄ.— Վոչ ել ինձ արդեն։— (Պոլոնիուսին) Տեր իմ,
ասացիք թե համալսարանում մի անգամ մի բան
եք խաղացել, այնպես չէ։

ՊՈԼ.—Այո տեր իմ, և լավ դերասան եմի համարվում։
ՀԱՄ.—Ի՞նչ եք խաղացել։
ՊՈԼ.—Հուլիոս Կեսարի դերը, և սպանվեցա Կապիտոլում. Բրուտոս ինձ սպանեց։
ՀԱՄ.—Շատ բրտուԹյուն եր նրա կողմից այդպես յեթևվելի կովին Կապիտոլում սպանել։—Դերասաննևրը պատրաստ են։
ՌՈՋ.—Այո, տեր իմ. ձեր հրամանին են սպասում։
ԹԱԳՀ.—Ցեկ այստեղ, սիրելի Համլետս, յեկ նստիր կողքիս։
ՀԱՄ.—Վոչ, սիրելի մայրս, այստեղ ավելի քաղցղ ճետաղ կա։
ՊՈԼ.—(Պատվարին) Ո՜, հո, լսեցիք ինչ ասաց։
ՀԱՄ.—Որևորդ, Թուլյ կտաք, վոր ձեր գոգի մեջ ձգվիմ։

ձգվում և գետնի վրա Ոֆելիայի վոտքերի առաջ

ՈՖ.—Վոչ, տեր իմ։
ՀԱՄ.—Ուզում եմ ասել գլուխս ձեր գոգը դրած։
ՈՖ.—Այո, տեր իմ։
ՀԱՄ.—կարծում եք վատ մտքով ասացի։
ՈՖ.—Վոչինչ չեմ կարծում, տեր իմ։
ՀԱՄ.—Լավ գաղափար է՝ աղջիկների ոտներքի մեջ ձգվիլ։
ՈՖ.—Ի՞նչ, տեր իմ։
ՀԱՄ.—Վոչինչ։
ՈՖ.—Շատ ուրախ եք, տեր իմ։
ՀԱՄ.—Ո՞վ, յես։

ՈՅ,—Այո, տեր իմ։

ՀԱՄ.—Ի՞նչ արած. ձեր զավեշտաբանն եմ յես։ Մարդ ուրախ չըլինի, ինչ անես. մեկ այնտեղ նայիր, տես մարդս ինչպես ուրախ է, և յերկու ժամ չըկա, որ հայրս մեռել է։

ՈՅ.—Վոչ, յերկու անգամ յերկու ամիս է, տեր իմ։

ՀԱՄ.—Այդքան յերկար. ուրեմըն, քող սատանան տեղ հագնի, յես մի ձեռք սամուր եմ հագնելու։ Տեր աստված, մարդ յերկու ամիս առաջ մեռնի և դեռ չըմոռացվի։ Ուրեմն կարելի չե հուսալ, որ մի մեծ մարդու հիշատակը դեռ վեց ամիս իր մահից հետո կարող և տեվել. բայց, սուրբ Կույսը վկա, պետք և յեկեղեցիներ շինես, թե վոչ՝ կըմոռացվի ինչպես այն վայտե ձին, վորի տապանադիրն էր.

«Ա՞ղս ափսոս, ա՞ղս ափսոս, վայտե ձիս մոռացվեց»։

Ճերմակաթաւն. մնջկատակի դերասանները։

Գալիս են մի թագավոր և մի թագուհի, շատ սիրով. նախ թագուհին հարցուրցում և թագավորին, հետո նա նրան. թագուհին ծունկ և չոքում թագավորի առաջ և սիրայիր ցույցեր և անում թագավորը նրան վեր և բարձրացնում, և իր գլուխը թեք և տալիս նրա վզին։ Հետո թագավորը պառկում և ծալիկների վրա, թագուհին տեսնելով, վոր նա քնեց, հեռանում և Մի քիչ հետո ներս և գալիս մի մարդ, վեր և առնում թագավորի թագը, համբուրում և. թուն և ածում թագավորի ականջի մեջ և դուրս և գնում թագուհին վերադառնալով թագավորին դտնում և մեռած և վորը ու կոծ և անում. թունավորողը կրկին գալիս և յերկու յերիք ժուռնջիրի հետ և այնպես և ձևացնում, վոր-

պեան թե ժամանակցում է թագուհու վշտին Մեռյալն առնում են դուրս Թունավորողն աշխատում է ընծաներով թագուհու սիրտը շահել Թագուհին սկզբում դժկամություն է ցույց տալիս, բայց վերջն ընդունում է նրա անդը

Դուրս են գնում

ՈՁ. — Ինչ մխիթ ունի այս, տեր իմ

ՀԱՄ.— Miching maeeccho այսինքն չարագործություն

ՈՁ.—Յերևիլի մնջկատակը խաղի նյութն է

Ներկայացնում

Գալիս է նախերգակը

ՀԱՄ.—Հիմա սա մեզ կասե. դերասանները գաղտնիք պահող մարդիկ չեն. ամեն բան կհայտնեն

ՈՁ.—Կարծում եք, թե տեսարանի նշանակությունը կասե

ՀԱՄ.—Այո, և ամեն տեսարանի, որ նրան ցույց տաք. դուք մի՛ ամաչեք ցույց տալուց, նա էլ չի ամաչի նշանակությունն ասելուց

ՈՁ.—Շատ չարն եք, շատ չարը. լավ է խաղին մոխիկ տամ

ՆԱԽԵՐԳԱԿ.—Թե՛ մեր վողբերգի յեվ թե՛ մեզ համար
Ներում եմք խնդրում շատ խոնարհաբար,
Ցեվ ողոչում եմք, որ համբերությամբ
Հանեք պատվել մեզ ձեր ուշկնդրությամբ:

ՀԱՄ.—Նախերգեցնք և այս, թե մատանու մակագիրք

ՈՁ.—Այո, շատ կարճ է, տեր իմ

ՀԱՄ.—Կնոջ սիրո պես

Գալիս են յերկու դերասան, իբրև թագավոր և թագուհի

ԲԵՄԻ ԹԱԴ.—Յերանուն անգամ Ֆեբոսի կառքը արել
ե շրջան
Տելլոսի շուրջը, յեվ Պոսիդոնի աղի պետությանց
Յերեսուն անգամ տասներկու լուսին պատյս են
գործել,
Տասներկու անգամ յերեսուն գիշեր յերկրի շուրջ
դարձել,
Այն որից ինչ սերն մեր սրտերն իրար
զուգավորած ե,
Յեվ ինչ Հիմենեոս մեր ձեռքերն իրար
միավորված են:

ԲԵՄԻ ԹԱԴՀ.—Շատ այդքան անգամ արեվ ու լուսին
պող գան ու գընան.
Յեվ մեր սրտերը միշտ անկեղծ սիրով անքաժան մընան.
Բայց վայ, վերջերս նիվանդ ես թվում, յեվ
այնպես տրտում,
Սովորությանդ այնպես հակառակ, վոր վախ ես
ազդում.
Բայց յերկյուղներս ինչ ել վոր լինեն
Պող նրանք, տեր իմ, ձեզ չվրդովեն:
Կանանց սրտի մեջ յերկուղն ու սերը միշտ
համաչափ են,
Կամ նրանք բընավ զոյություն չունեն, յեվ կամ
անչափ են.
Թե վորքան մեծ ե իմ սրտի սերը
Ձեզ ցույց են տալել ձիգ տարիները.
Յեվ ինչ չափով վոր չափվում ե սերը,
Չափվում են նայել իմ յերկյուղները.

Ու աբրը մեծ է, փոխրիկ կասկածը մեծ վախ է դառնում.
Ցերբ մեծանում են փոխրիկ վախերը՝ սերն է մեծանում։

ԲԵՄԻ ԹԱԳ.—Ա՛վա՛դ, սիրելիս, պետք է բաժանվինք,
այն էլ էին որից.
Մարմնիս ուժերը հոգնել են այլևս իրենց պարտքերից.
Ցեվ ինձնից հետո սիրուն աշխարհում պետք է դեռ ապրես,
Հարգված, սիրված, յեվ գուցե նույնիսկ դու նորեն սիրես.
Ցեվ նոր ամուսին...

ԲԵՄԻ ԹԱԳՀ.—Ո՛հ, մի վերջացնի. Դադված վոչ աճե՛,
Վոր սիրտս այդպես հեզ դավանանե.
Ցերթ յես յերկրորդ ամուսին առնեմ՝
Թող վոր հավիտյան անիծյալ լինեմ.
Ցերկրորդ ամուսին չի առել մի կին,
Ցերթ չի դավել առաջնի կյանքին։

ՀԱՄ.—*(Առանձին) Ողջունդը ե, ողջունդը։*

ԲԵՄԻ ԹԱԳՀ.—Ցերբ այրի կինը փնտռում է կրկին մի նոր կողակից,
Սիրուց չե բնավ, այլ միայն շահի ատոր փափագից.
Մեռած ամուսնուս յես յերկրորդ անգամ ինձս եմ սպանում,
Ցերբ իր անկողնում յերկրորդ ամուսնուց նամբույր եմ առնում։

ԲԵՄԻ ԹՈՒԳ.—Ցես հավատում եմ թե այժմ ասկեղծ են
ես ասածներդ.
Բայց վորճաճ հանճախ խնճնեբս եճէ կոտրում մեր
վճռածներդ,
Ցեվ վտռտումդ մեր հիստդությաճ գերին է
միայճ,
Ծճվելիս հուժկու, բայց տոկուճությամբ խիստ
ատիստ է այճ.
Ցեվ հիմա վորպես մի տհաս պտուղ ծառին
կպած է,
Բայց ցած է բնկճում առաճց բաի տալու՝ յերբ վոր
հասած է:
Չարմացալի չե, վոր ժոռացում եճէ
Մեճէ մեզ վճարել, ինչ վոր մեզ պարտ եճէ.
Ինչ վար կրի մեջ վճռում եճէ գործել՝
Ցիրը վար կիրճն ասցավ, ասմին է զարձել
Ես՝ բառերն վիշտը, թե բուռն խինդը լավ է վոր
հանգչեճ,
Իրենց սեփական վտռտումներդ իրենէ կրջնջեճ,
Ուր խնդությունը հրնվում է առաջին, վիշտը
կսկծում,
Չնչին մի դեպքից հրնվում է վիշտը, յեվ խինդն է
յացում.
Հավերժական չե մեր այս ափսարին, յեվ շատ
պարզ բան է,
Վոր մեր բախտի հետ յեվ մարդկանց սերը
փոփոխական է.
Ցեվ վինչեվ այսոր դեռևս անլույծ է այս հարցը
խրթին,

Թե բա՞խտն ա արդյոք ախոռ առաջնորդ, թե սերը
բախտին.
Մեծ մարդն ընկնելիս՝ մտերիմները բոլոր
փախչում են.
Փորը մեծանալիս՝ բնտանիներր գալիս,
փակչում են,
Ցավ մինչեվ հիմա բախտին հետևող յեղած է
սերը.
Ով չե կարոտ ալ ճրան պակաս չեն բարեկամներր.
Ցավ ով փորձում է կարոտության վեջ փուք
բարեկամին՝
Նա իմն իր ձեռով դարձնում է ճրան իր
բուն բնտանին.
Բայց բոլ վոր կարգով յեղ ակացրնեմ, ինչ
ակսել եմ.
Մեր բախտն ու կամքը միշտ ընթանում են այնպես
հակրնդդեմ,
Վոր տապալում են մեր խորհուրդներր բախտի
բերմունքից,
Մերն է խորհուրդը, բայց ճրա յելքը անկախ մեր
կամքից։
Դու մրտածում ես, վոր չես լինելու մի յերկրորդի
կին.
Մեռնում է միտդ, յերբ վոր մեռնում է ու տերր
ճախկին։

ԲԵՄԻ ԹՈՂՀ.—Թող վոր յերկիրը ինձ անուն չտա, յեվ
յերկինքը՝ լույս,

Գիշեր ու ցերեկ հանգիստ ու հանույթ չտան
խղճալուս,
Թառ վոր փոխարկվին հուշ ու հավատըս
հուսահատության,
Ճգնավորի պես մատնված լինեմ բանտի
տրտմության,
Ցեվ ուրախության դեմքը խամրեցնող ցավերն
անհպարտ
Խուժեն խմբովին, կործանեն ինչ վոր բանկ է
ինձ համար,
Վոչ այս աշխարհում, վոչ հանդերձյալում ինձ
դադար չբտան՝
Թե այրի լինեմ յեվ ցանգացամ երկին ճոր
ամուսնության:

ՀԱՄ.—(Ոգեե իայինն) Թե հիմա գրժե իր յերդո մները:
ԲԵՄԻ ԹԱԳ.—Աճե՞ղ յերդումներ. այժըմ, սիրելիս, բող
ինձ մի ռոպե.
Վոգիս բմրում ե բող ֆուլը մի ինչ տալուկըս
խաբե:
ԲԵՄԻ ԹԱԳՀ.—Ֆուլը ուղեղիդ բող ռոռ աճե,
Ցեվ վոչ մի փորձանիմ մեզ չբաժանե՞:

Թագուհին գնում ե

ՀԱՄ.—Մայր իմ, ինչպես ես գանում այս խաղը:
ԹԱԳՀ.—Տիկինը շատ ե յերդվում, կարծեմ:
ՀԱՄ.—Ո՛, բայց խոսքը կըպահե:
ԹԱԳ.—Նյութին ծանոթ ես. վատ բան չըկա մեջը:
*ՀԱՄ.—Վոչ, վոչ. կատակ են անում. կատակով թուչն
վոչ մի վատ բան չկա:*

ԹԱԳ.—Ասպի անունն ինչ է։

ՀԱՄ.—Մկան թակարդ։ Ինչպես այլաբանորեն։ Այս խաղը մի մարդասպանություն ներկայացնում, որ կատարվել է վիննայում. Գոնզագո չե դուքսի անունը. կնոջ անունն էլ՝ Բաուիստա. հիմա կըտեսնենք. սրինկայության մի գլուխ— գործոց է. բայց մեզ ինչ փութք. դա չի կարող դիպչել Ձերդ վեհափառությանը, վոչ էլ մեզ. մենք մաքուր խիղճ ունինք. վերքոտ ձին թող խրտչէ, մեր մեջքը պինդ է։

Գալիս է մի դերասան, Լուցիանոսի դերում

Ահա մի մարդ, որի անունը Լուցիանոս է, թագավորի յեղբորորդին է։

ՈՑ.—Դուք այնպես լավ եք, մեկնաբանում, ինչպես խաղի նախերգակը։

ՀԱՄ.—Ես շատ լավ կարող եմ քո և սերպանիդ մեջ մեկնաբանի դեր կատարել, միայն թե խամաճիկների կատարվելը տեսնեի։

ՈՑ.—Շատ սուրն եք, տեր իմ, շատ սուրն եք։

ՀԱՄ.—Ցավից կըգոռայիր, մինչև սայրս բթացնեի։

ՈՑ.—Սրեի լավ, և սրելի վատ։

ՀԱՄ.—Այդպես եք սիրում ամուսին ընտրելիս։ Դեհ, սկսիր, մարդասպան. պրոյը տանի քեզ, մարդ, բայց թող այդ ծամածռությունները, և սկսիր։ Ձեռ կոկոնն ապտակը վրեժ է պահանջում։

ԼՈՒՑ.—Խորհուրդներ խայտառ, յեվ ձեռքեր ճարպիկ յեվ բույներ ագռա

Վոչ մի առարած իբր ակռաներս, յեվ ժամ ձեռքս։

Դու դժխեմ խառնուրդ, կես գիշերային խոտերից հավված,
Ցեղ Հեկատեյի աննծոով ցյուրված, յերիցրս ճեխված.
Բրնճակաև թովբրդ, մանուրիք ույժրդ բող շուս ներգործե,
Առջավե իսկույն առողջ կյանքի վրա, ավերմուցիք գործե՞:

Թուլնը թափում և քնողի ականջի մեջ

ՀԱՄ.—*Պարտեզի մեջ թունավորում և մարդուն, թագավորությունը ձեռք ձգելու համար. անունը Գոնզագո յե. պատմվածքն իսկապես դոյություն ունի, և շատ ընտիր իտալերեն գրված. հիմա կտեսնես, թե մարդասպանը ինչպես և ձևով բռնում Գոնզագոյի կնոջ սիրտը:*

ՈՁ *Թագավորը վեր կացավ:*

ՀԱՄ. —*Ի՞նչ ե, սուտ հրդեհից վախեցավ:*

ԹԱԳՀ.—*Ի՞նչ պատահեց ձեզ, տեր իմ:*

ՊՈԼ.—*Դադարեցրեք խաղը:*

ԹԱԳ.—*Ճրագ, ճրագ, պնաևք:*

ՊՈԼ.—*Ճրագ, ճրագ, ճրագ:*

Ամենքը դուրս են գնում բացի Համլետից և Հորացիոյից

ՀԱՄ. —Խոցված յեղնիկը բող ցավից վողբա
Առողջ յեղջերուն ուրախ թռչկոտե,
Մեկը բող բրնի, մյուսն արբուն մրնա,
Այս հին աշխարհի օրենքը այդ ե:
Ցեվ սրա հետ մեկտեղ, պարոն, մի անտառ փետուր գլխարկիս, յեվ յերկու մեծ կարմիր վարդ կոշիկներիս, մինչև բավական չի լինի, վոր ինձ

մի տեղ տան դերասաններուն մի խումբի մեջ, յետեւ մի որ ամբողջ գուցքս մոխիր դառնա։

ՀՈՐ.—Գուցե կ'ես բաժին կըտան ձեզ։

ՀԱՄ.—Վոչ, մի ամբողջ բաժին։

Գիտես, Դամոն իմ սիրելի,
Այս գաղձ յեղած ավերակ.
Գիսոսի տեղ ո՞վ ե ցուտել,
Մի իսկական... խեղկատակ։

ՀՈՐ.—Ավելի լավ եր իր հանգով վերջացնեյիր։

ՀԱՄ.—Սիրելի Հորացիո, հազար վոսկի գրավ կըդնեմ, վոր ուրվականի տատծը ճշմարիտ եր։ Նկատեցիր։

ՀՈՐ.—Այո, տեր իմ։

ՀԱՄ.—Յերբ թուռնավորելու խոսքը յեկավ՝ տեսար։

ՀՈՐ.—Շատ լավ դիտեցի։

ՀԱՄ.—Ա՛հ, հա։ Ցեկեք մի բան նվագեցնք. յեկեք, արնգահարներ։

Ցեթե այս արհաւ խաղը չըսիրեց,
Պատճառը այն ե... վոր չըհավանեց։

Գալիս են Ռոզենկրանց և Գիլդենշտեռն

Հայդե, մի քիչ յերաժշտութիւն։

ԳԻԼԴ.—Սպնիվ տեր, թույլ տվեք ձեզ յերկու խոսք ասեմ։

ՀԱՄ.—Մի ամբողջ պատմութիւն, կարող ես, պարոն։

ԳԻԼԴ.—Թագավորը, տեր իմ...

ՀԱՄ.—Հը, ինչ կա։

ԳԻԼԴ.—Քաշվել և իր սենյակը և տատիկ հուզված ե։

ՀԱՄ.—Շատ խմելուց։

ԳԻԼԴ.—Վոչ, տեր իմ, բարկութենից։

ՀԱՄ.—Յեթե խելացի մարդ լինեիք՝ բժշկին կհայտնեիք, վոչ թե ինձ. յեթե յես նրան լուծողական տամ՝ դուցե այդ նրան ել ավելի կմաղձոտացնե։

ԳԻԼԴ.—Ազնիվ տեր, մի քիչ ավելի կարդ ու կանոն դրեք ձեր խոսքերի մեջ, և այսպես մի խրտչեք խոսքիս նյութից։

ՀԱՄ.—Յես հանդարտ եմ, պարոն. խոսիր։

ԳԻԼԴ.—Թագուհին, ձեր մայրը, աստիկ վրդովված՝ ինձ ուղարկել և ձեզ մոտ։

ՀԱՄ.—Բարով ես յեկել։

ԳԻԼԴ.—Վոչ, տեր իմ. այդ քաղաքավարությունն անտեղի յե։ Յեթե կըբարեհաճեք ինձ որինավոր պատասխան տալ՝ ձեր մոր պատվերը կըկատարեմ. թե վոչ ձեր ներողությունը և իմ վերադարձը, կլինեն պաշտոնիս վերջավորումը։

ՀԱՄ.—Պարոն, չեմ կարող։

ԳԻԼԴ.—Ի՞նչ չեք կարող։

ՀԱՄ.—Որինավոր պատասխան տալ։ Ինձլա խանգարվել և. բայց ինչ պատասխան վոր կարող եմ տալ, կըտամ քեզ, կամ ավելի ճիշտ, մորս ուրեմն, կարճ, բանն ինչ և, աստված ես մայրս...

ՌՈԶ.—Ձեր մայրն աստված և, թե ձեր վարմունքը նրան շատ զարմացրեց և ապշեցրեց։

ՀԱՄ.—Զարմանալի վորդի, վոր կարողանում և իր մորը այսպես զարմացնել։ Բայց աստ տեսնեմ, այդ մայրական զարմացքը ուրիշ պոչ ել ո՞ւնի թե վոչ. այդ աստ։

ՌՈՋ.—Ուզում ե քնելուց առաջ խոսել ձեզ հետ իր առանձնաբանում։

ՀԱՄ.—կըհնազանդեմ, թեկուզ տասն անգամ ել մայրս լինի։

Ուրիշ գործ ել ունի՞ս ինձ հետ։

ՌՈՋ.—Տեր իմ, մի ժամանակ դուք ինձ սիրում եյիք։

ՀԱՄ.—Հիմա ել սիրում եմ, յերդվում եմ այս գողերով և շորթողներով։ (Ձեռքերն ե ցույց տալիս)։

ՌՈՋ.—Սիրելի իշխան, ի՞նչ ե ձեր այդ վրդովմունքի պատճառը. ինքներդ ձեր ձեռքով փակում եք ձեր ազատության դուռը, յերբ յավներդ թագցնում եք ձեր բարեկամից։

ՀԱՄ.—Պարոն, հաճաջատիմելու մարմանջն ե ինձ տանջում։

ՌՈՋ.—Ի՞նչպես կարելի յե, յերբ թագավորն ինքն ձեզ ե նշանակել Դանեմարքայի դահաժառանգ։

ՀԱՄ.—Այո, պարոն, բայց «մինչև խոտը բուսանի»... Առակը մի քիչ մքլոտել ե։

Գալիս են դերասաններ և յերաժիշտները

Ա՜հ, յերաժիշտները. տվեք ինձ այդ սրինգներից մեկը։ (Գիլդենցտերնին) Ցեկ, քեզ մի բան ասեմ... Ինչո՞ւ յես այդպես յետեվիցս ընկել, և չես թողնում, վոր շունչ քաշեմ. կարծես վորոշած լինես ինձ թակարդի մեջ ձգել։

ԳԻԼԴ.—Ա՜հ, տեր իմ, յեթե անձնվիրությունս շատ խիզախ ե, պատճառն այն ե, վոր սերս դեպի ձեզ քաղաքավարության ուշ չի դարձնում։

ՀԱՄ.—Լավ չհասկացա. կարո՞ղ ես այդ արնգի վրա մի բան նվագել։

ԳԻԼԴ.—Վոչ, տեր իմ։

ՀԱՄ.—Ինդրում եմ։

ԳԻԼԴ.—Հավատացիք, չեմ կարող։

ՀԱՄ.—Աղաչում եմ։

ԳԻԼԴ.—Կյանքումս սրինդ ձեռք չեմ առել, տեր իմ։

ՀԱՄ.—Բայց դա նուշնչափ դյուրին բան և, վորչափ տեսա ասելը. մատերդ դիր այս լեզվակների վրա և շարժիր, բերնովդ ել փչիր, և տես ինչ հրաշալի յերաժշտություն դուրս կըգա. նայիր, ահա լեզվակները։

ԳԻԼԴ.—Բայց չեմ կարող մատերս այնպես շարժել, վոր մի նևրդաշնակ բան դուրս դա. այդ ճարտարությունը չունիմ։

ՀԱՄ.—Դե լավ. հիմա տես թե ինչ անարժան արարած ես համարում դու ինձ. ուզում ես նվագել իմ վրա, այնպես ես ձևացնում, վորպես թե ծանոթ ես իմ լեզվակներին հետ. ուզում ես իմ գաղտնիքը սրտիցս դուրս քաշել. ուզում ես ձայնս փորձել՝ սկսած ամենացած նոտայից մինչև ձայնաշարիս ամենաբարձրը. մյուս կողմից՝ շատ յերաժշտություն և հրաշալի հնչյուն կա այս փոքրիկ գործիքի մեջ, և դու չես կարողանում նվագել. մերդ աստուծո, կարծում ես թե ինձ մի արնգի չափ ել չըկամ. անվանիր ինձ, ինչ գործիք վոր կուզես. թեև կարող ես ինձ չարչարել, բայց վրաս նվագել չես կարող։ (Գալիս է Պոլոնիուսը) Բարեվ ձեզ, պարոն։

ՊՈԼ.—Տեր իմ, թագուհին կամենում է խոսել ձեզ հետ, և խնդրում։

ՀԱՄ.—Տեսնում եք այն ամպը, որ կարծեք ուղտի ձև ունի։

ՊՈԼ.—Պատարագը վկա, ուղտի նման է, ճիշտ որ...

ՀԱՄ.—Ինձ թվում է, թե մի աքիսի նման է։

ՊՈԼ.—Մեջքը աքիսի չե նման։

ՀԱՄ.—Կամ կետ ձկան։

ՊՈԼ.—Շատ նման է կետ ձկան։

ՀԱՄ.—Ուրեմն շուտով կըգամ մորս մոտ։ (Առանձին) Սրանք ինձ այնպես հիմարի տեղ են դնում, որ քիչ է մնում սիրտս տրաքվի։ Շուտով կգամ։

ՊՈԼ.—Այդպես էլ կասեմ։

Գնում է

ՀԱՄ.—Ի՜նչ դյուրին բան է «շուտով» ասելը։

Մենակ թողեք ինձ, բարեկամները։

Ամենքը գնում են բացի Համլետից

Ահա գիշերվա հուռութքի ժամը,
Յերբ հորանջում են գերեզմաննները,
Յեվ դժոխքն ինքը ժանտախտ է փչում աշխարհի վըրա։
Այժմ կարող եյի տաք արյուն խմել,
Յեվ այնպես դաժան գործեր կատարել,
Որ լույս ցերեկը կըդողահարվեր վըրան նայելուց
Գընամ մորըս մոտ։ Ո՜վ սիրտ, մի կորցնիր
քո բընությունը.
Ներոնի հոգին թող մուտք չըգտնե այս պինդ
կուրծքի մեջ.

Թող անգութ լինեմ, բայց վոչ հրեշային.
Պետք և մորըս հետ դաշուններ խոսեմ, բայց
վոչ գործածեմ.
Լեզուս ու հոգիս թող այս բանի մեջ կեղծավոր
լինեն.
Վորչափ ել նըրան խոստով նախատեմ,
Հոգիս, մի թուլլ տար, վոր գործով դատեմ։

Գնում և դուրս

ՏԵՍԱՐԱՆ ԳԵՐՐՈՐԴ

Գալիս են Թագավորը, Ռոզենկրանց և Գիլդենշտեռնը

ԹԱԳ.—Ձեմ սիրում նըրան, վոչ ել մեզ համար
ապահով բան և
թուլլ տալ, վոր նըրա խելագարությունն
ազատ թափառի։
Գընացեք ուրեմն և պատրաստվեցեք.
Իսկույն կուղարկեմ ձեր հանձնապիրը.
Պետք և նա ձեզ հետ Անգլիա գնա.
Մեր սահմանի նկատումները չեն կարող
թուլլ տալ
Վոր վտանգը մեզ այնպես մոտ կենա,
Ինչ վոր ամեն ժամ ծագում և նըրա
լուսնոտությունից։

ԳԻԼԴ.—Շուտ կըպատրաստվինք. շատ նըվիրական և
սուրբ յերկյուղ և
Հոգալ այնքան շատ անձերի մասին,
Վոր Ձեր Մեծության շընորհից ապրում և
սընանվում են։

ՌՈԶ.—Սոսկ և մանավոր անհատն ել պարտ և

Բայց արդյոք այդպես վրեժը կըհանվի. պետք
և լավ կշռել.
Մի պիղծ սըրիկա հորըս սպանե, և փոխարենը,
Յես, միակ վորդին, նուչն սըրիկայի յերկինք
ուղարկեմ.
Բահ, շնորհ և դա, վարձ և, վոչ թե վրեժ.
Նա հորըս բռնեց անապինիվ կերպով, լավ
կերած խմած,
Բոլոր մեղքերը լրիվ բողբոջած, վաո, ինչպես
մալիս.
Յեվ թե իր հաշիվն ինչ վիճակում և,
Ո՞վ և իմանում, բայց միայն Աստված.
Սակայն դատելով մեր հանգամանքով և
մտածությամբ,
Ծանր և վիճակը. ուրեմն ինչ վըրեժ և, վոր
զարկեմ նրան ;
Ճիշտ, յերբ իր հոգին սրբվելու վրա յե,
Յերբ վոր հարդարված և պատրաստված և իր
անցքի համար:
Վոչ, հետ գընա, սուր. ընարիր ավելի
սոսկալից առիթ,
Յերբ գինով քընած, կամ կատաղությամբ
բորբոքված լինի,
Կամ իր անկողնի ազգապղծական վայելչության
մեջ,
Կամ թուղթ խաղալիս, կամ հայհոյելիս, մի
գործի վրա,

Վորից փրկուԹյան հոտ անդամ չը գա,
Յեվ այնպես զարկէր, վոր կըրունկները
չերկնքին դիպչեն,
Յեվ հոգին այնպես պիղծ ու սեվ գառնա
Ինչպես այն գժոխքն, ուր դընալու չես Մայրս
սպասում է...
Այդ դեղը միայն չերկարացնում է հիվանդ
որերըդ։

ԹԱԳ.—(Զոհած) Բառերս թեև թռչում են վերև,
Սակայն մտքերըս մընում են ներքև,
Յերբեք բառերը առանց մտքերի չերկինք չեն
հասնիլ։

Գնում է

ՏԵՍԱՐԱՆ ԶՈՐՐՈՐԴ

Թագուհու առանձնասենյակը

Գալիս են Թագուհին և Պոլոնիուս

ՊՈԼ.—Նա իսկույն կըգա. խիստ չեղեք իր հետ.
Ասացեք նրան թե իր խաղերը մի տեղ են
հասել,
վոր ել հանդուրժել անկարելի չե,
Յեվ թե շատ անդամ Ձեր ՄեծուԹյունը
միջամըտել է,
Յեվ պատվար չեղել արքայի ցասման և նըրա
միջև։
Յես կըԹափնըվիմ հենց այստեղ։ Խնդրեմ, խիստ
չեղեք իր հետ։

ՀԱՄ.—(Դրսից) Մայր, մայր, մայր։

ԹԱԳՀ.—(Պոլոնիուսին) Ապահով չեղեք. իմ մասին
չերբեք վախ մի՛ ունենաք։

Հեռացեք. լսում եմ իր վոտքի ձայնը։

Պոլոնիուս թաղնվում է արքայի յետև. գալիս է Համլետ

ՀԱՄ.—Աստ, մայր, ինչ կա։

ԹԱԳՀ.—Համլետ, դու հորըդ խիստ վշտացրել ես։

ՀԱՄ.—Մայր իմ, դու հորըս խիստ վշտացրել ես։

ԹԱԳՀ.—Ամոթ ես, ամոթ. դու վատ լեզվով ես պատասխան տալիս։

ՀԱՄ.—Ամոթ ես, ամոթ. դու չար լեզվով ես հարցումներ անում։

ԹԱԳՀ.—վահ, ինչ ես, Համլետ։

ՀԱՄ.—Ի՞նչ է պատահել։

ԹԱԳՀ.—Քեզ ճանաչում ինձ։

ՀԱՄ.—Ինչքա՜ն չես, շատ լավ,
Թագուհին ես, դու, տեքրըդ կինն ես, վոչ քարով մայրըս։

ԹԱԳՀ.—Ցնթե այդպես է, մարդիկ կըկանչեմ քեզ խելքի բերին։

ՀԱՄ.—Թող, թող, յեկ նստիր. չգնաք է շարժվես,
Ձգնաք է ընդաս մինչև դիմացըդ հայելի պահեմ,
Վորի մեջ տեսնես հոգուդ ներքինը։

ԹԱԳՀ.—Ի՞նչ ես անելու. ինձ սպանել ես ուզում. ոգնությո՜ւն,
Եհե՛յ, ոգնությո՜ւն։

ՊՈԼ.—(Արրասի ներսից) Եհե՛յ, ոգնությո՜ւն, հասե՛ք, ոգնությո՜ւն։

ՀԱՄ.—(Սուրը քաշելով) Այս ինչ է, մո՞ւկ է։
Սուրը խրում է արքայի մեջ
Մեռա՛ր. մեկ դուկատ, վոր մեռար պրծա՛ր։

ՊՈԼ.—(Ցեսեվից) Ո՜հ, սպանեց ինձ։

Ընկնում է դեռին և մեռնում

ԹԱԳՀ.—Վայ ինձ, ինչ արիր։
ՀԱՄ.—Զգիտեմ դեռ ինչ. թագավորն է սա։
ԹԱԳՀ.—Ո՜հ, ինչ հախուռնն, արյունահեղ գործ։
ՀԱՄ.—Արյունահեղ գործ. գրեթե նուէյնչափ վատ,
սիրելի մայր իմ,
Վորչափ սպանել մի թագավորի
Ցեվ ամուսնանալ նըրա յեղբոր հետ։
ԹԱԳՀ.—Վորչափ սպանել մի թագավորի՞։
ՀԱՄ.—Հենց այդպես, տիկին. այդպես ասացի։

Աըթասը բարձրացնում է և տեսնում է, վոր Պոլոնիուսն է

Ա՜յ թշվառ, հախուռն, միջամուխ հիմար. բարի
ճանապարհ.
Քեզնից մեծի տեղ յեննթադրեցի քեզ. ստացիր
բախտըդ.
Տես ինչ վտանգ կա ուրիշի գործին խառնվելու
մեջ։

Թագուհուն

Հիրիք ձեռքերըդ այդպես գալարես. հանդարտ
կաց, նատիր,
Ցեվ թող տուր վոր յես սիրտըդ գալարեմ.
Ցեվ պիտի անես՝ թե կակուղ նյութից
հորինված լինի.
Ցեթե անիծյալ սովորությունը
Պղնձացըրած չըլինի նըրան,
Ցեվ թումբ ու պատնեշ դարձըրած ամին
զգայմունքի դեմ։

ԹԱԳՀ.—Յես ինչ եմ արել, որ հանդգնում ես այդպես աղմուկով
Բարբառել իմ դեմ։
ՀԱՄ.—Մ՛ինպիսի մի գործ,
Որ համեստության շնորհքն ու շիկնումն աղավաղում է,
Առաքինությունը կեղծ է անվանում,
Յեվ անմեղ սիրո սիրուն ճակատից պճղում է վարդը
Յեվ նըրա տեղը մի պալար դընում.
Որ դարձընում է պսակի ուխտը
Խաղամոլների սուտ յերդումներից ավելի խարդախ.
Որ ամուսնության դաշինքի միջից քաղում է վոգին
Յեվ դարձնում է անուշ կըրոնը բառերի հագներգ։
Յերկնքի դեմքը բոցավառված է,
Այո, և այս պինդ, կայուն գանգվածը,
Թախծալից դեմքով,
Որպես մոտեցած աշխարհի վերջին՝
Վշտահարված է արարքիդ վըրա։
ԹԱԳՀ.—Վայ ինձ, ինչ արարք, որ հենց նախերգից
Այսպես դուգռում և վորոտում ես։
ՀԱՄ.—Նայիր դու այտեղ, նախ այս պատկերին, և ապա սըրան,
Այս յերկու յեղբոր դիմագիրներին.
Տես ինչ շընորհք կա այս դեմքի վըրա.

Իսկ Հիպերիոնի գանգուր վարսերը,
Ճակատը կարծես Արամազդինն և.
Աչքը՝ Արեսի, սաստելու համար և
հրամայելու.
Կեցվածքը նըման բանբեր Հերմեսին,
Որ յերկնահամբուրը մի լուռան վըրա նոր
իջած լինի.
Մի համադրություն, մի ձև, իսկապես,
Որի վրա կարծես ամեն մի աստված իր կնիքն
և դըրել՝
Իր հավաստիքը աշխարհին տալու, թե ահա մի
մարդ:
Այս եր ամուսինդ. իսկ այժըմ նայիր,
այս
Մյուսին, նայիր.
Այս և ամուսինդ. բորբոսնած մի հասկ,
Որ վարակում և առողջ յեղբորը: Աչքեր
ունիս դու,
Յեվ կարողացար այս շքեղ լուռան արտից
իջնել,
Յեվ պարարտանալ այս ճահիճի մեջ: Հա,
աչքեր ունիս:
Դու հո չես կարող սեր անվանել այդ.
Ջո տարիքի մեջ այդ բորբոքը մեղմ և և
խոնարհ,
Յեվ դատողության սպասարկու չե:
Յեվ ինչ դատողություն կարող և անցնել
սըրանից սըրան:

Զգացում ունիս. այլապես իղձեր չեյիր
ունենա.
Բայց անտարակուսս այդ զգացումը կաթված և
ստացել.
Բանի վոր յերբեք խնդութիւնն այդքան չեր
դուրս գա ճամբից,
վոչ ել զգացումն այդչափ ցընորքի գերին
կըդառնար,
վոր ընտրողութեան մի փոքրիկ քանակ պահած
չըլիներ
Այսքան ահագին մի տարբերութիւն
դանազանելու։
Ինչ դեվ և յնղել, վոր աչքակապուկ խաղալով
քո հետ,
Շորթել և խելքըդ Աչքերը առանց շոշափելիքի,
Շոշափելիքը առանց տեսութեան,
Ականջները առանց ձեռքի կամ աչքի,
Հոտառութիւնը առանց մյուսների,
Կամ հավատարիմ մի զգայարանի հիվանդ
մասնիկն ել

Չեր կարող այդքան անզգա լինել
Ամոթխածութիւն, ձեր և շինականքըդ՝ Ո՛վ
ըմբռաստ դժոխք
Յեթե կարող ես տարիքավոր կընոջ
վոսկորների մեջ
Այսքան հետաքնել՝ թող հըրաբորբոք
ջահիլութեան մոտ

Առաքինությունն ինչպես մոմ լինի, և բոցից հալվի։
Ամոթ մի կոչեր, յերբ գրոհ և տալիս բռնակալ հրայրքը,
Յերբ սառուցն անգամ այնպիսի թափով բոցավառվում է,
Յեվ դատողությունն ինքն էլ դառնում է կրքի կավատը։
ԹԱԳՀ.—Ո՜հ, Համլետ, լուիր. աչքերս ուղղում ես դեպի հոգուս խորքը
Վորտեղ տեսնում եմ սեվ, խոցը բիծեր,
Վորոնք չեն ուզում դունաթափ լինել։
ՀԱՄ.—Յեվ լինչ, և ապրել մի ճարպուտ մահճի գարշ
քրտինքի մեջ,
Ախտի մեջ խաշված՝ իրար գդվելով և
սիրվըտելով
Մի խոզանոցի աղբույթի վըրա։
ԹԱԳՀ.—Ո՜հ, էլ մի խոսիր, Համլետ, մի խոսիր.
Ամեն մի բառըդ մի դաշույնի պես ականջս և
խրվում։
Էլ բավական է, անուշիկ Համլետ։
ՀԱՄ.—Մի սրիկա, մարդասպան, մի անարգ ստրուկ,
Վոր հին ամուսնիդ մեկ տասներորդի
քսաներորդն էլ չե,
Թագավորների այդ խեղկատակը,
Թագավորության և իշխանության քսակահատը,
Վոր պահարանից թագը գողացավ, դրեց գրպանը։
ԹԱԳՀ.—Ա՜խ, բավական է։

ՀԱՄ.—Ցնցոտիներէն, կարկատաններէն այդ
թագավորը...

Գալիս է ուրվականը

Ա՜հ, փրկեցեք ինձ, և ձեր թեւերով ճախրեցեք
վըրաս,
Յերկնային պահակներ։—Ի՞նչ է ցանկանում
սրբազան վոգիդ։

ԹԱԳՀ.—Ավաղ. ցնդել է։
ՀԱՄ.—Չե՞ վոր յեկել ես դանդաղկոտ վորդուդ
հանդիմանելու,
Վոր փչացնելով ժամանակ ու կէրք՝
հետաձգում է
Ահեղ հրամանիդ սոխպողական
գործադրութիւնը։

Ո՜հ, ասա։
ՈՒՐ.—Մի մոռացիր դու, այցելությունըս նըրա
համար է,
Վոր սրե կըրկին դրեթե բթացած
մտադրությունըդ։
Նայէր, զարդանդը պատել է մորըդ։
Ո՜հ, մարը նրա վոգորող հոգու յեվ նըրա միջև։
Յերեվակայությունն ավելի խիստ է տըկար
մարմնի մեջ։
Ոսոխը մորըդ հետ։
ՀԱՄ.—Ի՞նչ ունիս, տիկին։
ԹԱԳՀ.—Դու՛ր իՙնչ ունիս, դո՛ւ, վոր աչք ես հառել
դատարկությանը,
Յեվ խոսակցում ես անհայութ ոդի հետ.

Աչքերիդ միջից վոգիդ խուժում և վայրենի
թափով,
Ցեվ, վոգի ձայնից քընից վեր թըռած
պինվորների պես՝
Պառկած մոդերըդ, կարծես կյանք առած,
Ցցվում են, կանգնում արմատների վրա.
Ո՜հ, քաղցրիկ պավակ, հուզմունքիդ տակի և
ըոցի վերա
Սառն համբերություն պետք և սրսկես։ Այդ
ուր ես նայում,
ՀԱՄ.—Ներան, ա՛յ, ներան. տես, ինչպես դուննատ
աչք և վոլորում.
Իր տեսքն ու դաստը, եթե քարերին քարոզ
կարդային,
Ներանց պպայուն կըդարձնեյին։—Մի նայիր
վերաս,
Մի դուցե քո այդ պթատրատությամբ
Փոխես իմ դաժան վորոշումները. և ա՛յն
ժամանակ,
Իմ անեծքը թափուր կըլինի իսկական գուդնից.
Արցունքներ դուցե, փոխանակ արյան։
ԹԱԳՀ.—Այդ ամեն ես խոսում։
ՀԱՄ.—Ջես տեսնում, այնտեղ։
ԹԱԳՀ.—Վոչինչ չեմ տեսնում, թեև տեսնում եմ
ամեն ինչ վոր կա։
ՀԱՄ.—Ցեվ վոչ ել լսում։
ԹԱԳՀ.—Ցեվ վոչ ել լսում, բացի մեր ձայնից։
ՀԱՄ.—Վաճ, այնտեղ նայիր, ահա, հեռանում է.

Հայրըս, իր պատասով, ինչպես յերբ վոզջ եր.
Նայիր, հենց հիմա յելնում ե դունից։

Ուրվականն անհետնում ե

ԹՍԳՀ.—Դա քո ուղեղի դարբնածն ե միայն.
Այդպես անմարմին գոյացութիւններ
ստեղծելու մեջ
Յերեվակայութիւնը շատ ընդունակ ե։
ՀՍՄ.—Յերեվակայութիւն, յերակըս նուլնքան,
չափով ե խփում
Վորքան վոր քոնը, և նուլնքան առողջ նըվագ
ե ածում։
Վոչ, ատածներըս խենթութիւնից չեն.
Կուզես, փորձիր ինձ, և յես կարող եմ ատածըս
կրկնել,
Իսկ խենթութիւնը շեղումներ կաներ։
Ի սեր Ատուծո, մայր իմ, մի ղընիր քո
հոգուդ վերա
Հանգստացուցիչ այն սպեղանին,
Թե խենթութիւնն ե քեզ հետ խոսողը, վոչ թե
քո մեղքը։
Դա խոցոտ սեղը մաշկով կըծածկե, կաշի
կըբերե,
Այն ինչ գարշելի ապականութիւնը, ներսից
փորելով,
Պիտի վարակե անտեսանելի։
Խոստովանք արա յերկնքի առաջ,
Զղջա անցյալը, խույս տուր գալիքից,

Աղբույս մի՛ շաղ տար վատ խոտերի վրա,
վոր ել չուռճանան։
Ներիր ինձ իմ այս առաքինությունը,
Քանզի այս գիրցած ժամանակների
պարարտության մեջ
Առաքինությունն ինքն և տխլված
Մոլությունից նեղում աղերսել, այո,
խոնարհվիլ,
Յեվ հրաման խնդրել՝ նըրան բարություն
անելու համար։

ԹԱԳՀ.—Ա՛հ, Համլետ, սիրտըս մինչից կես արիր։
ՀԱՄ.—Դեն ձգիր քեզնից նըրա վատ կեսը,
Յեվ մյուս կիսովը մաքուր կյանք վարիր։ Բարի
գիշեր քեզ։
Բայց հորեղբորըս դարշ անկողինը մի՛ մտնիր
կրկին.
Առաքինություն ստանձնիր գոնե, թեկուզ
չունենաս.
Քանզի այն հըրեշ սովորությունը,
Վոր ճարակում և ամեն զգացում,
Մոլությանց մեջ դեվ, գոնե այս բանով
հրեշտակ և նա,
Վոր նաև ազնիվ և լավ գործերի վարժության
համար
Տալիս և հազուստ կամ մի համազգեստ՝
զգուրալ հագնելի։
Ձախիր քեզ այս գիշեր, և դա մի տեսակ
զգուրություն կտա

Հաչորդ դիշերվա ժուժկալութեանդ.
Յերրորդն ավելի դյուրին կըլինի. և
վարժութիւնը
կարող է, այո, նույնիսկ բընութեան դրոշմը
փոխել,
կամ հաղթել դեվին, կամ թե հրաշալի իր
կարողութեամբ
Դուրս ձգել նրանս նորեն, բարի դիշեր,
Յեվ յերբ դու ուզես որհնըված լինել,
Յես ել կըխնդրեմ քո որհնութիւնը։

Պոլոնիուսին ցույց տալով

Այս մարդու համար արտանց պղջում եմ.
բայց յերկինքըն ուզեց,
Նըրան ինձանով և ինձ նըրանով պատժելու
համար,
Վոր յես լինելի իր խարազանը և դատավորը։
Կըտանեմ նըրան, և նըրա մահվան
Ինքըս կըլինեմ պատասխանատուն.
Կրկին և կրկին բարի գիշեր քեզ.
Թող անդութ լինեմ, հենց մի այն բարի լինելու
համար։
Վատ է սկսվել, բայց դեռ գալու յե ավելի
վատը։

Մեկ բառ ել, մայր իմ։

ԹԱԳՀ.—Ի՞նչ պետք է անեմ։

ՀԱՄ.—Վոչ այս բաները, վոր հիմա կասեմ. վոչ,
ամենևիվին.

Թող փքված արքան նորեն քարշ քեզ իր
անկողինը,

Յեվ վայփայելով թուշըդ կզմբթե, քեղ
«մուվիկ» կանչե,
Յեվ իր պարշահոտ մի գուդգ համբուդրով,
կամ թե անիծյալ իր մատներովը վիզըդ
շոյելով՝
Բոլոր յեղածը խոստովանել տա,
թե յես եյսպես խենթ չեմ, այլ խենթ եմ
խորամանկորեն։
Հարմար կըլինի վոր հայտնես նրան. քանի
վոր ծիվ ե,
Յեթե վոչ միայն մի սիրուն, պչատ, խոհեմ
թագուհի,
Վոր մի չղջիկից, կամ մի պադպոկից,
արջակատվից
Այսպես թանկագին տեղեկություններ
թագցըրած պահեր։
Վոչ, այլ հակատակ դաղտնապահության և
վողջմտության՝
Բաց քո զամբյուղը. տանիքի վըրա,
Թող թռչուններըը թռչեն, և ինքըդ մոխր
նըրա մեջ,
Ցեվ հանըածանոթ կապիկի նման՝ փորձելու
համար,
Կտուրից ընկիր, և վիզըդ կոտրիր։
ԹԱԳՀ.—Վոչ, վատահ յեղիր. յեթե բառերը շունչ են,
շունչը՝ կյանք,
Կյանք չկա իմ մեջ քո ասածներն
արտաբերելու։

ՀԱՄ.—Գիտեմ, վոր պետք է Անգլիա գընամ։
ԹԱԳՀ.—Մոռացել եյի. այդպես է վճռած։
ՀԱՄ.—Նամակ է կնքված. և իմ այն յերկու
դասընկերները,
Վորնոց կարող եմ այնքան վստահել, վորքան
իմերի,
Իրենք են տանում հրամանաթուղթը.
Պետք է ինձ համար ճանապարհ հարթեն,
Յեվ առաջնորդեն դեպի վորոգայթ։ Հոգ չէ,
թող գործեն.
Զվարճություն է ավան վորոգին
Հենց իր սեփական պայթուցիկներով ողը
թռցնել.
Յեվ բանըս վատ է, եթե յես նրանց
ականների տակ
Դեռ մի կանգուն էլ խորունկ չփորեմ,
Յեվ ցատկեցնեմ մինչև լուսինը։ Ի՞նչ քաղցր
բան է,
Յերբ յերկու դավեր դալիս են շիտակ իրար
հանդիպում։
Այս մարդն ինձ համար գործ է դառնալու։
Պետք է փորոտիքը քաշ տամ տանեմ կողքի
սենյակը։
Մայր, բարի գիշեր։ Այս խորհրդականն ինչպես
լուռ ու մունջ,
Յեվ խորհրդապահ, և ծանրախոհ է,
Սա վոր իր կյանքում խեղճ ու շաղակրատ մի
սրրիկա յեր։

Յեկ, պարոն, պետք է գործըդ ավարտեմ։
Մայր, բարի գիշեր։
Հակառակ ուղղությամբ դուրս են գնում։
Համլետ քաշ է տալիս Պոլոնիուսի դիակը։

ԱՐԱՐՎԱԾ ԶՈՐՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Մի սենյակ դղյակում
Գալիս են Թագավորը. Ռոզենկրանց և Գիլդենչտեռն

ԹԱԳ.—*Մի բան կա քո այս հառաչանքներին, խոր*
հևքերի մեջ.
Պետք է բացատրես. հարմար է վոր մենք
պատճառն իմանանք.

Վորդիդ վո՞րտեղ է։

ԹԱԳՀ.—*(Ռոզ. յեվ Գիլդ.-ին) Խնդրեմ մի րոպե մեզ*
մենակ թողնեք։

Ռոզենկրանց և Գիլդենչտեռն դուրս են գնում

Վայ ինձ, այս գիշեր ի՜նչ տեսա, տեր իմ։

ԹԱԳ.—*Ի՞նչ, Գերտրուդ, ասա. Համլետն ի՞նչպես է։*

ԹԱԳՀ.—*Կատաղած ինչպես հողմը և ծովը,*
Ցերը վոր մրցում են թե վրն և զորեղ.
Իր սանձակոտոր մոլեգնության մեջ լսելով
մի բան,
Վոր շարժվում եր արրասի յետևը սուրը դուրս
քաշեց,

Յեվ «մռւկ ե, մռւկ ե» աղաղակելով՝ խոլ
խռւճասլի մեջ
Սպանեց այն խեղճ բարի ծերռւկին վոր
թագնըված եր։
ԹԱԳ.—Ինչ տոսկալի դործ։ Նռւյնը կարող եր և մեզ
պատահել,
Յեթե ինքներըս այնտեղ լիններնք։
Իր ազատռւթյռւնն ամենքիս համար
վտանգավոր ե,
Ինչ համար անգամ, մեզ, ամեն մեկիս։
Ավազ, այսպիսի ժանտ գործի համար ինչ
պատասխան տանք։
Այդ ել մեր վզին պիտի բարդվի, մեզ, վոր
պարտ եյինք
Այդ խելացըներր յերիտասարդին,
հեռատեսռւթյամբ,
Սանձըված, փակվաձ, մեկռւսի պահել.
Բայց ավազ, մեր սերն այնքան անբավ եր,
Վոր չըհասկացանք թե ինչ եր պատշաճ,
Այլ, վատ ախտի տեր մարդու պես՝ թագռւն
պահելու համար,
Թողինք վոր ախտը ճարակե կյանքի մինչ
ուղն ու ծռւծկր։
Ո՞ւր ե գնացել։
ԹԱԳՀ.—Իր սպանածին քաշ տըվավ տարավ.
Յեվ այդ բանի մեջ իր խեղթռւթյռւնն իսկ,
հանքի վռսկու պես,

Վոր խառըն լիներ ավելի նվաստ մետաղների հետ,
Փայլում և մաքուր. նա արտասվում և յեղածի վըրա։

ԹԱԳ.—Ցեկ գնանք, Գերտրուդ. պետք և հենց այսոր,
Նախքան արևը լեռան գագաթը շոշափած լինի՝
Նըրան նավ գըրած և ճամբած լիննենք.
Հետո, մեր բոլոր վեհափառությամբ և ճարտարությամբ
Այս անարդ գործը թե գունավոլենք և թե չքմեղենք։

— Ներե՛յ, Գիլդենշտեռն։

Գալիս են Գիլդենշտեռն և Ռոզենկրանց

Բարեկամներըս, գընացեք ձեզ հետ նոր մարդիկ առեք.
Համլետ խենթությամբ խեղճ Պոլոնիուսին գարկել և սպանել,
Ցեվ մոր սենյակից քաշել, դուրս տարել.
Գընացեք գըտեք, քաղցըր խոսեցեք,
Մարմինն ել տարեք գըրեք մատուռը։
Շուտ արեք, խնդրեմ։

Ռոզենկրանց և Գիլդենշտեռն դուրս են գնում

Ցեվ գնանք, Գերտրուդ, կանչենք մեր խոհեմ բարեկամներին,
Ցեվ հայտնենք նրանց թե այն, ինչ վոր մենք ուզում ենք անել
Թե ձախող դեպքը .. դուցե այս կերպով,
Գըրպարտությունը,

Վոր յերկրապնդի տրամադծի մեկ ծայրից
մյուս:
Այնպես շեշտակի սըլացընում և իր թունոտ
նետը,
Ինչպես թնդանոթն՝ իր նշանակին,
Վրխպի և անցնի մեր անուշերը,
Յեվ անխոցելի ողը հարվածե Գլնանք,
սիրելիս.
Վշտով ու վախով լցված և հոգիս:

Գնում են
ՏԵՍԱՔԱՆ ՅԵՐԿՐՈՐԴ
Մի ուրիշ սենյակ դղյակում
Գալես և Համլետ

ՀԱՄ.—Ապահով տեղ պահեստ և դրված:

Ռոզենկրանց և Գիլդենշտեռն բեմի ներսից

ՌՈԶ.—Համլետ, իշխան Համլետ:
ՀԱՄ.—Կնց, այս ինչ ձայն և. ոլ և Համլետ կանչում:
Ահա յեկան:

Ռոզենկրանց և Գիլդենշտեռն գալիս են

ՌՈԶ.—Մարմինն ինչ արիք, տեր իմ:
ՀԱՄ.—Խառնեցի հողին, իր ազգականին:
ՌՈԶ.—Ասացեք թե վերտեղ և, վոր առնենք
մատուռը տանենք:
ՀԱՄ:—Մի հավատաք:
ՌՈԶ.—Ինչ բանի չըհավատանք:
ՀԱՄ.—Վոր յես կարող եմ ձեր գաղտնիքը պահել,
իսկ իմս վոչ: Բայի դրանից՝ յերբ հարց անողը
մի սպունգ և, մի աբքայորդի ինչ պատասխան
կարող և տալ:

ՌՈՋ.—Ի՞նձ սպունգի տեղ եք դնում, տեր իմ։

ՀԱՄ.—Այո, պարոն, մի սպունգ վոր ծծում է թափավորի շնորհը, պարգեվները, պաշտոնները. բայց այդ տեսակ պաշտոնյաները հետո յեն թափավորին պետք գալիս. թափավորը նրանց պահում է իր բերանի անկյունում, ինչպես կապիկը ընկույզն է պահում. սկզբից դնում է բերանը, վոր վերջը կուլ տա. յերբ նա պետք ունենա ձեր հալաքածին, մի քիչ հուպ կտա, և դուք, սպունգներդ, նորեն կըցամաքեք։

ՌՈՋ.—Ձեր ասածը չեմ հասկանում, տեր իմ։

ՀԱՄ.—Ուրախ եմ վոր չեք հասկանում. սուր խոսքը քնում է հիմար ականջում։

ՌՈՋ.—Տեր իմ, պետք է ձեզ ասեք թե մարմինը վրդովեց է, և ինքներդ էլ դաք թագավորի մոտ։

ՀԱՄ.—Մարմինը թագավորի մոտ է, բայց թագավորը մարմնի մոտ չե. թագավորը մի բան է վոր...

ԳԻԼԴ.—Մի բանն, տեր իմ։

ՀԱՄ.—Վոչ մի բան. տարեք ինձ նրա մոտ։ Թագավոր, աղվես, և ամենքը վինատեն։

Դուրս են գնում

ՏԵՍԱՐԱՆ ՑԵՐՐՈՐԴ

Մի ուրիշ սենյակ դղյակում

Գալիս է Թագավորը՝ պալատականների հետ

ԹԱԳ.—Մարդ եմ ուղարկել, վոր նըրան վինատեն, մարմինն էլ գտնեն.
Ինչ մեծ վտանգ է, վոր այսպես այդ մարդն ազատ թափառի.

Բայց չենք եւ կարող շատ խիստ օրենքի
ենթարկել նրան.
Նա շատ սիրված է անձիտ ամբոխից,
Որը չի սիրում իր պատողութեամբ, այլ իր
աչքերով.
Ցեվ յերբ այդպես է՝ նա հանցավորի պատիժն է
տեսնում,
Բայց վոչ հանցանքը: Վորպեսզի գործը հարթ
ու հեշտ գընա,
Պետք է վոր նրա այս հանկարծակի դուրս
առաքումը

Ջախած ու կշռած վորոշում թվիլ

Ծայրահեղ ախտերն կամ բժշկվում են
Ծայրահեղ ճարով,
կամ, ամենևին:

Գալիս է Ռոզենկրանց

Ի՞նչ լուր, ինչ ցեղակ:

ՌՈԶ.—Տեր իմ, թե պետական ուր է թաղցըրել,
Ջենք կարողանում նրան ասել տալ:

ԹԱԳ.—Իսկ ինքը ձեր է:

ՌՈԶ.—Դուրսը, տեր արքա. հակողութեան տակ,
մինչև հրամայեք:

ԹԱԳ.—Բերեք մեր առաջ:

ՌՈԶ.—Եհե՛յ, Գիլդենշտեռն. նեղրս բեր իշխանին:

Գալիս են Համլետ և Գիլդենշտեռն

ԹԱԳ.—Դե ահա, Համլետ, Պոլոնիուսն ձեր է:

ՀԱՄ.—Ընթրիքի:

ԹԱԳ.—Ընթրիքի՞, վոչտեղ:

ՀԱՄ.—Վոչ թե ուր ուտում է, այլ, ուր ուտվում է.

քաղաքացիս վորդերի մի համազումար հենց այս րոպեիս նրանով և զբաղված։ Ձեր մխակ կայսրը, կերակրի տեսակետից, ձեր վորդն և. բոլոր մյուս արարածներին պարարտացնում ենք, վոր նրանք էլ մեզ պարարտացնեն. իսկ մենք մեզ գիրցնում ենք ճճիների համար։ Պարարտ թագավորը և նիհար մուրացկանը տեսակ տեսակ կերակուրներ են. յերկու կերակուր, բայց մեկ սեղանի համար. այս և վերջը։

ԹԱԳ.—Ավաղ, ավաղ։

ՀԱՄ.—Մարդ կարող և ձուկ վորսալ հենց այն ճճիով, վոր մի թագավոր վորսի միտն և կերել, և ուտել հենց այն ձուկը, վոր նույն ճճիով և կերակրվել

ԹԱԳ.—Ի՞նչ ես ուզում ասել դրանով։

ՀԱՄ.—Ոչինչ, միայն ցույց տալ ձեզ, թե մի թագավոր ինչպես կարող և ճամբորդել մուրացկանի աղիքների միջից։

ԹԱԳ.—Պոլոնիուսն ասը ես։

ՀԱՄ.—Յերկնքում. մարդ ուղարկեցեք տեսնե. եթե ձեր մարդը նրան այնտեղ չգտնե՝ ապա ինքներդ մյուս տեղում փնտռեցեք։ Բայց, հավատացեք, եթե մինչև մեկ ամիս նրան չըգտնեք՝ հոտը կառնեք աստիճաններից դեպի գավիթը բարձրանալիս։

ԹԱԳ.—(Ծառաներից) Գնացեք տեսեք թե այնտեղ ես։

Ծառաները դնում են

ՀԱՄ.—կրտսեր այնտեղ, մինչև վոր գընաք։

ԹԱԳ.—Համլետ, այս գործըդ,

Հենց քո սեփական ապահովության
Նկատումներով,

Վորին նույնչափ շատ արժեք ենք տալիս,
Վորչափ սրտապին ցավում ենք քո այս
արածիդ վրա,
Պետք է քեզ խնդուն հրատապ հապճեպով
Ճամբեն այստեղից.
Ուստի պատրաստվիր. նավը պատրաստ է, և
հողմը հաջող,
Յեվ ընկերներըդ քեզ են սպասում:
Ամեն բան արդեն կարգադրված է դեպի
Անգլիա:

ՀԱՄ.—Դեպի Անգլիա:
ԹԱԳ.—Այո, Համլետ:
ՀԱՄ.—Լավ:
ԹԱԳ.—Իսկապես լավ է, յեթե պիտենաս ձեր
դիտումները:
ՀԱՄ.—Ձես տեսնում եմ մի քերովբե, վոր տեսնում
է ձեր դիտումները:
— Բայց, յեկ, գնանք Անգլիա:—Մնաք բարով,
սիրելի մայր:
ԹԱԳ.—Ձես քո սիրող հայրդ եմ, Համլետ:
ՀԱՄ.—Մայրս եք. հայր ու մայր, այր ու կին են.
այր ու կին մեկ մարմին են. ուրեմն, մայրս
եք:—Յեկեք, Անգլիա գնանք:
Դուրս է գնում

ԹԱԳ.—(ՈՒՈՋ. յեվ ԳԻԼԴ.—ին) Հետապնդեցեք նրան
քայլ առ քայլ

Յեվ նըրան փուքիով տարնք դեպի նավ. մի
ուշացընենք.
Ուզում եմ վոր նա այս գիշեր յեվեթ հեռացած
լինի.
Մեկնեցեք շուտով։ Ինչ վոր այս գործին
վերաբերյալ ե,
կնքված, պատրաստ եւ Ինդրեմ, փուքացեք։
Ռոզենկրանց Յեվ Գիլդենշտերն դուրս են գնում
Անգլիա, յեթե բարեկամությունս աչքիդ
հարգ ունի,
— Ինչպես վոր իմ մեծ կարողությունը
ի վիճակի յե քեզ զգալ տալու,
Քանի տակավին վերքըդ չի գոցվել
Դանիական սըրից,
Յեվ ամառիկ վախըդ հպատակության տուրք ե
ինձ տալիս—
վեհապետական հրամանըս անտես չես կարող
անել,
վորը, ուղղակի, այդ մաքով գրված իմ
նամակի մեջ
Համլետի մահն ե քեզնից պահանջում։
Արա, Անգլիա. դա ջերմի նըման արյունս ե
այրում.
Դու չես բժիշկը. մինչև լուր չառնեմ քեզ
կատարված ե,
Ինչ ել գլխիս գա՝ ինձ հանգիստ չկա։

Գնում ե

ՏԵՍԱՐԱՆ ՋՈՐՐՈՐԴ

Մի դաշտավայր Դանեմարքայում

Գալիս են Ֆորտինբրաս, մի զնդապետ և զինվորներ

ՖՈՐՏ.—Գընա, գնդապետ, և տար վոզջույնըս
Դանիո արքային,
Յեվ ասա նըրան, թե ինչպես նա ինքն
արտոնել է այդ,
Հրաման ենք խնդրում վոր մեր զորքն անցնի
իր յերկրի միջով։
Ժամադրավայրը գիտես վորտեղ է.
Յեվ յերեք Նորին Վեհափառության ասելիք
ունի՝
Պատրաստ ենք անձամբ մեր հարցանքները
մատուցանելու։
Այս բանն էլ հայտնիր։
ԳՆԴ.—Շատ բարի, տեր իմ։
ՖՈՐՏ.—Հանդարտ քայլեցեք։
Ֆորտինբրաս դուրս է գնում զորքի հետ։
Գալիս են Համլետ, Ռոզենկրանց և Գիլդենջաներն
ՀԱՄ.—Հարգելի պարոն, վորի՞ զորքն է այս։
ԳՆԴ.—Նորվեգի, տեր իմ։
ՀԱՄ.—Յեվ ո՞ւր են գընում, ասացեք, խնդրեմ։
ԳՆԴ.—Դեպի Լեհաստանի մի վորոշ մասը։
ՀԱՄ.—Յեվ ո՞վ է նըրանց հրամանատարը։
ԳՆԴ.—Ծերուկ Նորվեգի- յեղբորվորդին է, իշխան
Ֆորտինբրաս։
ՀԱՄ.—Բուն Լեհաստանի վըրա չե՞ վճռը, թե մի
սահմանի։
ԳՆԴ.—Անկեղծ խոսելով, պարոն, և առանց
չափազանցության,
Գընում ենք շահել հողի մի շերտիկ,

Վոր ինքն ըստ ինքյան վոչ մի շահ չունի
բացի անունից.
Հինգ, հինգ դուկատի չեյի վարձի այն.
Վոչ էլ կարող ե դա Նորվեգիային կամ
Լեհաստանին
Ավելի շահ տալ, իրրև կալված էլ յեթե
վաճառվի.

ՀԱՄ.—Յեթե այդպես ե՝ լեհացիները չեն էլ
պաշտպանի.

ԳՆԴ.—Ի՞նչպես չե. արդեն զորք են ուղարկել։

ՀԱՄ.—Յերկու հազար մարդ, քսան հազար դուկատ
Ջեն կարող լուծել այդ շյուղի հարցը.
Մի ուռեցք ե դա շատ հարստության և
խաղաղության,
Վոր ներսից պայթում, բայց դրսից բընաւ
ցույց էլ չի տալիս,
Թե արդյոք մարդը ինչ բանից ձեռնալ։
Շնորհակալ եմ, հարգելի տեր իմ։

ԳՆԴ.—Ատելած ձեզ հետ։

Գնում ե

ՌՈԶ.—Ձի՞ք բարեհաճում մեզ հետ գալ, տեր իմ։

ՀԱՄ.—Իսկույն գալիս եմ. դուք առաջ անցեք։

Ամենքը գնում են բացի Համլետից

Ինչպես ամեն դեպք մեզադրական և կարդում
իմ գլխիս,
Յեվ խըթանում և իմ հույլ վըրեժը։ Ինչ բան
և մարդը.
Յեթե իր կյանքի գլխավոր շահը և փոխարժեքը
Միմիայն ուտել և քընել լինի։

Անսասուն միայն, վոչինչ ավելի,
Անտարակուսա, Նա, վոր մեզ ստեղծեց այս
լայն հանճարով,
Դեպի հետ նայող և դեպի առաջ,
Ըպարգեվից մեզ այնպիսի մի մեծ
ընդունակություն
Յեվ աստվածանման բանականություն,
վոր ներքանք անպետք բորբոսանեն մեր մեջ։
Արդ, անասնական մոռացում լինի,
Թե մի թուլասիրտ խղճամտություն՝
Յեղածի վերա շատ ճշգրիտորեն խորհրդածելու,
Խորհրդածություն, վոր չորս մաս արած,
Մի մասը միայն խոհեմություն և,
Իսկ մյուս յերեքը անարիություն... չըգիտեմ
ինչու
Պետք և միշտ ապրեմ կրկնելու համար «Այս
կա անելու»,
Յերբ ունիմ պատճառ, կամք, ուժ և միջոց
անելու համար.
Յեվ որինակներ, յերկրագնդի չափ, հորդորում
են ինձ.
Վկա այս պորքը, այսքան բազմաթիվ, այսքան
բազմածախս,
Վորի վարիչն և մի ճատաղահաս և քնքուշ
իշխան,
Վոր աստվածային փառասիրությամբ վոգին
խանդավառ՝
Բերան և ծլռում անտնանելի գալիքի վերա,

Յեննթադրվելով այն, ինչ մահկանացու և
անհաստատ է,
Բախտի, վտանգի և մահացության.
Յեվ այդ, մի ձվի կճեպի համար իրավ մեծ
լինել՝
Նշանակում է վատքի չըկանգնել առանց մեծ
պատի,
Բայց և տիրապար կռվի մեջ մտնել մի շյուղի
համար՝
Յերբ վոր խնդիրը պատվի վըրա չի՝ Հապա չեն
իմչպես,
վոր մի հայր ունիմ պատով սպանված, մի
մայր՝ արատված,
Գրգիռներ արյանս ու դատողության,
Յեվ թուլ եմ տալիս ամեն բան քընի, այն
ինչ, ամոթ ինձ,
Տեսնում եմ այստեղ քանի հազարի մուտալուտ
մահը,
Վորոնք համբավի մի չերապանքի, ստվերի
համար՝
Բայլում են գընում դեպի գերեզման, ինչպես
անկողին.
Կռվում են հողի մի շեթաի համար,
Ուր բանակները տեղ անգամ չունեն հարցը
վճռելու,
Վոր բավական մեծ հանգստարան չի կամ
ամփոփարան՝

Սպանվածներին ծածկելու համար։ Ո՜հ, այս
րոպեյից
Թող խորհուրդները սրյունուրուշտ լինեն, կամ
վոչինչ չարժեն։

Գնում են

ՏԵՍԱՐԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Ելևինոր· մի սենյակ դղյակում։
Գալիս են Թագուհին, Հորացիոն և մի աղնվական

ԹԱԳՀ.—Չեմ ուզում խոսել այս աղջկա հետ։
ԱԶՆՎ.—Զանգրացուցիչ է, իսկապես ցնդած.
Նըրա վիճակը շատ գթաշարժ է։
ԹԱԳՀ.—Բայց լինչ է ուզում։
ԱԶՆՎ.—Իր հոր մասին է խոսում. ասում է, «լսել եմ
Ծարպախ բաներ կան այս աշխարհի մեջ»,
Բացականչում է, իր կուրծքն է կոծում,
Մի խոտի շյուղից մաղձոտանում է.
Տարտամ բաներ է ասում, կիսով չափ իմաստ
ունեցող·
Նըրա խոսքերը թեև վոչինչ են, բայց անկապ
ձևը
Ունկնդիրներին վորձել է տալիս վոր մի միտք
հաներն.
Մարդիկ բաներ են յերեվակայում,
Յեվ կարկատելով նըրա խոսքերը՝
Հարմարեցնում են իրենց սեփական
մտածածներին·
Յեվ դրանք կցված իր նայվածքների,
շարժուձեվի հետ՝

Կարծել են տալիս, որ մի իմաստ կա գուցե
նրանց մեջ,
Թեև ոչ հաստատ, բայց գժբախտ մի բան։
ՀՈՐ.—Ավելի լավ է որ խոսեք իր հետ,
Նա վտանգավոր յինթադրություններ կարող է
ցանել
Զարուրթյուն ծլնող ուղեղների մեջ։
ԹԱԳՀ.—Ասացեք ներա գա։

Ազնվականը դուրս է գնում

(Առանձին) Ցավագար հոգուս,—և միշտ
այդպես է մեղքի ընությը—
Ամեն չնչին բան նախորդն է թվում մի մեծ
աղետի։
Մեղքն այնպես լի է անճարակ վախով,
Որ աշխարվում է իր աշխարվելու ահից ու
դողից։

Գալիս է ազնվականը՝ Ոֆելիայի հետ

ՈՖ.—Ուր է Դանեայի չքնաղ թագուհին։
ԹԱԳՀ.—Ի՞նչ կա, Ոֆելիա։
ՈՖ.—(Յերգելով) «Ի՞նչպես ճանչեմ յես ֆոյարին
Այլոճաց ջահիլներից,
—Իր գլխարկի խեցիներից,
Փայտից, սանդալներից»։
ԹԱԳՀ.—Սիրելի որիորդ, ինչու համար ես այդ
յերգը յերգում։
ՈՖ.—Ի՞նչ ասացիք, չե՞ լսեցիք խնդրեմ։

Յերգում է.

«Մեռավ գնաց, մեռավ գնաց,
Յեվ հող մրտավ, տիկին.

Խոս է բուսել գլխի վրա,
Ցեվ մի բար կա վոտին»։

Ո՜հ, ո՜հ...

ԱԳՀ.—Ոֆելիա։

ՈՖ.—Լսեցեք խնդրեմ։

Յերգում է

Պատաճ ուճեր ձյուճի ցրմաճ...

Գալիս է Թագավորը

ԹԱԳ.—Նայեցեք, տեր իմ։

ՈՖ.— «Պճնած ծաղիկներով,
Վարոճի ցողված շիրիմ մտաճ
Սիրո արցունքներով»։

ԹԱԳ.—Ի՞նչպես ես, սիրուն որիորդ։

ՈՖ.—Լավ, փառք աստծու։ Ատում են բուն մի հաց-թուխի աղջիկ եր։ Տեր իմ Ատալած, մեզ հայտնի չե թե ինչ ենք, բայց հայտնի չե թե ինչ ենք լինելու։ Ատալած ձեր սեղանը շեն պահե։

ԹԱԳ.—Իր հորն է յերեվակայում։

ՈՖ.—Խնդրեմ, այդ մասին չըխոսեք։ բայց յերբ ձեզնից հարցնեն,

Թե ինչ միտք ունի, այսպես ասացեք։

Յերգում է.

Եգուց տոճ է, սուրբ Վալենտին,
Կանուխ առավոտից,
Պատուհանիդ առաջ կանգնած՝
Ցես եմ ես Վալենտին։
Տղան յելավ, զգեստ հագավ,
Ցեվ տաճ դուռ բացավ,

Ցեվ աղջըկաց իր մոս տարավ,
Վոր ել աղջիկ չելավ։

ԹԱԳ.—Սիրուն Ոֆելիա։

ՈՑ.—Հա, ճիշտ վոր... առանց յերդումի, քոդ վերջացնեմ։

Ցերգում ե.

Հիասւս Քրիստոս, սուրբ խաչ վկա,
Դա ի՞նչ ամոթ բաց ե։
— Ամեն տղա, ձեռ֊ից վոր գա,
Ինքն ել նույնպես կանե.
Աղջիկն ասաց. «դու խոսք տվիր,
Վոր ինձ հեզ կին կառնես։

Տղան ասաց.

Ցեթե ինձ հետ չըպառկեյիր
Ամուսս կառնեյի հեզ։

ԹԱԳ.—Վերչաւի ժամանակ ե վոր սա այսպես ե։

